Հրանտ Մելիք-Շահնազարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Երևան
2018

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Մ 502

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Գիտական խմբագիր՝
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն

Մելիք-Շահնազարյան Հրանտ

Մ 502 ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ/ Հ.Մելիք-Շահնազարյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2018. - 154 էջ:

Գիրքը նվիրված է հայկական երկու պետությունների (ՀՀ և ԼՂՀ) և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական թեզերի, դրանց ծագման և տարածման մեթոդների բացահայտմանը, ուսումնասիրմանն ու հակազդեցության հնարավոր միջոցների վերհանմանը: Մանրամասն հետազոտված են հակահայկական քարոզչության առանձնահատկությունները, դրանց թույլ և ուժեղ կողմերը: Գրքում ներկայացված է նաև գիտական և կազմակերպչական այն ռեսուրսը, որը հնարավորություն է ստեղծում աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար հակազդել իր դեմ ուղղված քարոզչությանն ու ապահովել սեփական տեղեկատվական անվտանգությունը:

Նախատեսված է պետական ծառայողների, քաղաքագետների, լրագրողների, սփյուռքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2018
© «Նորավանք» ԳԿՀ, 2018

ISBN 978-9939-825-40-3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 9
1.1. Քարոզչություն և տեղեկատվություն 9
1.2. Հայկական երկու պետությունները և սփյուռքը՝ քարոզչության օբյեկտ 13
1.3. Հայկական գործոնի դեմ հանդես եկող երկրները և ուժային կենտրոնները 20
1.4. Հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական գործունեության նպատակները 28
1.5. Ամփոփում 33

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԹԵԶԵՐԸ 36
2.*1. Պատմություն, քաղաքականություն, հոգեբանություն և այլն* 36
2.2. Հայաստանի և Արցախի հանրապետություններին ներկայացված տարածքային պահանջներ 40
2.3. Հայերը տարածաշրջանում եկվոր ժողովուրդ են 55
2.4. Ցեղասպանություն, ջարդեր և կոտորածներ 65
2.5. Հայերը խոչընդոտում են տարածաշրջանի խաղաղ զարգացմանը 82
2.6. Հայաստանը հաղթել է պատերազմում, բայց տանուլ է տալիս հակամարտությունը 93
2.7. Քարոզչական այլ թեզեր 102
2.8. Ամփոփում 117

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 119
3.1. Կազմակերպչական խնդիրներ 119
3.2. Հակահայկական քարոզչության գործիքները 126
3.3. Հակազդման միջոցներ 131
3.4. Ամփոփում 137

ԱՄՓՈՓՈՒՄ 138

РЕЗЮМЕ 144

SUMMARY 149

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2013թ. մայիսի 16-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանը միջազգային կապիտալի շուկայում արտարժութային պարտատոմսեր կթողարկի: Ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանն այդ առիթով նշել էր, որ կարևոր է, որպեսզի Հայաստանը հայտնվի միջազգային շուկաներում և ունակ լինի ինքնուրույն միջոցներ ներգրավել հենց միջազգային շուկաներից: Այն ժամանակ $700 մլն պարտատոմսերը թողարկվել են 7 տարի մարման ժամկետով, տարեկան 6.25%-ով, որով կառավարությունը ժամկետից շուտ մարեց Ռուսաստանից վերցված $500 մլն վարկը:

Ֆինանսական այս օպերացիան 2013թ. բացահայտեց Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական/քարոզչական գործունեության կարևոր տարրերից մեկը: Եթե մինչ այդ Բաքվի տեղեկատվական քաղաքականության հիմնական թիրախը Հայաստանի և Ադրբեջանի բնակչությունն էր, ապա այդ օրերին ադրբեջանական կողմը սկսեց աշխատել նաև միջազգային հանրության, հատկապես ֆինանսական աշխարհում ազդեցիկ դերակատարում ունեցող ընկերությունների և համակարգերի ուղղությամբ: Առաջին անգամ ֆինանսական նորությունների *Bloomberg* գործակալությունը սկսեց

լուրեր հրապարակել Ադրբեջանի հետ հայկական պետությունների սահմանին տեղի ունեցող իրադարձությունների մասին: Ադրբեջանի նպատակը պարզ էր՝ խոչընդոտել հայկական պարտատոմսերի հաջող տեղաբաշխմանը, իջեցնել Հայաստանի վարկանիշը միջազգային ֆինանսական շուկաներում, որն այն ժամանակ թե՛ *Moody's* և թե՛ *Fitch* վարկանիշային գործակալությունների կողմից գնահատվում էր որպես կայուն (*Ba2* և *BB* համապատասխանաբար):

Ներկայացված այս օրինակն ընդամենը մեկն է այն հարյուրավոր տեղեկատվական/քարոզչական գործողություններից, որոնք ամեն տարի իրականացվում են հայկական պետությունների և ընդհանրապես հայ ժողովրդի դեմ: Հակահայկական այս գործունեությունը հիմնականում համակարգվում է Ադրբեջանի և Թուրքիայի պետական կառույցների կողմից: Զգտելով կոծկել հայ ժողովրդի դեմ պատմական տարբեր ժամանակահատվածներում իրականացված հանցագործությունները, ինչպես նաև չեզոքացնել սփյուռքի տարատեսակ կառույցների՝ պատմական արդարությունը վերականգնելուն ուղղված գործունեության բացասական ազդեցությունը՝ պաշտոնական Անկարան և Բաքուն ակտիվ տեղեկատվական/քարոզչական արշավներ են ծավալել ոչ միայն լրատվամիջոցներում, այլև փորձագիտական-վերլուծական շրջանակներում, տարբեր երկրների խորհրդարաններում ու պետական կառույցներում, միջազգային կազմակերպություններում:

Ընդ որում, հայկական երկու պետությունների և հայ ժողովրդի միջազգային հեղինակությանը վնասելու և մեր

հանրության տրամադրությունների վրա ազդելու, մեզ որոշակի վարքագիծ պարտադրելու նպատակով Թուրքիայի և Ադրբեջանի իշխանություններն օգտագործում են տեղեկատվական պատերազմների ժամանակակից ողջ գործիքակազմը՝ սկսած հայալեզու լրատվամիջոցներ ու լրատվական հոսքեր ստեղծելուց, ավարտած արտասահմանյան տարբեր քաղաքական գործիչներին կաշառելու և հայկական տեղեկատվական ցանցերի վրա զուտ տեխնիկական գրոհներ կազմակերպելու պրակտիկայով:

Խնդիրն էլ ավելի բազմաբովանդակ է դառնում, եթե հաշվի առնենք, որ Հայաստանն ու հայ ժողովրդին իրենց թիրախում ունեն ոչ միայն Թուրքիան և Ադրբեջանը, այլև մեր տարածաշրջանում քաղաքական ու տնտեսական շահ հետապնդող բազում այլ երկրներ, միջազգային կազմակերպություններ, կրոնական ուղղվածության կառույցներ և այլն: Սրանցից յուրաքանչյուրը որոշակի խնդիրներ լուծելու նպատակով տեղեկատվական/քարոզչական բնույթի գործունեություն է իրականացնում՝ դրանով իսկ համալրելով հայության դեմ ուղղված նմանատիպ մարտահրավերների առանց այն էլ տարողունակ զամբյուղը:

Սույն հետազոտության նպատակը հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական թեզերի բացահայտումը, դրանց թույլ և վտանգավոր կողմերը հասկանալն ու հակազդման մեթոդների մշակումն է: Խնդրի լուծման համար ուսումնասիրվել են հակահայկական տեղեկատվական հոսքերի ծագումը, դրանց բնույթը, հիմնական նպատակ-

ները, տարածման ձևերն ու ճանապարհները և այդ հոսքերին դիմակայելու առկա և պոտենցիալ հնարավորությունները:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գիրքը չի հավակնում ամբողջապես վերհանել և ներկայացնել ուսումնասիրվող թեման: Նախ, որովհետև հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական գործունեությունն ամեն պահ համալրվում է նոր մոտեցումներով ու գործիքներով, և ապա՝ որովհետև խնդիրն այնքան ծավալուն ու բազմաբովանդակ է, որ պահանջում է տարբեր ուղղվածության մասնագետների ներգրավում: Այս առումով կարելի է ուրախությամբ նշել, որ մեր երկրի տեղեկատվական անվտանգության հարցը վաղուց արդեն դրված է գիտական հիմքի վրա: Ընդ որում, «Նորավանք» հիմնադրամը դարձել է այս գործի առաջամարտիկներից մեկը՝ հայ հանրությանն ու պետականությանը նվիրելով թեմային առնչվող բազում հետազոտություններ:

Սույն ուսումնասիրությունը քաղաքագիտական հայացք է վերոնշյալ խնդիրներին: Ձեռնամուխ լինելով այս աշխատանքին՝ առաջին հերթին փորձել եմ վերհանել հայության դեմ ուղղված տեղեկատվական և քարոզչական գործունեության քաղաքական կողմը: Ցավոք, հենց քաղաքագիտական համարժեք գնահատականների պակասն է, որ հաճախ դառնում է մեր դեմ ուղղված նման գործունեության հնարավոր վտանգները մինչև վերջ չգիտակցելու, դրանց լիարժեք չարձագանքելու, անգամ անտեսելու պատճառ: Դրանով պայմանավորված՝ կարծում եմ, որ սույն աշխատանքը

կնպաստի թե՛ հետազոտողների և թե՛ պետական կառույցների՝ հակահայկական քարոզչական թեզերը չեզոքացնելուն և մեր տեղեկատվական անվտանգության ապահովման արդյունավետության բարձրացմանն ուղղված գործունեության խթանմանը։

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Քարոզչություն և տեղեկատվություն

Ցանկացած գործունեություն ունի իր շարժառիթներն ու նպատակները: Սեփական տեղեկատվական համակարգերի անվտանգությունն ապահովելու և հակառակորդների վրա ներազդելու նպատակով ժամանակակից պետությունները չափազանց շատ ռեսուրսներ և ժամանակ են ծախսում: Այդ գործի կարևորությունն ու հատկապես արդյունքները միշտ չէ, որ համարժեք են ընկալվում հասարակությունների կողմից: Այդուհանդերձ, աշխարհի բոլոր երկրները շարունակում են իրենց գործունեությունը տեղեկատվական/քարոզչական ոլորտում՝ հաճախ դրա մակարդակը բարձրացնելով տեղեկատվական պատերազմի աստիճանի:

Խնդիրները, որ լուծվում են նման գործունեության արդյունքում, բազում են: Դրանք վերաբերում են պետությունների զարգացման բոլոր ոլորտներին՝ տնտեսությանը, անվտանգությանը, ներքին և արտաքին քաղաքականությանը և այլն: Ավելին՝ ժամանակակից հասարակությունների զարգացման համատեքստում տեղեկատվական գործոնն օժանդակ լրացուցիչ հանգամանքից վերաճել է վճռական

նշանակություն ունեցող երևույթի, առանց որի պարզապես դժվար է պատկերացնել առաջընթացն ընդհանրապես։

Դրա համար կարևոր է հասկանալ, թե ինչը կարող է հայտնվել հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական գործունեության թիրախում և հատկապես որ ոլորտներն են խնդրահարույց ու առավել խոցելի։

Ընդ որում, հարկ է տարանջատել տեղեկատվական և քարոզչական գործողությունների նպատակներն ու մարտավարությունը։ Որովհետև, որքան էլ այս երկու հասկացությունները փոխկապակցված, իսկ հաճախ անգամ նույնական լինեն հանրության ընկալումներում, այնուամենայնիվ, հասկանալի է, որ քարոզչության խնդիրներն այլ են, տեղեկատվական գործունեությանը՝ այլ։

Պրոպագանդա եզրույթն ի հայտ է եկել Հռոմի կաթոլիկ եկեղեցու՝ հավատքի տարածման գրասենյակում (*de propaganda fidei*) և ի սկզբանե վերաբերել է եկեղեցու միսիոներական առաքելությանը։ Քաղաքագիտական, փիլիսոփայական և այլ բառարաններում նշված է, որ խոսքն ունի լատինական ծագում, նշանակում է՝ «տարածման ենթակա»[1]։ Հանրահայտ է նաև, որ այս եզրույթը բնութագրում է այն գործընթացը, որն իրագործվում է քաղաքական, կրոնական, գիտական, գեղարվեստական և այլ մտքերի ու գաղափարների հանրայնացման և մարդկանց շրջանում տարածելու համար։

[1] Философский энциклопедический словарь, М., Советская энциклопедия. Гл. редакция: Л.Ф. Ильичёв, П.Н. Федосеев, С.М. Ковалёв, В.Г. Панов, 1983.

Քարոզչությունն իրականացվում է բանավոր խոսքի, զանգվածային լրատվամիջոցների, հանրային գիտակցության վրա ազդելու վիզուալ և այլ միջոցներով: Զուտ տեխնոլոգիական առումով, քարոզչությունը որոշակի գաղափարների կամ գաղափարների ամբողջության փոխանցումն է լսարանին՝ հաշվարկով, որ վերջինս կյուրացնի այն: Քարոզչության «առանձնահատկությունն այն է, որ լսարանը, այսինքն՝ ներազդման օբյեկտը, որոշվում է հենց պրոպագանդիստի (քարոզչի- Հ.Մ.-Շ.) կողմից: Ընդ որում, նա պետք է ոչ միայն ընկալման համար հարմար տեսքով մատուցի այս կամ այն գաղափարը, այլև նպաստի դրա կյանքի կոչմանը: Ցանկացած քարոզչություն ունի հստակ նպատակ և հաշվարկված է գործնական գործունեություն նախաձեռնելուն»[2]:

Ժամանակակից աշխարհում քարոզչությունը բացասաբար է ընկալվում հանրության կողմից, քանի որ այն առավելապես դիտարկվում է որպես մարդուն կամ հասարակությանն ուղղորդելու, մանիպուլյացիայի ենթարկելու միջոց: Ուստի, քարոզչական գործունեություն իրականացնող անձինք կամ կենտրոնները, առավել շոշափելի արդյունքներ ստանալու ակնկալիքով, հաճախ դիմում են քարոզչության տարբեր մեթոդների օգնությանը:

Քարոզչության մեթոդների թիվը բավական մեծ է: Տարբեր հետազոտողներ հաշվարկել են մի քանի տասնյակից մինչև հարյուրների հասնող հնարավոր մեթոդներ: Դրանց մի

[2] Философия: Энциклопедический словарь, М., Гардарики, под редакцией А.А. Ивина, 2004.

մասն ազրեսիվ է, մի մասն էլ այնպես է քողարկված, որ տևական ժամանակ է անհրաժեշտ քարոզվող բուն նյութը բացահայտելու համար։ Ուստի, այստեղ կանգ չենք առնի քարոզչության մեթոդների նկարագրության բարդ և ծավալուն գործի վրա՝ խոստանալով հետազոտվող նյութի շարադրման ընթացքում անպայման անդրադառնալ, թե քարոզչական կոնկրետ ինչ մեթոդներ են կիրառվում հայկական պետությունների և սփյուռքի դեմ մեր հակառակորդների, իսկ հաճախ նաև գործընկերների ու անգամ դաշնակիցների կողմից։

Վերադառնալով քարոզչության ու տեղեկատվական գործունեության հետապնդած միջոցների և նպատակների տարբերությանը՝ նշենք, որ դասական իմաստով տեղեկատվությունը (լատ. *informatio* - պարզաբանում, շարադրանք) ընդամենը որոշակի տվյալների, տեղեկությունների փոխանցումն է մեկ մարդու, մարդկանց խմբի կամ կազմակերպության կողմից մեկ այլ մարդու, խմբի, հանրությանը և այլն։

Տեղեկատվության տեսության զարգացումն ու ժամանակակից տեխնոլոգիաները ծնունդ են տվել մի շարք նոր հասկացությունների, ինչպիսիք են, օրինակ, տեղեկատվական տարածքը, տեղեկատվական համակարգերը, տեղեկատվական անվտանգությունը, պատերազմը և այլն։ Բոլոր այս եզրույթները վաղուց կազմում են արդի պետությունների և հասարակությունների կենսագործունեության կարևոր մասը։ Ընդ որում, այն ուշադրությունը, որին արժանանում է տեղեկատվական գործոնը մեր աշխարհում, թույլ է տալիս վստահ պնդել, որ ոլորտը թռիչքաձև զարգացման և հայեցա-

կարգային վերափոխումների փուլում է: Տեղեկատվության կիրառական նշանակությունն այլևս հնարավոր չէ սահմանել բանաձևերով կամ հանրագիտարանային բնութագրումներով: Միակ բանը, որ հստակ կարելի է ասել տեղեկատվության և տեղեկատվական գործունեության մասին, այն է, որ դրա հորիզոններն անսահման են, հնարավորությունները՝ անսպառ: Ակնհայտ է, որ մարդկային քաղաքակրթությունը թևակոխում է հեղափոխական զարգացման նոր փուլ, որը կարելի է կոչել տեղեկատվական դարաշրջան:

Քարոզչությունն օգտագործում է տեղեկատվության հավաքման, պահպանման, մշակման և տարածման բոլոր գործիքները: Եվ որքան շատ են զարգանում տեղեկատվական տեխնոլոգիաները, այնքան բազմապիսի են դառնում նաև քարոզչության միջոցները: Դրանք մեկը մյուսով պայմանավորված հասկացություններ են, որոնցից առաջինը՝ տեղեկատվությունը, հասարակության կողմից օգտագործվում է ճիշտ և որակյալ որոշումներ կայացնելու, իսկ երկրորդը՝ քարոզչությունը, մարդկանց և հասարակությանը քարոզողի կողմից մշակված որոշումներ պարտադրելու համար:

1.2. Հայկական երկու պետությունները և սփյուռքը՝ քարոզչության օբյեկտ

Ասել, թե Հայաստանը, Արցախը և աշխարհասփյուռ հայությունը քարոզչության յուրահատուկ օբյեկտ են, իհարկե, չի կարելի: Բոլոր երկրները և պետությունները, անկախ այն հանգամանքից՝ մեծ են, թե փոքր, պատերազմում են այլոց

հետ, թե ոչ, միևնույն է՝ ունեն տեղեկատվական անվտանգության խնդիր։ Բացառություններ չկան, հետևաբար նաև հայկական պետություններն ու հայ ժողովուրդն էլ այս առումով բացառիկ չեն։ Այլ հարց է, որ մեր դեմ ուղղված քարոզչությունը, ինչպես նաև այդ քարոզչությանը դիմակայելու մեր մոտեցումներն ունեն իրենց նրբություններն ու առանձնահատկությունները, որոնք կարևոր է իմանալ։

«Նորավանք» հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգություն» գրքում ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքին, որ «Հայկական հանրությանը վերաբերող ՏԱ խնդիրներում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ իրողությունները.

- Հայաստանը ներկայացնում են երկու պետություններ՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը։
- Հայկական սփյուռքի մեծ մասը՝ սփռված լինելով տարբեր երկրներում, գտնվում է իր բնակության վայրի (օրինակ՝ Ռուսաստանի կամ Միացյալ Նահանգների) քաղաքական, մշակութային և տեղեկատվական ազդեցության տակ։
- Հայկական հանրությունը ներառում է տարադավան (Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներից բացի առկա են նաև կաթոլիկություն, ուղղափառություն և բողոքականություն դավանող հայկական համայնքներ) և տարակրոն (Արևմտյան Հայաստանում և Մերձավոր Արևելքի որոշ երկրներում բնակվում են իսլամացված

հայեր) հատվածներ։ Հայկական հանրության այս հատվածներին բնորոշ են հոգեկերտվածքային բնույթի առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել տեղեկատվական քաղաքականություն վարելիս։

- Պատմական Հայաստանի որոշ հատվածներում բնակվում են հայեր, որոնք ավանդաբար համարում են, որ ապրում են իրենց հայրենիքում (օրինակ՝ Ջավախքում, Արևմտյան Հայաստանի ու Մերձավոր Արևելքի որոշ շրջաններում), և այս գործոնը նույնպես պետք է ուշադրության արժանանա[3]։

Չափազանց կարևոր այս նկատառումները, սակայն, ամբողջությամբ չեն ներկայացնում տեղեկատվական անվտանգության այն առանձնահատկությունները, որոնք ունեն հայկական պետություններն ու ժողովուրդը։ Բացի այդ, նշված յուրաքանչյուր կետ կարելի է բաժանել բազում ենթակետերի՝ վեր հանելով նաև այն շերտերը, որոնք առաջին հայացքից կարող են այնքան էլ տեսանելի չլինել։ Օրինակ, տեղեկատվական անվտանգության ընդհանրական համակարգ ունենալու անհրաժեշտությունը բարդանում է ոչ այնքան այն պատճառով, որ գոյություն ունեն հայկական երկու պետություններ, այլ որովհետև դրանցից միայն մեկն ունի միջազգային ճանաչում։ Այս առումով Արցախը, ցավոք, զրկված է միջազգային բոլոր այն մեխանիզմներից օգտվելու հնարավո-

[3] Տեղեկատվական անվտանգություն, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2017, էջ 104-105։

րությունից, որոնք զգալիորեն թեթևացնում են պետությունների բեռը տեղեկատվական և քարոզչական դաշտում։

Մեկ այլ օրինակ. մենք խոսում ենք այն մասին, որ հայության մի ստվար շերտ ապրում է իր պատմական հայրենիքում, բայց ոչ սեփական պետության սահմաններում։ Սա ինքնին մեծ խնդիր է, որը բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի։ Դրա փոխարեն, ցավոք, հայ միտքը հաճախ ստիպված է լինում ներքաշվել բովանդակային առումով միանգամայն հակադիր քննարկումներում՝ ապացուցելու համար, որ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն ստեղծվել և գոյատևում են հայկական հողերի վրա։

Որքան էլ տարօրինակ հնչի, բայց պատմական ահա այսպիսի նշանակություն ունեցող խնդիրների մասին մշտապես խոսելու անհրաժեշտությունն օբյեկտիվ հիմքեր ունի։ Դա պայմանավորված է, օրինակ, այն հանգամանքով, որ Հայաստանի և հայ ժողովրդի դեմ բացահայտ թշնամական քաղաքականություն իրականացնող երկրներից մեկի ղեկավարը՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, մշտապես հայտարարում է, թե Երևանը պատմական ադրբեջանական քաղաք է։ Ինչպե՞ս կարող է հայ պատմագիտական կամ քաղաքագիտական միտքն անպատասխան թողնել նման հայտարարությունները։

Պատմական անցյալի հանդեպ մեր ժողովրդի յուրահատուկ վերաբերմունքը հաճախ է օգտագործվում հակառակորդների կողմից հայերի հանրույթում որոշակի տեղեկատվական թեզեր տարածելու և հակահայկական քարոզչություն իրականացնելու համար։ Վերջին տարիներին այդպիսի տա-

բածված թեմաներից մեկն այն բանավեճն էր, թե արդյոք կովկասցի են հայերը, թե ոչ: Քննարկման հիմնական մասնակիցները Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցներն ու համացանցի հայ ռուսալեզու օգտատերերն են: Նպատակ ունենալով հայերին դուրս բերել Ռուսաստանում բացասական երանգ ստացած *«лица кавказской национальности»* (կովկասյան ծագում ունեցող անձինք) բնորոշման տիրույթից՝ որոշ հեղինակներ փորձեցին ապացուցել, որ հայերը կովկասցի չեն, բնակվում են ոչ թե Կովկասում, այլ Հայկական լեռնաշխարհում: Այս թեզը շատ արագ կողմնակիցների ու հակառակորդների մեծ բանակ ձեռք բերեց: Եվ մինչ հայերը վիճում էին նշված հարցի շուրջ, Ադրբեջանում սկսեցին գրքեր հրապարակվել այն մասին, թե իբր հայ ժողովուրդը տարածաշրջանում բնիկ չէ և Կովկաս է տեղափոխվել Փոքր Ասիայից հիմնականում 19-րդ դարում[4]:

Հայկական հանրությանը վերաբերող ՏԱ խնդիրներում կարևոր է նաև այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը շարունակում են գտնվել պատերազմական դրության մեջ: Այս փաստն էլ ավելի մեծ կարևորություն է տալիս տեղեկատվական անվտանգության գործոնին, քանի որ պատերազմների ընթացքում վերջինս ավելի շատ է առնչվում մարդկային կյանքերին՝ դառնալով լուրջ սպառնալիքների պատճառ:

Տեղեկատվական և քարոզչական գործունեություն իրականացնող հայկական ներուժը ստիպված է աչքն անընդհատ

[4] Օրինակ, Рауф А. Гусейнзаде, «Кавказ и армяне», Баку, 2013.

Ադրբեջանի և Թուրքիայի վրա պահել։ Հարևան այդ երկու պետությունները հակահայկական քարոզչության գլխավոր օջախներն են։ Այնտեղ ստեղծված լրատվական գործակալությունները, վերլուծական կենտրոններն ու ընդհանրապես ողջ տեղեկատվական համակարգը հայկական գործոնը դիտարկում են որպես իրենց գործունեության հիմնական թիրախներից մեկը։ Պաշտոնական Բաքուն և Անկարան համագործակցում են միմյանց հետ, բավական մեծ ֆինանսական ռեսուրսներ ծախսում և փորձում հակահայկական ուղղվածություն ունեցող իրենց գործունեության մեջ ներքաշել նաև այլ երկրների համապատասխան ներուժը։ Որպես դրա հետևանք՝ հայկական երկու պետություններն ու սփյուռքը սկսում են թիրախավորվել ոչ միայն սպասելի կետերից, տվյալ դեպքում՝ Թուրքիայից և Ադրբեջանից, այլև բազում այնպիսի վայրերից, որտեղից սկզբունքորեն անիմաստ էր վտանգ կամ սպառնալիք ակնկալել։

Եվ դա հաջորդ կարևոր հանգամանքն է, որ պետք է նկատի ունենալ. հայկական պետությունների և սփյուռքի դեմ ընթացող տեղեկատվական և քարոզչական գործունեությունն աշխարհագրական սահմաններ չունի։ Թե՛ հարձակվող և թե՛ հակազդող կողմը կարող է գտնվել աշխարհի ցանկացած երկրում։ Նույն կերպ և պատճառված վնասը կարող է բարոյական լինել, տնտեսական, քաղաքական և անգամ մարդկային կյանքերի տեսքով։ Այսինքն՝ տեղեկատվական/քարոզչական մարտադաշտը հայերիս պարագայում ընդարձակ և բազմաբովանդակ է։

Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հայկական գործոնը՝ որպես այդպիսին, հետաքրքրում է ոչ միայն մեզ թշնամաբար տրամադրված պետություններին ու ժողովուրդներին, ապա պատկերն էլ ավելի ամբողջական կդառնա։ Իրողությունն այն է, որ հայկական պետություններին և սփյուռքին վերաբերող թեմաներն աշխարհաքաղաքական այս կամ այն խնդրին լուծում տալու ձգտումով հաճախ օգտագործվում են նաև տարբեր գերտերությունների կողմից։ Դա առավել տեսանելի է, օրինակ, արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում կամ Թուրքիայի տարածաշրջանային ակտիվությունն այլոց կողմից զսպելու քաղաքականության մեջ, բայց այդ իրողությունն առկա է նաև այլ, հաճախ՝ երկրորդական թվացող հարցերում։

Այս առումով վստահ կարելի է պնդել, որ հայկական երկու պետություններն ու սփյուռքը հանդիսանում են բազմակի նշանակություն և ծագում ունեցող քարոզչության օբյեկտներ։ Լինելով բազմաշերտ՝ հայկական հանրությունը միշտ չէ, որ կարողանում է համարժեք արձագանքել այդ քարոզչությանը և անգամ լիարժեք հասկանալ դրա բնույթը։ Բայց, դրա հետ միասին, պետք է փաստել նաև, որ տեղեկատվական դիմակայության տարիների կուտակած մեր փորձը, ինչպես նաև պետական մակարդակով հայության դեմ ուղղված քարոզչությանը հակազդելու արդեն մշակված մեխանիզմները, զգալիորեն հեշտացրել են տեղեկատվական անվտանգության ոլորտում գործելու հնարավորությունները։ Դրա արդյունքում հայկական կողմը հաճախ ինքն է հանդես

գալիս կանխարգելիչ ակտիվ գործողություններով, ժամանակ առ ժամանակ բացահայտում հակառակորդի կողմից դեռևս պլանավորման փուլում գտնվող քարոզարշավների նպատակն ու իրականացման ձևերը և մեթոդները՝ հնարավորություն ստանալով ժամանակին չեզոքացնել դրա հավանական վնասները: Սա մշտական ուշադրություն պահանջող աշխատանք է, որի արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են ճիշտ գնահատվում հայկական պետություններին և սփյուռքին սպառնացող քարոզչական վտանգի ծագումն ու էությունը:

1.3. Հայկական գործոնի դեմ հանդես եկող երկրները և ուժային կենտրոնները

Միանգամայն ակնհայտ է, որ հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ իրականացվող քարոզչական աշխատանքի հիմնական պատվիրատուները Թուրքիայի և Ադրբեջանի իշխանություններն են: Այս պնդումն առաջին հայացքից կարող է ոչ այնքան դիվանագիտական թվալ, բայց թեմայի անգամ մակերեսային ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ պաշտոնական Անկարան և Բաքուն այսպիսի մեղադրանքներից խուսափելու համար երբեք ոչ մի ջանք չեն գործադրել: Եվ երկրորդ, կարծում ենք, փաստերի պարզ և անկաշկանդ արձանագրումը միայն կօգնի թե՛ հետազոտության հեղինակիս և թե՛ ընթերցողներին ճիշտ դատողությունների վրա ճիշտ եզրահանգումների գալու հարցում:

Իսկ իրականությունն այն է, որ թուրքական հարևան

երկու պետությունների հակահայկական գործունեությունը, նախ, նոր չէ և ապա՝ չի սահմանափակվում միայն տեղեկատվական և քարոզչական հնարքների կիրառմամբ: Հայկական երկու պետությունների և ընդհանրապես՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդի հանդեպ նրանց քաղաքականությունը թշնամական է, և այդ փաստը բացահայտ խոստովանում են անգամ Թուրքիայի և Ադրբեջանի ղեկավարները[5]:

Սա հայտարարված պատերազմ է, որն Ադրբեջանի իշխանությունները, հայատյացության գաղափարներ ներառելով դպրոցական դասագրքերի և ուսումնական այլ ձեռնարկների մեջ, հետևողականորեն փոխանցում են հաջորդ սերունդներին: Նույնն անում է նաև Թուրքիան, որտեղ ջանասիրաբար կեղծվում է պատմագրությունը, ոչնչացվում է այդ պետության տարածքում գտնվող հայկական հոգևոր և մշակութային ժառանգությունը, հասարակությանը մատուցվում են այնպիսի գաղափարներ, որոնք թուրք հանրության շրջանում լիակատար խեղաթյուրված պատկերացումներ են ստեղծում թե՛ իրենց պատմական անցյալի և թե՛ հայ ժողովրդի վերաբերյալ:

Պաշտոնական Անկարայի և Բաքվի նման քաղաքականությունը բխում է թուրքական երկու պետությունների տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերից: Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասը Թուրքիայի կողմից դիտարկվում է որպես մի տարածաշրջան, որի ժողովրդագրա-

[5] Ильхам Алиев объявил всех армян мира "врагами" Азербайджана, ИА REGNUM, 01.03.2012, https://regnum.ru/news/1504750.html

կան ներկայիս պատկերը, ըստ էության, պանթուրանիզմի գաղափարախոսությունը կյանքի կոչելուն խոչընդոտող կարևոր հանգամանքներից մեկն է: Դարեր շարունակ Թուրքիան ամեն ինչ արել է տարածաշրջանում թուրքական գործոնը մեծացնելու և էլ ավելի ազդեցիկ դարձնելու համար: Այդ նպատակն են հետապնդել այստեղ բնակվող այլ ժողովուրդների, հատկապես հայերի մեթոդական ոչնչացումը, Ադրբեջանի Հանրապետության ստեղծումը, Վրաստանի հարավային շրջանները թուրքական ազդեցության տակ դնելը և այլն: Այսինքն՝ սա նպատակաուղղված քաղաքականություն է, որը երկար ժամանակ հետևողականորեն և անշեղորեն իրականացվում է Թուրքիայի կողմից:

Ընդ որում, հայերի հանդեպ թշնամանքը թուրքերի պարագայում շատ ավելի խորքային պատճառներ ունի, քան զուտ տարածաշրջանային քաղաքական շահն է: Իրերը պետք է իրենց անուններով կոչել և խոստովանել, որ հայ-թուրքական թշնամանքի հիմքը քաղաքակրթական է: Մենք տարբեր ենք: Միջէթնիկ հարաբերությունները ճիշտ հասկանալու համար սա կարևոր ելակետ է՝ վստահ էր հայրս: «Մենք հողից ենք, նրանք՝ հողի վրա: Մեր արժեքներն ու էթիկան տարբեր են: Մեր քաղաքակրթությունները փոխադարձ բացառող են միմյանց: Մեր միջև գոյություն ունի էթնիկ և քաղաքակրթական անհամադրելիության անդունդ: Դա օբյեկտիվ իրողություն է, առանց որը հաշվի առնելու հնարավոր չէ հասկանալ աշխարհում տեղի ունեցող շատ բաներ»[6]:

[6] О войне и победе, Л. Мелик-Шахназарян, Т.1, Ереван, 2015г., стр 49-50.

Խոսելով այս ամենի մասին՝ ուզում եմ շեշտել, որ նպատակը ոչ թե մեր (նստակյաց) և նրանց (քոչվոր) քաղաքակրթությունների լավ ու վատ կողմերը մատնանշելն է, այլ ասելը, որ քաղաքակրթական տարբերություններն էլ իրենց ազդեցությունն են ունենում թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից հայության դեմ իրականացվող քարոզչական գործունեության վրա։ Այս դեպքում ամեն ինչ դառնում է քարոզչական ագրեսիայի զոհ, սկսած, օրինակ, որևէ ուտեստի կամ երաժշտական գործիքի ծագումից ու ազգային պատկանելությունից, վերջացրած ավելի խորքային նշանակություն ունեցող երևույթներով։ Եվ դա խիստ կարևոր հանգամանք է, որը թե՛ որակական, թե՛ քանակական և թե՛ ձևի ու բովանդակության առումով յուրահատուկ իրավիճակում է դնում նման քարոզչությանը դիմադրող հայ հանրությանը։

Բայց եթե հակահայկական քարոզչություն իրականացնելու Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական պատճառը մեկն է՝ մեր դեմ թշնամանքը, ապա շարժառիթները, որպես կանոն, տարբեր են։ Այսպես, այսօրվա Ադրբեջանն առավելապես հանդես է գալիս ռևանշիստական տրամադրություններով՝ փորձելով մեզ, ինքն իր քաղաքացիներին և միջազգային հանրությանը համոզել հայկական քաղաքականության սխալ ու անհեռանկար լինելու մեջ։ Թուրքիան, իր հերթին, հայերի հետ կապված կարծես լուրջ բարդույթներ չունի, և հիմնական խնդիրը, որ փորձում է այս պահին լուծել, Հայոց ցեղասպանության համար պատմական պատասխանատվությունից

ազատվելն ու Հայկական հարցի՝ որպես քաղաքական գործոնի, փակումն է։

Այս երկու մոտեցումների տարբերությունը հաճախ համալրվում է հայատյաց որոշակի թեզերի միասնական շրջանառությամբ, ինչը փոխլրացնում է Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական քարոզչության ողջ համալիրը՝ դարձնելով այն հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված ազդեցիկ, հաճախ նաև՝ գործուն զենք։

Թուրքիայից և Ադրբեջանից բացի՝ հակահայկական քարոզչությամբ հաճախ հանդես են գալիս նաև այլ երկրներ։ Որպես կանոն, դա պայմանավորված է լինում քաղաքական իրողություններով, տնտեսական և այլ ոլորտներում մրցակցությամբ, որոշակի վտանգի զգացողությամբ կամ էլ պարզապես քաղաքական, մշակութային, սոցիալական և այլ գերակայություն ապահովելու ցանկությամբ։ Այդպիսի երկրներից է, օրինակ, մեր հարևան Վրաստանը։ Իհարկե, պաշտոնական հայտարարությունների մակարդակում հայ-վրացական հարաբերություններում, կարծես, ամեն ինչ լավ է, բայց հետազոտողների համար գաղտնիք չէ, որ այստեղ ևս գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք հարիր չեն երկու ժողովուրդների համակեցության դարավոր ավանդույթներին։

Խնդիրներն առավելապես քաղաքական են։ Վրացական կողմին մտահոգում է այն փաստը, որ Հայաստանն իրենց հիմնական հակառակորդի՝ Ռուսաստանի դաշնակիցն է։ Հայաստանը ՀԱՊԿ և Եվրասիական տնտեսական միության անդամ

է, մինչդեռ Վրաստանը ձգտում է դեպի ՆԱՏՕ և Եվրոպական միություն: Բացի այդ, դեպքերի բերումով, միջազգային իրավունքի մի շարք հարցերում Հայաստանն ու Վրաստանը հայտնվել են հակադիր բևեռներում: Խոսքը հատկապես վերաբերում է արցախյան, աբխազական և օսական հակամարտությունների կարգավորման հանդեպ պաշտոնական Երևանի և Թբիլիսիի մոտեցումներին: Ինչպես հայտնի է, այս հարցերում հայկական կողմը նախընտրում է հենվել ազգերի ազատ ինքնորոշման, իսկ վրացական կողմը՝ պետությունների տարածքային ամբողջականության դրույթներին:

Ցավոք, հայ-վրացական հարաբերություններում այլ խութեր ևս գոյություն ունեն, որոնց կանդրադառնանք հետազոտության հաջորդ գլուխներում: Այստեղ բավարարվենք սոսկ մատնանշելով այն փաստը, որ հակահայկական քարոզչությունը վրացական կողմից իրականացվում է հիմնականում լրատվական միջոցների, փորձագիտական կենտրոնների և գիտական ինստիտուտների մակարդակով: Ինչպես արդեն նշվեց, պաշտոնական Թբիլիսին հակահայկական քաղաքականություն չի իրականացնում և այս հարցի առնչությամբ միշտ զգուշավոր է իր գնահատականներում:

Հաջորդ երկիրը, որի գնահատականներում և տեղեկատվական/քարոզչական ենթակառուցվածքների գործունեության մեջ հաճախ նկատվում են հայության դեմ ուղղված տարրեր, Իսրայելն է: Այս դեպքում նույնպես հիմնական պատճառները քաղաքական են: Նախ՝ մրցակցությունը հայկական սփյուռքի հետ միջազգային ասպարեզում՝ լոբբիստա-

կան աշխատանք, ազդեցության գոտիների համար պայքար և այլն։ Եվ երկրորդ՝ Իսրայելի տարածաշրջանային շահերը։ Այստեղ, ինչպես հայտնի է, Թել Ավիվը պայքարում է Իրանի դեմ, որի հետ Հայաստանը լավ հարաբերություններ ունի և, ի հակակշիռ արաբական աշխարհի, փորձում է ուժեղացնել թուրքական գործոնը։ Այս վերջին հանգամանքը, չնայած որոշ բացառություններին, նպաստում է իսրայելա-թուրքական համագործակցության աճին մի շարք կարևոր ոլորտներում, այդ թվում նաև ռազմական։

Քարոզչական առումով հատկապես զգալի է Հայոց ցեղասպանության ժխտման հարցում Իսրայելի և Թուրքիայի քաղաքականությունների նմանությունը։ Իսրայելի կողմից այդպես վարվելու պատճառները շատ են, բայց դրանց հիմքում, իհարկե, համատեղ պատասխանատվության և, անգամ այդ առումով, հրեաների բացառիկության գաղափարն է դրված։

Ընդհանուր առմամբ, խոսելով հայկական գործոնի դեմ հանդես եկող երկրների և ուժային կենտրոնների մասին՝ պետք է նշել, որ չհաշված մի քանի բացառությունները, դրանց աշխատանքները հիմնականում ուղղորդում և համակարգում են Թուրքիայի կամ Ադրբեջանի իշխանությունները։ Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում, եվրոպական երկրներում և այլուր հաճախ հայտնվում են հակահայկական բովանդակությամբ հոդվածներ, մեկնաբանություններ և հայտարարություններ, որոնց հեղինակների գործունեության անգամ մակերեսային ուսումնասիրությունը միանգամից բա-

ցահայտում է նրանց կապը թուրքական այդ երկու պետությունների իշխանությունների կամ հիմնադրամների հետ։

Հայաստանում փորձագիտական հանրությունն, անշուշտ, ուշադիր հետևում է տարբեր երկրներում թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից իրականացվող ծրագրերին և արշավներին։ Այս թեմայի վերաբերյալ բավականաչափ հետազոտություններ կան[7]։ Մի շարք հայ հետազոտողներ, ուսումնասիրելով ԱՄՆ-ում Ի.Ալիևի վարչակազմի կողմից իրականացվող լոբբիստական աշխատանքը, ինֆոգրաֆիկայի (գծապատկեր) տեսքով հանրության դատին են ներկայացրել այն մարդկանց, կենտրոններն ու հիմնադրամները, որոնք ներգրավված են այդ գործում։

Խնդիրը, սակայն, այն է, որ այդ գիտելիքը հիմնականում մնում է հետազոտական կենտրոններում և մասնագետների սեղանին։ Հանրության ավելի լայն զանգվածները, լրատվամիջոցների ներկայացուցիչները, հասարակական ու պետական գործիչները հաճախ անտեղյակ են նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքների մասին, իսկ երբեմն էլ՝ ստացված տեղեկատվությունը մեկ-երկու անգամ օգտագործում, մի կողմ են դնում ու մոռանում։

Սա խնդիր է, որը հնարավորինս արագ պետք է շտկվի։ Հակառակ պարագայում հայկական պետություններն ու սփյուռքը հեշտ թիրախ կդառնան/կմնան հակահայկական քարոզչություն իրականացնող բոլոր կողմերի համար։

[7] Օրինակ, Թուրք-ադրբեջանական հակահայ լոբբինգը Միացյալ Նահանգներում, *Հայկարամ Նահապետյան*, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (18), 2007թ.։



www.behance.net/gallery/30646163/INFOGRAPHIC-Azerbaijan-Lobbyists-in-US

1.4. Հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական գործունեության նպատակները

Գտնվելով բացահայտ հակամարտության մեջ հայկական պետությունների և սփյուռքի դեմ՝ Թուրքիան և Ադրբեջանը երբեք չեն թաքցրել, որ հայկական գործոնի դեմ ուղղված իրենց քայլերը թշնամական հիմքեր ունեն: Գլխավոր նպատակը մեկն է՝ հնարավորինս վնասել հայ հանրությանը, թուլացնել նրա դիմադրողականությունն ու կազմաքանդել պաշտպանական ենթակառուցվածքները:

Մեր հակառակորդների քարոզչական գործունեության այս գլխավոր նպատակը հակահայկական մի շարք թեզեր ստեղծելու անհրաժեշտություն է առաջացրել, որոնք տարբեր հաջողությամբ կիրառվում են հայկական պետությունների և սփյուռքի դեմ ստեղծված տեղեկատվական ճակատի բոլոր

ուղղություններում: Այսինքն՝ Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունների կողմից ընտրվել է գլխավոր խնդիրը տարբեր ենթախնդիրների բաժանելու մարտավարությունը և, դրանց մասնակի կամ ամբողջական լուծման շնորհիվ, հիմնական նպատակներին հասնելու ռազմավարությունը:

Օրինակ, հայկական պետությունների ռազմական պաշտպանության համակարգերը թուլացնելու համար ադրբեջանական քարոզչամեքենան մշտապես մեծացնում է սահմանային իրադարձությունների արդյունքում հայկական կորուստների մասին լուրերի հնչեղությունը: Այդ կերպ նրանք փորձում են ազդել հայ հասարակության այն հատվածի տրամադրությունների վրա, ովքեր զինակոչի տարիքին հասած արու զավակներ ունեն: Ընդհանրապես, ադրբեջանական կողմի՝ պատերազմի արհավիրքները ցուցադրելու մոլուցքն այն մարտավարությունն է, որը պաշտոնական Բաքուն օգտագործել է մշտապես: Ընդ որում, դա արվել է թե՛ պատերազմի դաշտում ձեռք բերված արդյունքներն օգտագործելով (զոհված զինվորների, գերության մեջ հայտնված քաղաքացիական անձանց մարմիններ քառատելով և ցուցադրելով), թե՛ մարտադաշտից հեռու (ռազմագերիների սպանություններ ադրբեջանական բանտերում) և թե՛ միջազգային հարթակներում (Ռամիլ Սաֆարովի կողմից քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահարելու դեպքը): Այս ամենը նպատակաուղղված է մեկ հիմնական խնդրի՝ հայերի շրջանում ադրբեջանցիների նկատմամբ վախի զգացողության առաջացմանը:

Հայկական պետությունների ռազմական պաշտպանության համակարգերը վնասելու նույն նպատակով՝ ադրբեջանական կողմը քարոզչական/տեղեկատվական հնարքների օգնությանն է դիմում նաև միջազգային տարբեր հարթակներում, օրինակ՝ փորձելով հասնել Հայաստանի կողմից տարբեր երկրներից զենք ձեռք բերելու հնարավորության սահմանափակմանը: Այս հարցում պաշտոնական Բաքուն ժամանակ առ ժամանակ կարողացել է հաջողություններ ունենալ եվրոպական որոշ զենք արտադրող ընկերությունների հետ հարաբերություններում:

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ հակառակորդի առջև դրված տեղեկատվական/քարոզչական խնդիրը մեկն է եղել՝ հայկական պետությունների ռազմական պաշտպանության համակարգերի թուլացումը: Բայց այդ խնդիրը լուծելու համար նրանք տարբեր ծրագրեր են մշակել և փորձել դրանց համադրման միջոցով հասնել հիմնական նպատակին:

Հայկական սփյուռքի դեմ թուրք-ադրբեջանական քարոզչական գործունեության նպատակները նույնպես թելադրված են հայերի հանդեպ նրանց թշնամական քաղաքականության պահանջներով: Այս ուղղությամբ պաշտոնական Բաքվի և Անկարայի հիմնական խնդիրները երկուսն են՝ խանգարել հայկական սփյուռքի՝ Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության զարգացմանը միտված աշխատանքներին և չեզոքացնել այլ երկրներում մեր հայրենակիցների հակաթուրքական և հակաադրբեջանական գործունեությունը:

Երկրորդ հարցում գլխավոր թիրախը, անկասկած, Հայոց ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված հայկական սփյուռքի աշխատանքն է, որն արդյունավետ իրականացվում է աշխարհի մի շարք երկրներում: Թուրքիայի համար աշխատանքի այս ուղղությունն առավել ևս կարևոր է, քանի որ Անկարան հասկանում է, որ Արևմուտքի և Ռուսաստանի կողմից իր առջև դրված մի շարք սահմանափակումներն, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված են նաև Հայկական հարցի առկայությամբ, որը քաղաքակիրթ աշխարհը վաղուց արդեն ընկալում է ոչ միայն քաղաքական, այլև արժեհամակարգի պրիզմայով: Սա լուրջ արգելք է Թուրքիայի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ձգտումների, այդ թվում նաև Եվրոպական միությանն անդամակցելու համար: Այդ պատճառով Թուրքիայի իշխանություններն առավել կենտրոնացած են հայկական սփյուռքի, իսկ Ադրբեջանի իշխանությունները՝ հայկական երկու պետությունների դեմ պայքարի վրա: Եվ տեղեկատվական/քարոզչական ոլորտն այս առումով հաճախ առանցքային նշանակություն է ստանում թուրքական երկու պետությունների քաղաքականության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, հայկական պետությունների և սփյուռքի դեմ, Թուրքիայից և Ադրբեջանից բացի, քարոզչական աշխատանքներ են տանում նաև այլ երկրներ ու կառույցներ: Վերջիններիս նպատակներն, իհարկե, նույնչափ ագրեսիվ չեն, որքան Անկարայինը և Բաքվինը: Հաճախ ան-

գամ ճիշտ հակառակ պատկերն է դիտարկվում, երբ այդ պետությունների հակահայկական քարոզչությունը հենց հայերից պաշտպանվելու նպատակ է հետապնդում: Այդպիսին են, օրինակ, Վրաստանի տեղեկատվական/քարոզչական քաղաքականության որոշ ուղղություններ: Արմենոֆոբիան խոր արմատներ է ձգել վրաց հանրության մեջ՝ ստիպելով նրանց վախենալ հայկական գերակայությունից, սեպարատիզմից, պատմագրությունից, կրոնից և այլն: Մտացածին վախերից ծնված ինքնապաշտպանական բնազդը ստիպում է վրաց գիտնականներին ու փորձագետներին հակահայկական դիրքերից հանդես գալ, ինչն էլ իր հերթին երկու ժողովուրդների միջև մրցակցության, միմյանց հակադրվելու և անգամ վնասելու մթնոլորտ է ստեղծում:

Բայց Վրաստանն այս առումով բացառություն չէ: Ցավոք, չհիմնավորված վախերը, կեղծ մրցակցությունը և իրական քաղաքական շահի հետ առնչություն չունեցող այլ հանգամանքները խնդիր են նաև այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցների համար: Ճիշտ է, դրանք հաճախ լոկալ բնույթ են կրում, սահմանափակվում են կոնկրետ մեկ կամ երկու հայ համայնքի շրջանակներով, բայց դրանից պակաս կարևոր չեն դառնում հայ հանրույթի ընդհանուր անվտանգության ապահովման տեսակետից: Այսպես, մենք հաճախ դառնում ենք Ռուսաստանում կամ Ուկրաինայում ապրող հայերի և կովկասյան այլ ժողովուրդների, օրինակ՝ չեչենների, ադրբեջանցիների, միջև առաջացած վեճերի ու մրցակցության ականատես: Ինչպես արդեն նշվեց, որպես կանոն,

դրանք քաղաքական որևէ նշանակություն և նպատակ չհետապնդող միջադեպեր են, որոնք, սակայն, կարող են մարդկային կյանքեր արժենալ։

Ուստի, խոսելով հայկական գործոնի դեմ ուղղված քարոզչական աշխատանքի մասին՝ պետք է փաստենք, որ հաճախ դա ինքնանպատակ և այն իրականացնող կողմի ընդհանուր մարտավարությանն ու ռազմավարությանը ոչինչ չտվող երևույթ է։ Այսինքն՝ գործ ունենք թե՛ նպատակաուղղված և թե՛ անիմաստ քարոզչության ու քարոզչական թեզերի հետ, որոնք, կախված դեպքերի զարգացման ընթացքից, կարող են փոխվել տեղերով։ Այդ պատճառով հայկական պետությունների, սփյուռքի և համահայկական կառույցների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի նաև ահա այդպիսի աննպատակ, բայց ոչ պակաս վտանգավոր, քարոզչական թեզերի բացահայտումն ու արձագանքումը։ Այսինքն՝ թույլ չտալ, որպեսզի պատահականության գործոնը հանկարծ զգալի վնաս պատճառի մեր հավաքական անվտանգությանը։

1.5. Ամփոփում

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է պնդել, որ հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ տարվում է հստակ մշակված և հետևողական քարոզչական աշխատանք։ Մեր դեմ ուղղված նման գործունեության հիմնական նպատակը հայկական հանրույթին հնարավորինս մեծ վնաս պատճառելն է։ Այսինքն՝ այդ քաղաքականությունը թշնամական է և ուղղված է ոչ միայն հայկական երկու պետությունների՝ Հայաստանի և Արցախի

հանրապետությունների, այլև աշխարհասփյուռ հայ ժողովրդի դեմ։ Ընդ որում, թեմատիկ թիրախների ընտրության հարցում հակառակորդը մեծ տարբերություն չի դնում։ Հարվածում է այնտեղ, որտեղ հնարավոր է։ Նպատակը կարող է լինել թե՛ հայկական հանրույթի ֆիզիկական անվտանգությունը, թե՛ տնտեսական շահը և թե՛ միջազգային հեղինակությունը։

Հայկական գործոնի դեմ հանդես եկող հիմնական ուժերն Ադրբեջանի և Թուրքիայի իշխանություններն են, որոնք, իրենց նպատակին հասնելու համար, հաճախ հակահայկական գործունեության մեջ են ներքաշում նաև արտասահմանյան գործընկերներին, միջազգային կառույցների ներկայացուցիչներին և այլն։ Թուրք-ադրբեջանական քաղաքականության նման մարտավարությունը հայության դեմ ուղղված քարոզչական աշխատանքը բազմաբովանդակ, ծավալուն և աշխարհագրական իմաստով չափազանց ընդգրկուն է դարձնում։ Այս առումով, հայության դեմ կանգնած խնդիրն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ մեր դեմ քարոզչական աշխատանք են տանում նաև այլ երկրներ և ուժային կենտրոններ, որոնց քաղաքականությունը պարտադիր չէ, որ հակահայկական բնույթ կրի։ Դա կարող է պայմանավորված լինել մեր տարածաշրջանի կարևոր աշխարհաքաղաքական նշանակությամբ, քաղաքական կամ տնտեսական ներկա շահերով և այլն։

Հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական աշխատանքի եզրերն ընդհանուր առմամբ պարզ են։ Ավելին՝ անցած տարիների փորձը, մեր քաղաքա-

կանության շահերի ու ձգտումների առավելապես հստակ լինելը և արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերն այդ քարոզչության առկայության պարագայում ապրելու որոշակի իմունիտետ են ձևավորել հայ հանրության շրջանում: 2016թ. փետրվարին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն անգամ բացահայտ հայտարարել է, որ Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում որևէ առաջընթացի հնարավորություն չի տեսնում: «Մենք պետք է համակերպվենք այն մտքին, որ Մարտակերտից և Մարտունուց դեպի արևելք և Գյումրուց ու Արմավիրից արևմուտք մենք որևէ իսկական գործընկեր չունենք: Մինչև հիմա ապրել ենք առանց նրանց՝ ապահովելով զարգացման ավելի կամ պակաս տեմպեր: Համարենք, որ այնտեղ անհատակ ու անանցանելի ճահիճ է»,- ասել է նախագահը[8]:

Բայցևայնպես, դա չի նշանակում, որ հայկական պետությունները և սփյուռքը որևէ քայլ չեն ձեռնարկել արտաքին աշխարհից բխող վտանգները, այդ թվում նաև քարոզչական, չեզոքացնելու համար: Ճիշտ հակառակը, այդ ամենը մշտապես եղել է հայ գիտնականների, փորձագետների, հասարակական և քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում, ինչը հնարավորություն է տվել հակահայկական քարոզչության հնարավոր բացասական հետևանքները հաղթահարելու գործուն մեխանիզմներ մշակել և կիրառել դրանք առօրյա պրակտիկայում:

[8] Նախագահը հանդես է եկել ելույթով Սահմանադրության փոփոխությունների կենսագործման վերաբերյալ, http://www.president.am/hy/press-release/item/2016/02/12/President-Serzh-Sargsyan-meeting-Constitution/

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԹԵԶԵՐԸ

2.1. Պատմություն, քաղաքականություն, հոգեբանություն և այլն

Արդյունավետ տեղեկատվական և քարոզչական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրա փաստագրական հիմքերն ամուր լինեն: Սա իրողություն է, որը վաղուց արդեն ոչ ոք չի վիճարկում: Հայտնի փաստ է, որ ակնհայտ ճշմարտությունների մատնանշումը, դրանց գրագետ մատուցումը թույլ են տալիս քարոզչություն իրականացնող կողմին առավել համոզիչ լինել հանրության աչքին և ստանալ այն արդյունքները, որոնք հետապնդվում են քարոզչական գործունեության ընթացքում:

Մյուս կողմից՝ գոյություն ունի մեկ այլ ընդունված մոտեցում, համաձայն որի՝ հաճախ կրկնվող սուտը դառնում է ճշմարտություն: Այս մեթոդը, որպես կանոն, օգտագործվում է այն ժամանակ, երբ մատուցվող քարոզչական նյութի փաստագրական հիմքը թերի է: Դա այն է, ինչը հաճախ կիրառվում է նաև հայկական պետությունների և սփյուռքի դեմ քարոզչական այն թեմաներում, որոնք պատմական նշանակու-

թյուն ունեն։ Օրինակ, արցախյան հակամարտությանն Ադրբեջանին ձեռնտու լուծում տալու նպատակով ադրբեջանական կողմն անընդհատ փորձում է ապացուցել, իբր Արցախը պատմական ադրբեջանական տարածաշրջան է եղել։ Մեր դեմ ուղղված քարոզչական այս թեզին, իհարկե, անպայման կանդրադառնանք։ Հիմա պարզապես կարևոր է նշել, որ քաղաքական տարբեր խնդիրներ լուծելու նպատակով հակառակորդը հայ հանրության դեմ կիրառում է քարոզչական թեզեր, որոնք ունեն երկակի նշանակություն՝ պատմական և արդի քաղաքական։

Պարզ է, իհարկե, որ պատմական թեզերը մշակվում և դաշտ են նետվում ժամանակակից խնդիրներ լուծելու նպատակով, և այնուամենայնիվ, պետք է տարանջատել մեր դեմ ուղղված քարոզչության վերոնշյալ երկու տեսակները։ Մանավանդ որ դրանց թիրախները հաճախ հասարակության տարբեր շերտեր են։ Օրինակ, քաղաքական թեզերի հիմնական հասցեատերը հիմնականում արդեն հասունացած, որոշում կայացնող լսարանն է, մինչդեռ պատմական նշանակության քարոզչական թեզերն առավելապես ուղղվում են երիտասարդներին, ուսանողներին և այլն։

Հատկապես ժամանակակից աշխարհում, երբ տպագիր գրականությունը տեղը զիջում է էլեկտրոնային բովանդակությանը, պատմական ուղղվածություն և նշանակություն ունեցող թեզերն առավել հեշտ են տարածվում երիտասարդության շրջանում, հետևաբար նաև ավելի մեծ ազդեցություն են թողնում նրանց հետագա աշխարհընկալումների վրա։ Ամ-

բողջ հաշվարկն այն է, որ պատմական թեզերն ավելի կենսունակ և ժամանակի առումով առավել տևական ազդեցություն ունեցող գործիքներ են, որոնք նաև մտածելակերպ և գաղափարախոսություն ձևավորելու կարողություն ունեն։

Նույնը չի կարելի ասել զուտ քաղաքական քարոզչական թեզերի մասին, որոնք հիմնականում ուղղված են այսօրեական խնդիրների լուծմանը։ Օրինակ, քարոզչական թեզ է շրջանառվում այն մասին, որ Հայաստանի իշխանություններն ընտրություններ են կեղծել, լեգիտիմ չեն և այլն։ Հասկանալի է, որ այսպիսի քարոզչությունը չի կարող հաշվարկված լինել երկարաժամկետ արդյունքների վրա և առավելագույնը պետք է հավակնի Հայաստանին այս կամ այն դրամաշնորհից կամ միջազգային հանրության որևէ աջակցության ծրագրից զրկելուն։ Դրա համար պատմական և զուտ քաղաքական քարոզչական թեզերը պետք է տարբերակել՝ չնայած դրանք հաճախ փոխկապակցված են։

Փոխկապակցվածության այդ փաստը հաճախ շփոթմունքի կամ քարոզչության երկու տեսակներից մեկին առավելություն տալու, մյուսը թերագնահատելու պատճառ է դառնում։ Մինչդեռ, միևնույն երևույթի երկու բաղադրիչները հավասարապես ընկալելու, ճիշտ գնահատելու և հակազդելու անհրաժեշտություն կա։ Ընդ որում, քանի որ հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված պատմական քարոզչությունը, որպես կանոն, կեղծիքների վրա է հենված և շատ է կրկնվում, որպեսզի որպես ճշմարտություն ընկալվի, հետևաբար պետք է համակերպվել նաև այն մտքին, որ միև-

նույն ստին պետք է հարյուր անգամ պատասխանել, եթե այն հարյուր անգամ է հնչեցվում:

Ընդհանրապես, պատմական կեղծարարությունը խնդիր է, որը խոր արմատներ է նետել մեր տարածաշրջանում: Այն պետությունների կողմից ֆինանսավորվող, երբեմն նաև պարտադրվող երևույթ է, որը վաղուց արդեն քաղաքական գործոն է դարձել ոչ միայն Հարավային Կովկասում, այլև մեզ հարող այլ տարածաշրջաններում:

Միևնույն ժամանակ, քաղաքական քարոզչությունն իր հերթին հաճախ հենվում է տարբեր տեսակի շահարկումների, փաստերի կամայական մեկնաբանության և բացարձակ ստերի վրա: Այս իրողությունները, անկասկած, մի կողմից հեշտացնում են այդպիսի քարոզչության դեմ պայքարը, քանի որ դրա ազդեցությունը չեզոքացնելու համար բավական է մարդկանց պարզապես ճշմարտությունը ցուցանել, բայց մյուս կողմից էլ՝ լուրջ խնդիրներ են առաջացնում, եթե նման քարոզչության ծավալը շատ է և հետևողականորեն է իրականացվում: Բացի այդ, գոյություն ունի «առաջնային տեղեկատվություն» հասկացությունը, որը ենթադրում է, նախ՝ քարոզչի կողմից դաշտ նետված թեմայի տարածում ու քննարկում, և երկրորդ՝ որպես դրա արդյունք, առաջնային էֆեկտի ապահովում: Այս դեպքում առանձնապես կարևոր չէ, թե որքանով է տարածվող տեղեկատվությունը ճիշտ կամ սխալ: Կարևորն այն է, որ լսարանն իմանա, թե, օրինակ, Պողոսը սպանել է Պետրոսին: Հետո թող Պողոսն ապացուցի, որ ինքը հանցանք չի գործել, Պետրոսը ողջ է և այլն: Հաշվարկն այն է, որ հեր-

քումը կտեսնեն ոչ բոլորը, տեսածների մի մասն էլ ժամանակի ընթացքում կմոռանա, թե քննարկվող բուն թեման որն է, բայց կհիշի, որ Պետրոսի ու Պողոսի միջև ինչ-որ տհաճ միջադեպ է եղել։

Քարոզչության երկու այս տեսակների՝ պատմականի և քաղաքականի կողքին գոյություն ունեն նաև հոգեբանական, սոցիալական, տնտեսական և այլ ուղղվածության քարոզչություններ։ Ստորև կներկայացնենք հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական թեզերը՝ նշելով, թե կոնկրետ ինչ խնդիրներ են փորձում լուծել հայկական հանրույթի դեմ պայքարի նման մեթոդներով հանդես եկող ուժերը։ Նախորդ գլխում մենք արդեն խոսել ենք այն մասին, որ դրա հիմնական պատվիրատուները Թուրքիայի և Ադրբեջանի իշխանություններն են։ Բայց ոչ միայն նրանք։ Այժմ կանդրադառնանք քարոզչական այդ թեզերին, դրանց մշակման և տարածման եղանակներին։

2.2. Հայաստանի և Արցախի հանրապետություններին ներկայացված տարածքային պահանջներ

2018թ. փետրվարին Ադրբեջանում իշխող «Ենի Ազերբայջան» (թարգմ.՝ «Նոր Ադրբեջան») կուսակցության VI համագումարում այդ երկրի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ բոլոր ադրբեջանցիները պետք է միավորվեն իրենց ժողովրդի գլխավոր նպատակի՝ Երևանի վրա իշխանություն հաստատելու խնդրի լուծման շուրջ։ «Երևանը մեր պատմական հողն է, և մենք՝ ադրբեջանցիներս, պետք է վերադառ-

նանք այնտեղ: Դա մեր քաղաքական և ռազմավարական նպատակն է, որին պետք է աստիճանաբար մոտենանք»,- հայտարարել է Ադրբեջանի նախագահը: Շարունակելով միտքը՝ վերջինս ասել է, որ ադրբեջանցիները չպետք է մոռանան իրենց պատմական հողերի մասին: «Ապագայում դա պետք է դառնա մեր գործունեության ուղղություններից մեկը: Մեր պատմական հողերը՝ Իրևանյան խանությունը, Զանգեզուրը, Գյոյչան: Դրա մասին պետք է իմանա թե՛ երիտասարդ սերունդը և թե՛ ողջ աշխարհը»,- եզրափակել է Ադրբեջանի նախագահը[9]:

Եթե համացանցի որոնողական համակարգերի օգնությամբ փորձենք հետևել այս հայտարարության տարածման ընթացքին և աստիճանին, կտեսնենք, որ գրեթե ողջ ռուսալեզու մամուլը՝ լինի ադրբեջանական, հայկական, թե ռուսական, հեղեղված է դրանով, դրա մեկնաբանություններով, հակադարձումներով և այլն: Դա, իհարկե, պայմանավորված է նման հայտարարությունների սենսացիոն բնույթով, բայց ոչ միայն: Իրականությունն այն է, որ ադրբեջանական կողմն ամեն ինչ արել է, որպեսզի գաղափարը, թե իբր հայկական երկու պետությունները ստեղծված են ադրբեջանական հողերի վրա, հնարավորինս տարածվի և ամրապնդվի մարդկանց մտքում:

Համացանցի նույն որոնողական համակարգերը վկայում են այն մասին, որ Երևանի՝ իբր ադրբեջանական քաղաք լինելու մասին նյութերը հարյուր-հազարավոր են: Հարևան

[9] «Ереван - наша историческая земля», https://www.gazeta.ru/politics/2018/02/08_a_11642335.shtml

պետության պատմաբանները, փորձագետները, քաղաքական մեկնաբաններն ու լրագրողները տարիներ շարունակ որևէ տեղեկատվական առիթ բաց չեն թողել՝ ասելու, որ Հայաստանի Հանրապետությունը ստեղծվել է այսպես կոչված Արևմտյան Ադրբեջանի տարածքում։

Կոնկրետ Երևանի մասին նշվում է, թե քաղաքը հիմնադրվել է ոչ թե Վանի թագավորության Արգիշտի Ա արքայի կողմից 2800 տարի առաջ, այլ 1504թ. իրանական Սեֆյանների դինաստիայի հիմնադիր Իսմայիլ շահի կողմից՝ որպես օսմանցիների հնարավոր առաջխաղացումը կանխող ամրոց։ Քաղաքի անունն ադրբեջանական պատմագրությունը կապում է Ռևան-ղուլու խանի անվան հետ, որին էլ, իբր, Իսմայիլ շահը հանձնարարել է ամրոցի կառուցման գործը։ Նշվում է նաև, որ քաղաքը մշտապես եղել է ադրբեջանաբնակ և, չգիտես թե ինչու, 1918թ. հանձնվել է հայերին՝ որպես նույն թվականի մայիսին հռչակված Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք։ Որպես դրա «ապացույց»՝ ադրբեջանցի պատմաբանները մեջբերում են Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1920թթ.) առաջին վարչապետ Ֆաթալի խանի՝ արտգործնախարար Գաջինսկուն հասցեագրված նամակը, որտեղ ասվում է. «Հայերի հետ մենք լուծել ենք բոլոր վիճահարույց հարցերը։ Նրանք կընդունեն վերջնագիրը և կավարտեն պատերազմը։ Մենք զիջել ենք նրանց Իրավանը»։ Նշվում է նաև, թե Երևան անունը, որպես այդպիսին, քաղաքին տրվել է 1936թ., որից հետո հայերը սկսել են քանդել Երևանի՝ ադրբեջանական քաղաք լինելու մասին վկայող բոլոր կառույց-

ները՝ մզկիթները, շենքերը, հուշարձանները և այլն[10]:

Երևանի մասին պատմական կեղծարարության ադրբեջանական բոլոր նյութերը խնամքով հավաքված և զետեղված են ադրբեջանական Erevangala500.com կայքում, որը պատմավերլուծական էլեկտրոնային հանդես կոչվելու հավակնություններ է ներկայացնում: Այն ստեղծվել է 2011թ. փիլիսոփայական գիտությունների դոկտոր Շելալե Հասանովայի կողմից և արդեն քանի տարի շարունակ ակտիվ գովազդվում է ադրբեջանական բոլոր լրատվական գործակալությունների, հայ-ադրբեջանական հակամարտության խնդրով զբաղվող դիվանագետների, փորձագետների և լրագրողների կողմից:

Ադրբեջանի պատմաբանների կողմից պատմության այսպիսի կեղծումը համապատասխան գնահատականներ է ստացել ոչ միայն հայ, այլև մեր տարածաշրջանի պատմական անցյալն ուսումնասիրող այլազգի գիտնականների կողմից: Բայց խնդիրն այդ չէ: Հարցն այն է, որ կեղծ պատմագիտությունն Ադրբեջանի իշխանությունների կողմից օգտագործվում է որպես քաղաքական գործիք, որի միջոցով նրանք, նախ՝ կրթում և հայերի դեմ են պատրաստում իրենց հաջորդ սերունդներին, և երկրորդ՝ օգտվելով այն փաստից, որ ժամանակակից քաղաքական առաջնորդներն այնքան էլ մեծ ուշադրություն չեն դարձնում պատմական անցյալին, փորձում են քարոզչական այդ թեզերն օգտագործել որպես փաստարկ՝

[10] Տե՛ս Ереван – древний армянский город: не наша история, Шелале Гасанова, https://haqqin.az/news/43197; Фальшивый юбилей: как придуманная 50 лет назад сказка стала частью истории Армении, Ризван Гусейнов, https://ru.sputnik.az/science/20180416/414904329/azerbaijan-istorija-erevan-erebuni.html; Азербайджанский город Иреван, https://www.youtube.com/watch?v=oO_kVFlN3TQ և այլն:

Արցախի հետ ունեցած տարածքային վեճերը հօգուտ Ադրբեջանի լուծելու համար։

Սա կարևոր հանգամանք է։ Ինքս առիթ եմ ունեցել շփվելու եվրոպացի և ռուս որոշ փորձագետների հետ, ովքեր ասում էին, թե հայկական կողմն ամեն դեպքում պետք է տարածքային զիջումներ անի Ադրբեջանին, որովհետև՝ «դե, պարզ է, որ Երևանի մասով Ալիևը չափազանցում է, բայց դե Ղարաբաղի մի մասն իսկապես ադրբեջանական է»։ Այսինքն՝ գործի է դրվում շատը պահանջելով, քիչը ստանալու քարոզչական մեթոդը։ Ի.Ալիևը հենց այնպես չէ խոսում Երևանի, Զանգեզուրի ու Սևանի մասին այն պահին, երբ բանակցությունների սեղանին դրված է Արցախի որոշ շրջանների հարցը միայն։ Այդ կերպ Երևանից «հրաժարվելը» նա փորձում է ներկայացնել որպես զիջում, որի դիմաց, ըստ ադրբեջանական կողմի ակնկալիքների, հայկական կողմն էլ պետք է հրաժարվի Արցախից։

Ընդ որում, քաղաքական և հատկապես տնտեսական համագործակցության այլ հարցերում Ադրբեջանի ղեկավարը բավական լավ տպավորություն է թողնում միջազգային գործընկերների վրա։ Ի.Ալիևի «պրագմատիզմը» տպավորել է անգամ որոշ հայ քաղաքական և պետական գործիչների։ Հետևաբար, Ադրբեջանի «կիրթ և գրագետ» առաջնորդի վերոնշյալ, մեղմ ասած, կեղծ համոզմունքներին այլ երկրների ղեկավարները նույնպես հաճախ առնվազն հարգանքով են մոտենում։ Դե, հիմա մարդը համոզված է...

Մինչդեռ Ի.Ալիևի այդ «համոզմունքն» ինքնին քաղաքական պատվեր է, որը ժամանակին ադրբեջանցի գիտնականներին իջեցվել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմից: Ինչպես գրում է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի էթնոլոգիայի և անտրոպոլոգիայի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Վիկտոր Շնիրելմանը. «Վերլուծելու համար, թե ինչ և ինչպես է տեղի ունենում ներկայում ադրբեջանական պատմագրությունում, առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Նախիջևանի Ինքնավար Մարզի 75-ամյակին նվիրված պետական հանձնաժողովի նիստը, որը տեղի է ունեցել 1999թ. փետրվարի 9-ին՝ Հեյդար Ալիևի նախագահությամբ: Իր բացման խոսքում նախագահը կոչ է արել գրել Ադրբեջանի ճշմարիտ պատմություն՝ մատնանշելով այդ տարելիցի քաղաքական նշանակությունը: Ցուցադրելով, թե ինչ է հասկանում նա «ճշմարիտ պատմություն» ասելով, նախագահը հայտարարել է, որ 1918-1919թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունն ինքնակամ Հայաստանին է զիջել Երևանի խանության և Երևան քաղաքի հանդեպ իրավունքները: Սակայն որևէ Երևանյան խանություն այն ժամանակ արդեն գոյություն չուներ: Կար Երևանյան մարզը, որի բնակչության մեծամասնությունը հայեր էին»[11]:

Շարունակելով հոր պատմական կեղծարարության քաղաքականությունը՝ Ադրբեջանի ներկայիս նախագահ Իլհամ Ալիևը դեռևս 2005թ. հանձնարարել է ադրբեջանցի գիտնա-

[11] Шнирельман В.А., Глава 15. История и большая политика // Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. С. 246-255.

կաններին ապացուցել միջազգային հանրությանը, թե, իբր, հայերը որևէ իրավունք չունեն Արցախի նկատմամբ: Նման հայտարարությամբ նա հանդես է եկել Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի 60-ամյակին նվիրված միջոցառման ընթացքում: Իր ելույթում Ի.Ալիևը խոստացել է աջակցել ադրբեջանցի մասնագետներին իր այն թեզի առաջխաղացման գործում, համաձայն որի՝ «հայերը եկել են Ադրբեջանի անբաժան մաս կազմող Լեռնային Ղարաբաղ որպես հյուրեր», այդ պատճառով «որևէ իրավունք չունեն պնդելու, թե Լեռնային Ղարաբաղն անցյալում պատկանել է նրանց»[12]:

Ի կատարումն հայր և որդի Ալիևների քաղաքական այդ պատվերի, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում նաև աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիևն ու աշխատակազմի քաղաքական հետազոտությունների բաժնի ղեկավար Ֆուադ Ախունդովը, ձեռնամուխ են լինում համապատասխան «պատմաբանների» բուծման գործին: Մինչ այդ պատմության արդեն հայտնի կեղծարարներ, ակադեմիկոսներ Զիա Բունիաթովի, Ֆարիդա Մամեդովայի և այլոց անունների կողքին հայտնվում են այնպիսի նորաթուխ «գիտնականների» անուններ, ինչպիսիք են Շելալե Հասանովան, Ռիզվան Հուսեյնովը, Բախտիյար Թունջայան, Ռաշիդ Գեուշևը, Ուլվիյա Հաջիևան, Քասիմ Հաջիևը, Քամրան Իմանովը և այլք:

[12] Речь Президента Азербайджана Ильхама Алиева в торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии Наук (14.12.2005), www.president.az, Azərbaycan Prezidenti, Rəsmi İnternet səhifə: (http://archive.president.az/print.php?item_id=20070810125435235&sec_id=11

Այսպես Ադրբեջանի պետական ապարատը՝ գիտական, փորձագիտական, լրատվական, դիվանագիտական և տեղեկատվական ենթակառուցվածքների ողջ պոտենցիալով հանդերձ, լծվում է հակահայկական այն թեզի մշակմանը, համաձայն որի՝ հայկական երկու պետությունները ստեղծվել են ադրբեջանական հողերի վրա, և եթե Հայաստանի Հանրապետության գոյության մտքի հետ կարելի է հաշտվել, ապա երբեք չեն հանդուրժի, որպեսզի հայկական երկրորդ պետությունն էլ շարունակի գոյատևել իրենց հայրենիքում։

Նպատակը, բնականաբար, Արցախն է։ Դա է Ադրբեջանի քաղաքականության այսօրվա գլխավոր ուղղությունը։ Դրա համար էլ բոլոր ռեսուրսները կենտրոնացված են հենց Արցախի ադրբեջանապատկան լինելու թեզն ուժեղացնելու գործին։ Որպես հաջողության հասնելու մեթոդ կրկին ընտրված է պատմական կեղծարարությունը։ Փոխվում է ամեն ինչ՝ թե՛ երկրամասի պատմությունը, թե՛ քաղաքների ու գյուղերի անվանումները, թե՛ այնտեղ բնակված ժողովուրդների ազգությունը, կրոնը և այլն։ Դա հետևողականորեն իրականացվող քաղաքականություն է, որի արդյունքում լույս են տեսել գիտական կոչվելուն հավակնող բազում գրքեր, հարյուրավոր հոդվածներ, մեկնաբանություններ և այլն։

Ցույց տալու համար, թե ինչպես է այդ ամենը կատարվում Ադրբեջանում, անդրադառնանք կոնկրետ մեկ օրինակի։

2011թ. դեկտեմբերի 23-ին Բաքվում տեղի ունեցավ Erevangala500 «պատմավերլուծական» կայքի շնորհանդեսը, որից հետո Ադրբեջանի տեղեկատվական գործակալությունը

ներում պայթեց լուրը. «Ադրբեջանական պատմագիտության մեջ տեղի է ունեցել սենսացիոն իրադարձություն. Կովկասի և Փոքր Ասիայի պատմության կենտրոնին են նվիրել Բաքու բերված «Գանձասարի վիմագրությունները» գիրքը, որի հեղինակը հայազգի գիտնական Հ.Օրբելին է: Այն եզակի է, գոյություն ունի միայն մեկ օրինակով և վկայում է Լեռնային Ղարաբաղի աղվանական պատմության մասին»[13]: Ադրբեջանական պատմագիտությանը երջանկացրել էր Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական հետազոտությունների բաժնի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների գծով փիլիսոփայության դոկոտոր, իրեն քաղաքագետ համարող նույն ինքը՝ Ֆուադ Ախունդովը:

Ֆ.Ախունդովը շռայլորեն պարզաբանումներ էր տվել լրագրողներին. «Գիրքը գրվել է 1919թ. Պետրոգրադում: Նրանում ներկայացված է աղվանական 300 վիմագիր արձանագրություն: Սակայն գրքի լույսընծայման օրը հեղինակը հրատարակչությունից տարել էր ողջ տպաքանակը: Աղվանագետների ու հայագետների մի քանի սերունդ սաստիկ ափսոսում էր, որ այդ արժեքավոր աշխատությունը, որը հայկական հերյուրանքների դեմ փաստեր է պարունակում, ընդմիշտ կորսված է գիտության համար»,- ասել էր Ախունդովը: Այդ օրերին ադբեջանական կայքերը նաև գրել էին. «Պատմական հրատարակության արժեքն այն է, որ ադրբեջանական Լեռնային Ղարաբաղի տարածքում աղվանական բոլոր հու-

[13] Найдена уникальная книга армянского автора об албанской истории Нагорного Карабаха, https://ru.sputnik.az/culture/20111223/296768036.html

շարձանները ոչնչացվել կամ հայկականացվել են՝ աղվանական ճարտարապետական առանձնահատկությունները և վիմագիր արձանագրությունները ջնջելու, տաճարները վերակառուցելու և հայկական արձանագրություններ ու ճարտարապետական տարրեր ավելացնելու ճանապարհով: Ֆ.Ախունդովը, կոչ անելով Ադրբեջանի պատմաբաններին «իրենց ուսումնասիրությունների արդյունքներն աշխարհում տարածելու համար ակտիվորեն օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները», հայտնել էր, որ «ամբողջ աշխարհի պատմաբանների ազատ ուսումնասիրության համար Հ.Օրբելու գրքի տեքստը և նկարները տեղադրված են Erevangala500 կայքի գրադարանում»[14]:

Վերջին այս պնդումն, իհարկե, սուտ է՝ ադրբեջանական կողմն այդ գիրքը երբեք չի հրապարակել և չի էլ հրապարակելու: Քիչ անց անպայման կնշենք, թե ինչու:

Սակայն հայտնելով, որ Ֆ.Ախունդովը գտել է գրքի պահպանված միակ օրինակը, ադրբեջանական կողմն ակտիվորեն սկսեց նկարագրել ու մեջբերումներ անել Հ.Օրբելու աշխատությունից: Ահա նույն Ֆ.Ախունդովի բնութագրական պարզաբանումներից մեկը. «Հ.Օրբելին XII-XIV դարերի աղվանական հուշարձանների 300 վիմագրությունների խոր ուսումնասիրությունների հիմքի վրա 1919թ. Պետրոգրադում հրատարակեց «Գանձասարի և Հավոցպտուկի վիմագրություններ» գրքի առաջին մասը, որի նախաբանում, նկատի ունենալով Ղարաբաղի լեռնային մասի հուշարձանները, նշում էր, որ

[14] Նույն տեղում:

«արձանագրությունների կորպուսը դեռ կհրատարակվի»: Բայց անհասկանալի պատճառներով հրատարակված տպաքանակն ուշացավ ու լույս չտեսավ: Այդպիսով, այդ հիմնարար աշխատությունը դարձավ անհասանելի գիտական միջավայրի և լայն հանրության համար: Բանն այն է, որ արդեն այդ ժամանակ ամուր հաստատվել էր հայերի պատմական կեղծ հայեցակարգը, որի համաձայն՝ Արցախ-Խաչենի թագավորությունը համարվում էր հայկական: Հ.Օրբելին, վերլուծելով աղվանական թագավոր Հասան Ջալալի կառուցած Գանձասարի վանքի արձանագրությունների բովանդակությունը, հասկացել էր, որ դրանք չեն համապատասխանում Հայկական եկեղեցու կողմից հորինված և Ռուսաստանի կայսերական իշխանության կողմից ընդունված հայեցակարգին: Այսօր համացանցային Wikipedia հանրագիտարանում Հ.Օրբելու մասին հոդվածում «Գանձասարի և Հավոցպտուկի վիմագրությունները» գիրքը չկա մեծ աղվանագետի աշխատությունների ցանկում: Հայերը ջանում են մոռացության տալ Հ.Օրբելու անգնահատելի աշխատությունը, որը կարող է հերքել հայերի Աղվանական թագավորության ժառանգության հայկականացման կողմնակալ պատմագիտական ուսմունքը»[15]:

Համաձայն Ախունդովի «վարկածի», գրքի հրապարակումից հետո այն առգրավվել է հայ կեղծարարների կողմից և ոչնչացվել: Սա ևս մեկ տարածված սուտ է: Օրբելին կամ ուրիշ որևէ մեկը գիրքը չի ոչնչացրել: Իսկ Իլհամ Ալիևի աշխա-

[15] Фуад Ахундов, Разрушители фальсификаций, Том 1, Баку 2012: Հմմտ՝ https://nofalsify.com/ru/page/6.html

տակազմի բարձրաստիճան խաբեբա Ֆ.Ախունդովը չէր կարող գտնել Հ.Օրբելու «Գանձասարի և Հավոցպտուկի արձանագրությունները» աշխատությունն այն պարզ պատճառով, որ բնության մեջ նման գիրք երբևէ գոյություն չի ունեցել: Ինչպես Օբելին է նշել իր աշխատության նախաբանում, արձանագրությունների հավաքածուն 1909թ. պատրաստ էր տպագրության, սակայն գիրքը չտպագրվեց «տպարաններում հայկական վիմագրական կցագիր գծագրով տառատեսակի բացակայության պատճառով»: Նման տառատեսակ պատրաստվեց 1914թ. «Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի տպարանի տառաձուլարանում»: Ախունդովի «գտածը» ապագա գրքի շարածայուների օրինակն է, որոնք տրվել էին Օրբելուն ստուգման ու սրբագրման համար, ինչը լավ երևում է Ախունդովի «գտած» գրքի պատճեններից: Սակայն 1919թ. Պետրոգրադում տեղի ունեցավ ջրհեղեղ, ջուրը լցվեց տպարան՝ անհույս փչացնելով շատ տառատեսակներ, այդ թվում նաև հայկականը: Գրքի հրատարակումը հետաձգվեց մինչև 1922թ.: Շարածայուների օրինակները ստացած Ախունդովը գիտի այս պատմությունը, և դրանից նրա սուտն ավելի գարշելի է թվում:

Բայց, օգտվելով այն մտքից, թե Հ.Օրբելու հիշատակած աշխատության «միակ օրինակը» գտնվում է ադրբեջանցիների ձեռքում, Ադրբեջանի այսպես կոչված պատմաբանները սկսեցին առատ «մեջբերումներ» անել այդպես էլ լույս չտեսած գրքից՝ փորձելով աշխարհին ապացուցել, որ համաձայն հայ մեծ գիտնական Հ.Օրբելու՝ Գանձասարը ոչ թե հայկական, այլ աղվանական վանական համալիր է: Դե, իսկ քանի

որ Գանձասարը Արցախի հոգևոր կենտրոնն է, նման կերպ ադրբեջանցիները պնդում են նաև, որ հետևաբար ողջ Արցախը նույնպես աղվանական հող է։

Մեթոդաբանությունը պարզ էր՝ ադրբեջանցիները Հ.Օրբելու կողմից գրի առած Գանձասարի արձանագրություններում պարզապես բառեր էին ավելացնում կամ փոխում։ Օրինակ, «հայկական» բառի փոխարեն գրում էին «աղվանական» և այդ ամենը վերագրում մեծանուն հայ գիտնականին։ Հովսեփ Օրբելու «Գանձասարի և Հավոցպտուկի վիմագրությունները» աշխատությունից ադրբեջանցիները հրաժարվեցին միայն այն բանից հետո, երբ այդ աշխատության պատճենը հայտնվեց նաև Երևանում՝ «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար Լևոն Մելիք-Շահնազարյանի ձեռքում։ Վերջինիս «Խաբեբաների ակադեմիան»[16] հոդվածը լայն տարածում գտավ համացանցում և ստիպեց ադրբեջանցիներին դադարել շահարկել Հ.Օրբելու անունը։ Բայց փաստն այն է, որ մինչ այդ պահը նրանց գրած հոդվածներն ու գրքերը մինչ օրս շարունակում են շրջանառվել տեղեկատվական և քարոզչական հարթակներում։

Ներկայացված օրինակը ցույց է տալիս, թե պատմական կեղծարարության ինչ միջոցների են դիմում ադրբեջանցիները՝ հայկական պետությունների և հայ ժողովրդի դեմ ուղղված քարոզչական այս թեզին, թե, իբր, ՀՀ-ն ու Արցախը ստեղծվել են ադրբեջանական հողերի վրա, քիչ թե շատ հիմնավոր տեսք տալու համար։ Եվ ոչինչ, որ պատմության իրա-

[16] Л. Мелик-Шахназарян, О войне и победе, том 1, Ереван, 2015, стр. 438-451.

կան գիտակների համար աղվանականը վստահաբար չի նշանակում ադրբեջանական։ Դա նույնպես ադրբեջանցիների համար խնդիր չէ, քանի որ այնտեղի այսպես կոչված գիտնականների մի մեծ շերտ էլ զբաղված է այդ խնդրի լուծմամբ՝ փորձում են «ապացուցել», որ Աղվանքի ժողովուրդները հենց իրենք՝ ադրբեջանցիներն էին, որ կան։ Այս հարցին կանդրադառնանք հաջորդ ենթագլխում։

Իսկ հիմա փաստենք, որ հակառակորդի հորինած սուտն անընդհատ կրկնվում է Ադրբեջանի բոլոր մակարդակի գործիչների կողմից՝ սկսած լրագրողներից, ավարտած երկրի ղեկավար Իլհամ Ալիևով։ Եվ, ինչպես արդեն նշվեց, ադրբեջանական կողմը կարողանում է որոշակի հաջողությունների հասնել։ Համենայնդեպս՝ Արցախի Հանրապետության տարածքների զգալի մասը միջազգային հանրությունն այսօր ընկալում է որպես ադրբեջանական, և դա պայմանավորված չէ միայն միջազգային իրավունքում շատ ազդեցիկ ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում սահմանված պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքով։ Ցավոք, ո՛չ։ Ադրբեջանական քարոզչամեքենան աշխատում է և ամեն ինչ անում, որպեսզի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում քաղաքական և իրավական հիմքերից բացի՝ ուշադրություն դարձվի նաև պատմական արդարության իրենց ըմբռնումներին։ Իսկ թե ինչպիսին է ադրբեջանցիների պատկերացրած «պատմական արդարությունը», մենք տեսանք Հ.Օրբելու և Գանձասարի հետ կապված վերը ներկայացված օրինակով։

Նման օրինակներ շատ կան։ Պաշտոնական Բաքուն փորձում է ադրբեջանացնել Արցախի ողջ տարածքը և այդ գործում շեշտը դնում է գլխավորապես երկրամասի առավել մեծ ճանաչում ունեցող քաղաքների և հոգևոր կենտրոնների վրա։ Օրինակ՝ Շուշին։ 2014թ. Ռուսաստանի Հանրային խորհրդում մի քննարկում է եղել, որի ընթացքում ՌԴ-ում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան Փոլադ Բյուլբյուլ-օղլին սրտաճմլիկ և հոգեցունց ելույթով է հանդես եկել։ «Ես ինքս Ղարաբաղից եմ, Շուշիից։ Այնտեղ է իմ հոր գերեզմանը։ Ես ոչ մի անգամ չեմ կարողացել իմ 14-ամյա որդուն տանել իր պապի գերեզմանի մոտ։ Ձեր կարծիքով, դա նորմա՞լ է։ Դա հարյուր հազարավոր մարդկանց ողբերգությունն է։ Դրան պետք է վերջ տրվի, ադրբեջանցիները պետք է վերադառնան իրենց հայրենի հող»,- ասել է Փոլադ Բյուլբյուլօղլին[17]։ Եվ կրկին ոչինչ, որ ադրբեջանցի դիվանագետը լկտիաբար ստում էր։ Նրա հոր գերեզմանը գտնվում է ոչ թե Շուշիում, այլ Բաքվում՝ ադրբեջանցիների համար սրբավայր դարձած շեհիդների պատվո գերեզմանատանը։ Ինքը՝ դեսպանը, նույնպես ծնվել է Բաքվում և հետպատերազմյան շրջանում երկու անգամ եղել է Արցախում, այդ թվում նաև Շուշիում, որի հայկական ծագման, նախորդ դարերի հոգևոր-մշակութային ժառանգության մասին փոքրիկ վավերագրական ֆիլմ եմ հեղինակել և տեղադրել համացանցում[18]։

[17] Посол: Я ни разу не смог отвезти своего сына к могиле его деда, http://musavat.com/ru/news/posol-ya-ni-razu-ne-smog-otvezti-svoego-syna-k-mogile-ego-deda_221305.html
[18] Шуши. Возрождающаяся культура, 2017, https://youtu.be/RnQL88QsBFY

Ինչպես տեսնում ենք, հակահայկական քարոզչություն իրականացնելու գործում ադրբեջանական կողմի համար արգելք չեն ո՛չ սուտը և ո՛չ էլ բարոյականությունը։ Եվ դա իրողություն է, որի հետ պարտադիր պետք է հաշվի նստել։

2.3. Հայերը տարածաշրջանում եկվոր ժողովուրդ են

Նախորդ ենթագլխում ներկայացված քարոզչական թեզն ամրապնդելու, լրացուցիչ փաստարկներով հիմնավորելու նպատակով թուրք-ադրբեջանական դաշինքը տեղեկատվական դաշտ է նետել ևս մեկ քարոզչական թեզ, որի նպատակն է ապացուցել, թե, իբր, հայերը տարածաշրջանում բնիկ ժողովուրդ չեն, եկվոր են և չեն կարող հավակնել Թուրքիայի կամ Ադրբեջանի հողերին։

Քարոզչական այս թեզի որոշ առանձնահատկություններին արդեն անդրադարձել ենք նախորդ թեզը ներկայացնելու ընթացքում։ Բայց պետք է նշել, որ հայերի եկվոր լինելու գաղափարն ամրապնդելու և հնարավորինս շատ տարածելու նպատակով այդ թեզն արծարծող ուժերը բազում նյութեր են հրապարակել և շարունակում են հրապարակել։

Այս քարոզչական թեզի առաջխաղացման թուրք-ադրբեջանական մարտավարություններից մեկն էլ այն է, որ ակտիվ հողում է արվում նաև հայ հեղինակների աշխատանքներին, որոնք ներքաշվել են համացանցում մեծ տարածում գտած կեղծ գիտական մի քննարկման մեջ, որի նպատակը բացահայտելն է՝ արդյո՞ք հայերը կովկասյան ժողովուրդ են, թե՞ ոչ։

Գիտական գրականության մեջ, տարբեր հանդեսներում, ամսագրերում և համացանցում բազում են նյութերն այն մասին, որոնք հերքում են ներկայացվող հակահայկական այս քարոզչական թեզի ճշմարտացիությունն ու տրամաբանությունը: Բարեբախտաբար, որքան էլ քաղաքական լինեն ժամանակակից պատմագրության հիմքերը, այնուամենայնիվ, կան փաստեր, որոնք վիճարկվում են միայն բացարձակ տգետների կողմից: Եվ այն հանգամանքը, որ ադրբեջանցի կամ թուրք գործիչները փորձում են ապացուցել, թե, իբր, հայերն այս տարածաշրջանում եկվոր են, իսկ թյուրքական ժողովուրդները հազարամյակներով բնակվել են այստեղ, մշակույթ, կրոն ու քաղաքականություն ստեղծել, միայն իրենց է ծիծաղելի և անհարմար դրության մեջ դնում: Ուստի, այստեղ չենք ծանրանա հարցի գիտական կողմի վրա, որպեսզի, ըստ ռուսական ասացվածքի, ստիպված չլինենք հերթական անգամ ապացուցել, որ ուղտ չենք, այլ կներկայացնենք միայն հայերի՝ իբր թե եկվոր լինելու քարոզչական թեզի բաղկացուցիչ մասերը:

Այսպիսով, առավելապես ադրբեջանական, բայց նաև թուրքական պատմագրությունը նշում է, որ հայերն իրենց ներկայիս բնակության վայրեր են եկել Փոքր Ասիայից: Ոմանք պնդում են, թե դա տեղի է ունեցել մ.թ.ա VII դարում, երկրորդները վստահ են, որ հայերը Հարավային Կովկաս են եկել Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ընթացքում, մ.թ.ա. IV դարում, երրորդները՝ մեր ժողովրդի, այսպես կոչ-

ված, միգրացիան տեղափոխում են XVII-XVIII դարեր և կապում այդ «փաստը» ներիրանական զարգացումների հետ, որի արդյունքում, իբր թե, հայերը եկել և բնակություն են հաստատել Ադրբեջանի հողերում:

Որպես հայերի պատմական հայրենիք հակառակորդի պատմագրությունն առավելապես Միջագետքն է դիտարկում: Բայց այստեղ էլ կարծիքների միասնությունը խախտվում է ըստ նրա, թե Տիգրիսի և Եփրատի հատկապես որ վտակին էին ավելի մոտ ապրում հայերը: «Գիտական» այդ «բանավեճի» մասնակիցներից յուրաքանչյուրը փորձում է մեզ հնարավորինս հեռու տեղակայել Հայաստանի Հանրապետության ներկայիս սահմաններից:

Ըստ ադրբեջանցիների, հին հայերը վայրի ցեղեր էին, որոնք սերում էին փոյուգիացիներից, խեթերից կամ Միջագետքի այլ ժողովուրդներից: Պատմական այս հորինվածքի մեջ ադրբեջանցի մասնագետները ոչնչի առջև կանգ չեն առնում: Հայերի ծագումնաբանությունը հնարավորինս անհասկանալի, ավելի ճիշտ՝ վայրի դարձնելու համար նրանք անգամ այլ էթնոնիմներ են հորինել՝ նշելով, թե հայերը սերել են այդ վայրի ցեղերից և գալով Հայկական լեռնաշխարհ՝ ոչնչացրել են թյուրքական բարձր քաղաքակրթության հուշարձաններն ու հոգևոր-մշակութային արժեքները: Իսկ այն, ինչը պահպանվել է, օրինակ՝ վիշապաքարերը, ադրբեջանական պատմագրությունը բացատրում է այն հանգամանքով, թե, իբր, հայերը բավական ուշ են իմացել, որ «հին թյուրքերի ամառային արոտավայրերում՝ բարձր լեռներում, գոյություն

ունեին այդպիսի քարե հուշարձաններ։ Նրանք լավ չէին հասկանում այդ քարերի նշանակությունը։ Եվ երբ առաջին անգամ հայերը տեսել են այդ պաշտամունքի քարերը, նրանք երկար ժամանակ վախեցել են այդ քարե քանդակներից և դրա համար դրանց տվել են իրենց համար ամենավախենալի երևույթի անունը՝ վիշապ»[19]։

Ծիծաղելի նման իրավիճակում ադրբեջանցի գիտնականներն իրենց հաճախ են դնում։ Օրինակ՝ Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գովհար Բախշալիևան պնդում է, որ իրենք հայտնաբերել են հին քարտեզներ, որոնք ապացուցում են հայերի փուլային միգրացիան դեպի Կովկաս։ Սա, իհարկե, մի քիչ անսպասելի հայտարարություն էր, որովհետև համաշխարհային պատմագիտությանը հայտնի բոլոր հին քարտեզներում Հայաստանը մշտապես առկա է եղել հենց այն տարածքում, որը նույն համաշխարհային գիտությունը Հայկական լեռնաշխարհ է անվանում։ Բայց եկեք սկզբից լսենք Բախշալիևայի խոսքը. «Այդ քարտեզներն ուսումնասիրելիս կարելի է տեսնել, թե ինչպես են հայերը քայլ առ քայլ տեղափոխվել Կովկաս և Ադրբեջանի հողերի հաշվին իրենց համար նոր պետություն ստեղծել։ Հնում հայերն ապրում էին Տիգրիսի և Եփրատի միջագետքում։ Հետո նրանք հետզհետե սկսել են շարժվել դեպի հյուսիս և բնակվել ժամանակակից Թուրքիայի և Իրանի տարածքում։ Այնտեղից նրանք կամաց-կամաց տե-

[19] Армяне - пришлый народ на Южном Кавказе, https://news.day.az/politics/309419.html?fbclid=IwAR3IK2yKeJK25ZcS2N0NkyAm2T6okqEMjjIlBYqIMcMFX0PwNYLbhU4P_00

ղափոխվել են դեպի Հյուսիսային Կովկաս: Այս ճշմարտությունն ապացուցվում է գտնված հին քարտեզներում: Հայերն ադրբեջանական հողեր պահանջելու որևէ հիմք չունեն: Հակառակը՝ այդ մենք իրավունք ունենք նրանցից հողեր պահանջել, քանի որ այսօր նրանք ապրում են բնիկ ադրբեջանական հողերի վրա»: Վերջում Բախշալիևան ավելացրել է, որ «այդ քարտեզների հավաստիությունը չպիտի կասկածի տակ դրվի, քանի որ դրանք կազմվել են ոչ մեր կողմից»[20]:

Համաձայնեք՝ այս վերջին մտքի հետ դժվար է վիճել: Իսկապես, եթե մի բան ստեղծվել է ոչ ադրբեջանցիների կողմից, ապա հավանականությունը մեծ է, որ կեղծիքն այնտեղ կբացակայի: Ամբողջ խնդիրը պարզապես այն է, որ ադրբեջանցի պատմաբանները չեն խոսում, թե կոնկրետ ինչ քարտեզներ են գտել, որտեղ են գտել, ովքեր են դրանց հեղինակները և այլն: Ասում են՝ իբր դեռ ուսումնասիրում են: Եվ դա նրանց ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի փաստարկն է: Մեկնաբանությունները, կարծում եմ, ավելորդ են:

Հայերի՝ տարածաշրջանում եկվոր լինելու մասին թեզն ապացուցելու մեր հակառակորդների սիրելի մեթոդներից մեկը տարբեր պատմիչներից և գիտնականներից մեջբերումներն են: Ընթերցելով ժամանակակից թուրք և ադրբեջանցի հետազոտողների աշխատությունները՝ կարելի է գալ այն եզրակացության, թե նրանք տարիներով տարբեր գրքերում հակահայկական մեջբերումներ և ասույթներ են որոնել, իսկ հե-

[20] Доказано, что армяне на Кавказе пришлый народ, http://maxpark.com/community/2817/content/1411554

տռ, իրենց գործընկերների գործը հեշտացնելու համար, կայքեր ստեղծել, որտեղ այբբենական կարգով զետեղել են այդ մեջբերումները։

Խնդիրն այն է, որ ինչպես քարտեզներ կեղծելու և հորինելու, այնպես էլ այս պարագայում, մեր հակառակորդները սիրում են կեղծել։ Նրանց կողմից արված մեջբերումները հաճախ այս կամ այն պատմիչի՝ համատեքստից կտրած մտքեր են կամ անգամ պարզ հորինվածքներ։ Կարելի է կարծել, թե պատմության այդ կեղծարարների միակ հույսն իրենց լսարանի բացարձակ անգրագիտությունն է ու սկզբնաղբյուրները ստուգելու ցանկության բացակայությունը։ Իհարկե, այս երկու հույսն էլ կարող է արդարանալ, բայց ոչ միշտ։ Այսպես, հայկական Voskanapat.info կայքի հեղինակներից մեկը՝ Սեդրակ Սայասը, ադրբեջանցիների նման կեղծիքները բացահայտելու հոդվածների ամբողջ մի շարք է հրապարակել նշված կայքում, որտեղ մեկ առ մեկ բացահայտում է ադրբեջանցիների կեղծիքները՝ հղում կատարելով և մեջբերելով նույն այն աղբյուրները, որոնցից իբր թե օգտվել են ադրբեջանցիները։

Բայց անգամ Ս.Սայասի պես հետազոտողին միշտ չէ, որ հաջողվում է փաստարկված ապացուցել հակառակորդի կեղծարարությունը։ Ըստ էության, դա անհնար է, որովհետև ադրբեջանցիները հանգիստ կարող են հղում կատարել գոյություն չունեցող մարդկանց և աղբյուրների։ Դա նույնպես հաճախ հանդիպող պրակտիկա է։

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ ակնհայտ կեղծիքները քիչ օգուտ չեն տալիս հակահայկական քարոզչություն

իրականացնողների գործին: Գոնե քարոզչության ծավալները մեծացնելու հարցում նման մոտեցումը բավական արդյունավետ է: Համացանցն այսօր հեղեղված է ադրբեջանական և թուրքական նման կայքերով: Տեղեկատվական այդ աղբը հաշվարկված է այն մարդկանց համար, ովքեր կփորձեն որոնողական համակարգերի օգնությամբ ծանոթանալ Հայաստանի կամ Ադրբեջանի անցյալին: Հավանականությունը մեծ է, որ դրա արդյունքում նրանք կընկնեն պատմական կեղծիք պարունակող ահա այդ նյութերի վրա:

Եվս մեկ գործիք (որն օգտագործվում է հայերի՝ տարածաշրջանում եկվոր լինելու մասին կեղծ թեզն ապացուցելու համար) է տեղանունների և պատմական գործիչների անուններն ու ազգությունները փոխելը: Այսպես, նրանք հայ որոշ գիտնականների և մշակույթի գործիչների հռչակեցին աղվանական գործիչներ, հայկական եկեղեցիները և միայն հայկական մշակույթին հատուկ խաչքարերը՝ աղվանական մշակույթի նմուշներ, հայկական քաղաքներին ու գյուղերին տվեցին թյուրքական անուններ և այլն:

Պատմական գիտության թուրք «մասնագետները» տարբեր ժամանակներում ադրբեջանցիներին հռչակում էին մե՛րթ շումերների, մե՛րթ մարերի, մե՛րթ պարսիկների, մե՛րթ սկյութների, մե՛րթ աղվանների հետնորդներ: Քանի որ որոշ հայ գործիչներ բացահայտորեն շումերներ, պարսիկներ կամ սկյութներ չեն, շատ հարմար է նրանց վերագրել աղվանական ծագում, և քանի որ ադրբեջանցիների քոչվոր նախնիները ժամանակավորապես հաստատվել են հիմնականում

նախկին Աղվանքի տարածքում, կարելի է այդ գործիչներին աղվաններ հռչակել:

Գիտության և մշակույթի հայ գործիչներից «աղվանական մտավորականների ցուցակի» մեջ են հայտնվել հայկական իրականության այնպիսի հայտնի և նշանավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են պատմագիր Մովսես Կաղանկատվացին (VIIդ.), բանաստեղծ Դավթակ Քերթողը (VIIդ.), պատմագիր, եկեղեցական գործիչ Կիրակոս Գանձակեցին (1200/1202-1271), իրավագետ, առակագիր, հասարակական և եկեղեցական գործիչ Մխիթար Գոշը (1120-ական թթ.-1213) և ուրիշներ:

Մարդկության նորմալ մասի համար նշված անձնավորությունները հայկական միջավայրում ապրած, գործած, ստեղծագործած հայեր են: Դա արձանագրված է բազմալեզու հանրագիտարաններում, հայ, եվրոպացի, ռուս, իրանցի և այլազգի գիտնականների աշխատություններում:

Թուրք-ադրբեջանցի յուրացնողներին, կեղծարարներին, գիտության խարդախներին և գրագողներին (ինչպես, օրինակ՝ Զ.Բունիաթովին, Ֆ.Մամեդովային և այլոց) քննադատել են ոչ միայն հայ, այլև եվրոպացի, ռուս, ամերիկացի, իրանցի ուսումնասիրողներն ու գիտնականները: Սակայն դա չի խանգարում հայկական պետությունների և ընդհանրապես հայ ժողովրդի դեմ քարոզչություն իրականացնող պատմահենների՝ ժամանակ առ ժամանակ նոր կեղծարարություններով հանդես գալու մոլուցքին:

Ի դեպ, պետք է նշել, որ բնակավայրերի և աշխարհագրական տեղանունների փոփոխությանը, դրանց թյուրքականացման գործին մեծ աջակցություն է ցուցաբերում հենց ինքը՝ հայ հանրույթը, որը շատ հեշտ ընդունում է օտարածին անվանումները և, օրինակ, դարավոր Արտաշատը կոչում Ղամրլու, Գանձակը՝ Գյանջա և այլն։ Այս խնդիրը, սակայն, նույնպես գտնվում է ժամանակակից հայ գիտնականների ուշադրության կենտրոնում, որոնք հարցի առնչությամբ հանդես են եկել մի շարք հրապարակումներով[21]։

Հայերի՝ տարածաշրջանում եկվոր լինելու թեզը հաճախ շրջանառում է նաև վրացական գիտական հանրույթը։ Պատճառը հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանն է, որի հետ կապված՝ վրացիները վախեր ունեն։ Այստեղ մշտական լարվածություն կա երկու ժողովուրդների ներկայացուցիչների միջև, ինչից օգտվելով՝ վրաց ազգայնականները մշտապես խոսում են հայկական սեպարատիզմի մասին։

1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Ջավախքը միացվեց Ռուսական կայսրությանը։ 1830թ. Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Բասենի, Բաբերդի, Դերջանի և այլ գավառներից 7300 հայ ընտանիքներ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ գաղթեցին և բնակություն հաստատեցին Ախալցխայի, Ախալքալաքի և Ծալկայի (պատմական Գուգարքի Թռեղք գավառը) շրջակայ-

[21] Տես՛, օրինակ, Ռ.Մելքոնյան, Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականություն, http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=4177; Սահակյան Լ., Հայկական տեղանունների եղեռնը Թուրքիայում, Երկիր, 29.09.2009 և այլն։

քում՝ վերականգնելով ու հիմնադրելով ավելի քան 60 գյուղ և 50 եկեղեցի։ Ահա պատմական այս իրողությունն է, որ առիթ է տալիս վրացիներին խոսել հայկական միգրացիայի մասին։ Սակայն վրացական պատմագիտությունը շրջանցում է այն փաստը, որ Արևմտյան Հայաստանից մեր հայրենակիցների Ջավախք տեղափոխվելու պահին այնտեղ բնակվում էր արդեն հայերի 1716 ընտանիք (մոտ 10–11 հազ. շունչ), որոնք բնիկ ջավախեցիներ էին և մշտապես բնակվել են այդ տարածքներում։ Հայերից բացի, 1830թ. Ջավախքում կար մուսուլմանների 639 և վրացիների 179 ընտանիք[22]։

Բայց, ի տարբերություն թուրքերի և ադրբեջանցիների, այս հարցում վրացական կողմը խուսափում է ծայրահեղացված, առավել ևս ամբողջությամբ հորինված գնահատականներից ու պատմություններից։ Թբիլիսիի մտահոգությունը մեկն է՝ երկրի տարածքային ամբողջականությունը, և այդ խնդիրը լուծելու համար նրանք փորձում են ամեն կերպ ապացուցել, որ Ջավախքը, ի դեպ՝ նաև Տաշիրն ու Լոռին, վրացական հողեր են։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ներկայացված հակահայկական քարոզչական այս թեզը, որքան էլ առաջին հայացքից զուտ որպես պատմական ընկալվի, կոնկրետ և արդիական նշանակություն ունեցող քաղաքական խնդիրներ է հետապնդում։ Հայերի՝ տարածաշրջանում ոչ բնիկ ժողովուրդ լինելու մասին պատմական կեղծ թեզն այսօր էլ շարու-

[22] Արտյուշ Սանոսյան, Հայերը Ջավախքում, «Ուրբաթ», թիվ 19, 24 օգոստոս, 1990թ.։

նակում է զարգացվել և տարածվել մեր հակառակորդների կողմից: Ու չնայած հայ գիտնականները, փորձագետներն ու հեռազոտողները մշտապես արձագանքում և հերքում են պատմական այդ կեղծարարությունը, հանդես գալիս հոդվածներով, ելույթներով և այլն, միևնույն է, քանակական առումով հակառակորդը միշտ գերազանցում է մեզ, այն էլ՝ մի քանի անգամ:

2.4. Յեղասպանություն, ջարդեր և կոտորածներ

Հայ ժողովրդի հարաբերությունները մեր պատմական հայրենիք ներխուժած թյուրքական ցեղերի հետ, մեղմ ասած, չեն ստացվել: Եթե խոսելու լինենք այդ հարաբերությունների էության մասին, պետք է փաստենք, որ դա կոտորածների, ջարդերի, ավերածությունների և թալանի պատմություն է: Ընդ որում, նման հարաբերություններ թուրքերի հետ ստեղծվել են այն պայմաններում, երբ մինչև մեր տարածաշրջանում վերջիններիս հայտնվելը «էթնիկական զտումներ» հասկացությունը, անգամ երբ դրանց տրվում է ոճաբանական այլ ձևակերպում, հայ ժողովրդին օտար է եղել և անհասկանալի: Դրանից առաջ ո՛չ հայերն են կիրառել նման ռասայական, ազգայնական, կրոնական անհանդուրժողականության մեթոդներ այլոց հանդեպ, ո՛չ էլ հարևանները՝ հայերի կամ միմյանց նկատմամբ:

Հայրս՝ քաղաքագետ Լևոն Մելիք-Շահնազարյանը, մշտապես ուշադրություն էր հրավիրում այն փաստի վրա, որ

հայ ժողովրդի պատմության ընթացքում անխուսափելի պատերազմները կրել են տնտեսական և տարածքային բնույթ, ինչից բնակչությունն անմիջականորեն գրեթե չի տուժել: Պետությունների ռազմական հաջողություններն ու անհաջողությունները գյուղացիների և արհեստավորների կենցաղի վրա չեն անդրադարձել, նրանք միայն «փոխել են տիրոջը» և նախկին իշխանավորի փոխարեն տուրքը վճարել նորին: Մնացած հարցերում նրա կյանքը շարունակել է ընթանալ սովորական հունով:

Հակառակորդի նկատմամբ ազնվաբարո և հարգալից վերաբերմունքն օրգանապես բերել է նրան, որ Հայաստանում և հարակից երկրներում գյուղացիներն ու արհեստավորներն ազատված են եղել զինվորական պարտավորությունից: Այսօր արդեն դժվար է ասել, թե պատմական որ փուլում է դա տեղի ունեցել, բայց փաստը մնում է փաստ, որ անհիշելի ժամանակներից հայերի, պարսիկների, ասորիների, որոշակի չափով՝ նաև հույների և վրացիների բանակներում ծառայել են միայն ազնվական տոհմերի ներկայացուցիչների կրտսեր որդիները:

Ինչպես արդեն նշվեց, այլ են ստացվել հարաբերությունները թյուրքական ցեղերի հետ: Նրանք եղել են իրական թշնամիներ, որոնք չունենալով զութ և խղճահարություն՝ կոողոպտել ու ոչնչացրել են անպաշտպան բնակավայրերը: Այլ քաղաքակրթության ներկայացուցիչներ՝ այլ արժեքներով, այլ աշխարհայացքով:

Քոչվորների ասպատակությունները, տնտեսական առումով, բնիկներին բերել են անհամար, համարյա տարեբային աղետներ: Միաժամանակ, դրան ավելանում էին բազմաթիվ մարդկային զոհեր, ինչն ամեն մի ասպատակություն վերածում էր իսկական ողբերգության: Անգամ ամեաանմատչելի ամրոցները քոչվորների համար ոչինչ չէին նշանակում, նրանք պարզապես շրջանցում էին դրանք: Քոչվորները գալիս էին կողոպտելու և սպանելու, բայց ոչ երբեք կռվելու: Դա վաղուց էին հասկացել չինացիները, ովքեր քոչվոր թյուրքական ցեղերի «հարևանության» ամբողջ գծով պաշտպանական պատնեշ կառուցեցին:

Միամիտ կլիներ մտածել, թե հայերը կամ պարսիկները վատ զինվորներ էին: Համենայնդեպս, արիության և զենքին տիրապետելու ունակության մեջ նրանք չեն զիջել իրենց հայտնի ժողովուրդներից և ոչ մեկին: Իմ կարծիքով, խնդիրն այլ տեղ է թաքնված՝ մարտական գործողությունների վարման տարբեր եղանակի (և հասկացության) մեջ: Ինչպես արդեն ասվել է, հայկական բանակում ու նաև հարևանների բանակներում ծառայել են ազնվական տոհմերից սերածները, այն դեպքում, երբ քոչվորների մոտ զինվորներ են համարվել բոլորը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները: Եվ եթե եկվորների մեջ հայերը միայն զինված տղամարդկանց են ընկալել որպես թշնամիներ, ապա թյուրքերը՝ ընդհակառակը, թշնամիներ են համարել Հայաստանի բոլոր բնակիչներին: Եվ նրանց հետ վարվել են իրենց ընկալումով ռազմական փառքի

չափանիշներով, համաձայն որի՝ ամեն մի սպանություն, անկախ սեռից և զոհի հասակից, համարվել է սխրանք:

Հայ-թուրքական հարաբերությունների պատմական ահա այսպիսի անցյալը, ինչո՞ւ ոչ՝ նաև ներկան, հիմք են դարձել քարոզչական և հայեցակարգային մի շարք թեզերի ձևավորմանը, որոնք այսօր ակտիվ կիրառվում են մեր հակառակորդների կողմից տեղեկատվական դաշտի բոլոր տիրույթներում: Հիմնական խնդիրը, հանրահայտ է, վերաբերում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, ինչպես նաև հատուցման գործընթաց սկսելու հեռանկարին:

Այս հարցում Թուրքիայի ժխտողականության քաղաքականության հիմքերը դրվել են դեռևս կոտորածների նախօրեին, հենց Հայոց ցեղասպանության «ճարտարապետներից» մեկի՝ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից, որը թուրքական կառավարությանն էր ներկայացրել տեղահանության մասին տխրահռչակ օրենքի նախագիծը[23]:

Հիշատակված օրենքը Թուրքիայում ընդունվել է 1915թ. մայիսին, երբ երկրի ամբողջ տարածքում արդեն իրականացվում էր հայերի կոտորածը: Օրենքը վերնագրված էր հետևյալ կերպ՝ «Պատերազմական շրջանում կառավարական գործողությունների դեմ հանդես եկող անձանց նկատմամբ ռազմական իշխանությունների կողմից կիրառվելիք միջոցառումների մասին»: Ինչպես ճիշտ նկատել են քննարկվող խնդիրն ուսում-

[23] А.Авакян, Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999, с. 39.

նասիրող հետազոտողները, «օրենքի վերնագիրն արդեն իսկ խոսուն է, և դա ամենևին պատահական չէր, քանզի Թալեաթն ու երիտթուրքերը դեռ հանցագործության կատարման պահին գիտակցում էին հայերի զանգվածային ոչնչացման «օրինական» հիմնավորում ստեղծելու անհրաժեշտությունը»[24]:

Հետագա տարիներին, կախված նաև կոնկրետ պատմական ժամանակահատվածի քաղաքական իրողություններից, թուրքական քարոզչամեքենան կատարելագործել է Հայոց ցեղասպանության ժխտմանն ու նենգափոխմանն ուղղված քարոզչական թե՛ թեզերը և թե՛ միջոցները: Դա հատկապես նկատելի էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ միջազգային ատյաններում նախ դատապարտվեցին նացիստ հանցագործների գործողությունները (Նյուրնբերգյան դատավարություն), հետո Խորհրդային Միությունը Խորհրդային Հայաստանի և Վրաստանի անունից տարածքային պահանջներ ներկայացրեց Թուրքիային, իսկ ապա նաև ՄԱԿ-ում ընդունվեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Պաշտոնական Անկարայի համար Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրներն էլ ավելի սուր դարձան 1965 թվականից հետո, երբ աշխարհասփյուռ հայությունը նշեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը, որին հետևեց տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության

[24] Ա.Մարուքյան, Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները. Պատմա-բանասիրական հանդես, № 1, էջ 24-25:

ճանաչման և դատապարտման գործընթացը: Ահա այս բոլոր զարգացումներից հետո թուրքական պետությունն սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել այդ խնդրին՝ պետական մակարդակի բարձրացնելով Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման քաղաքականությունը:

Թուրքիայի կողմից մշակվեցին քարոզչական մի շարք թեզեր, որոնք աշխարհի բազում երկրներում ուղղվեցին այնտեղ ապաստան գտած մեր հայրենակիցների դեմ: Թուրք գիտնականները նախ պնդում էին, որ հայերը պատերազմի ընթացքում չէին ենթարկվում պետության օրինական պահանջներին, օգտվելով առիթից՝ ապստամբում էին Թուրքիայի կենտրոնական իշխանությունների դեմ: Հետո ասպարեզ բերվեց այն թեզը, համաձայն որի՝ Թուրքիայի տարածքում բնակվող հայերն Առաջին աշխարհամարտի ընթացքում տրվել են Ռուսաստանի և Անգլիայի սադրանքներին և դավաճանել իրենց բնակության երկրին: Սրան հաջորդեց այն միտքը, թե հայերը որևէ խնդիր չունեին Թուրքիայի տարածքում, բնականոն զարգանում էին իրենց բնակության վայրերում, բայց միջհամայնքային բախումների արդյունքում թշնամացան քրդերի ու թուրքերի հետ, որի արդյունքում տեղի ունեցած կոտորածներում տուժել են բոլոր երեք ժողովուրդները և այլն, և այլն:

Պետք է նշել նաև, որ Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական մարտավարությունը ենթադրում է նաև հայության դեմ մշակված այլ քարոզչական թեզերի կիրառում: Օրինակ՝ նախորդ ենթագլխում ներկայացված թեզը, համա-

ձայն որի՝ հայերը տարածաշրջանում եկվոր են։ Հասկանալի է, որ նման ձևով թուրքերը փորձում են չեզոքացնել Հայոց ցեղասպանության ամենագլխավոր հետևանքներից մեկը՝ հայրենազրկումը։ Հայտնի է, որ դա ծանրացուցիչ հանգամանք է մարդկության, տվյալ դեպքում՝ հայության դեմ ուղղված հանցագործության համար, քանզի հայերին ոչնչացնելու թուրքերի գլխավոր շարժառիթներից մեկը եղել է նրանց հայրենիքին տիրանալը։

Հայոց ցեղասպանության ժխտման և նենգափոխման թուրքական քաղաքականության պատմական թեզերը մանրամասն ուսումնասիրված են ոչ միայն հայ, այլև ցեղասպանությունների և մարդկության դեմ ուղղված այլ հանցանքների միջազգային ուսումնասիրողների կողմից։ Թեմային նվիրված բավական մեծ գիտական գրականություն կա, որը, սակայն, չի բացառում Թուրքիայի կողմից այդ կեղծ թեզերը կրկին ու կրկին շրջանառության մեջ դնելու և դրանք հնարավորինս կատարելագործելու պրակտիկան։

Բայց պատմական այդ թեզերի կողքին ի հայտ են եկել նաև քաղաքական մի շարք գնահատականներ և մոտեցումներ, որոնք նույնպես միտված են չեզոքացնելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հնարավոր հետևանքները Թուրքիայի համար։ Այսպես, պաշտոնական Անկարան մեծ ջանքեր է գործադրում՝ զարգացնելու համար այն միտքը, որ պատմական հարցերը պետք է թողնել պատմաբաններին։ «Պատմության գերին չդառնալու», «քաղաքական պրագմատիկ շահով առաջնորդվելու», «ապա-

գային նայելու» և նմանատիպ այլ՝ բառիս բուն իմաստով կարգախոսային ձևակերպումները վաղուց արդեն ամուր տեղ են գրավել թուրք դիվանագետների, փորձագետների և գիտնականների բառապաշարում։

Քաղաքական երկրորդ նման գործիքը, որը կիրառվում է Թուրքիայի իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կանխելու նպատակով, ճնշումն է բոլոր այն երկրների վրա, որոնք ընդունել կամ պատրաստվում են ընդունել Մեծ եղեռնի փաստը։ Նման պարագաներում պաշտոնական Անկարան, որպես կանոն, հետ է կանչում նման երկրներում ծառայող իրենց դեսպաններին, միջազգային ամենատարբեր հարթակներում խիստ դատապարտում այդ երկրների քաղաքականությունը, հնարավորության դեպքում՝ քաղաքական և տնտեսական պատժամիջոցներ կիրառում նրանց նկատմամբ։ Այսինքն՝ Թուրքիան հնարավոր և անհնար բոլոր միջոցներով փորձում է վստահեցնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո նման քայլի գնացած երկիրը լուրջ խնդիրներ է ունենալու իր հետ, իսկ հնարավորության պարագայում՝ նաև կյանքի է կոչում այդ սպառնալիքները։

Ցեղասպանության թեմատիկայի կարևորությունը միջազգային քաղաքական գործընթացներում մթագնելու նպատակով, Թուրքիայի իշխանությունները հաճախ դիմում են մեկ այլ հնարքի, որի հիմքում տեղեկատվական/քարոզչական գործունեությունն է։ Նրանք պարզապես փորձում են շեղել միջազգային հանրության ուշադրությունը Հայոց ցեղասպանու-

թյան խնդրից։ Պարզունակ հնարք, որը հաճախ աշխատում է և որի ամենավառ օրինակին ականատես եղանք 2015թ. ապրիլին։ Հիշեցնեմ, Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել 60 երկրների պաշտոնական պատվիրակություններ, որոնցից 4-ը՝ նախագահի մակարդակով։ Այդ օրը հայ ժողովրդի կողքին էին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը և Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը։ Հայաստան ժամանած բարձրաստիճան պատվիրակություններն ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում հարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին։ Ոգեկոչման արարողությանը զուգընթաց Թուրքիայում նշվում էր Դարդանելի օպերացիայի ընթացքում տեղի ունեցած Գալիպոլիի ճակատամարտի տարելիցը՝ կրկին արտասահմանից ժամանած մի շարք երկրների պատվիրակությունների մասնակցությամբ։ Համաշխարհային լրատվամիջոցներն այս երկու իրադարձությունները լուսաբանեցին գրեթե հավասարապես, միմյանց զուգահեռ։

Գոյություն ունի քաղաքական ևս մեկ գործիք, որի օգնությամբ թուրքական կողմը փորձում է խուսափել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից։ Դա «ցեղասպանություն» հասկացությանը տարատեսակ մեկնաբանություններ տալու միջոցով այդ երևույթի արժեզրկումն է։ Օրինակ՝ այնպիսի միջադեպերի է «ցեղասպանություն» անունը տրվում, դիցուք՝ որևէ բախում, հանցագործություն և

աղետ, որոնք անգամ մեծ ցանկության պարագայում հնարավոր չի լինի այդպես կոչել:

Բայց Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման և հատուցման համար հայերի արդարացի պայքարին ընդդիմանելու թուրքական գործոնի ամենաանպատկառ մեթոդը հենց հայերին ցեղասպանություն իրականացնելու մեջ մեղադրելն է: Այս հարցում պաշտոնական Անկարային չափազանց մեծ ծառայություններ են մատուցում իրենց ադրբեջանցի եղբայրները, որոնք հայերին մեղադրելու համար այսպես կոչված ցեղասպանությունների մի շարք են հորինել և ամեն տեղ բարձրաձայնում են «հայկական ոճրագործության» մասին:

1998թ. մարտի 26-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հրամանագրով մարտի 31-ը հաստատվել է ադրբեջանցիների ցեղասպանության օր: Արդեն 20 տարի շարունակ այդ օրն Ադրբեջանում և այլ երկրներում, որտեղ ադրբեջանցիներ են բնակվում, տարբեր միջոցառումներ են տեղի ունենում, որոնց ընթացքում վերջիններս աշխարհին պատմում են հայերի «վայրագությունների» մասին, որոնք իբր թե տեղի են ունեցել 1918թ. մարտի վերջին Բաքվում: Հ.Ալիևի հրամանագրի մեջ նշված է, որ «ադրբեջանցիները բազմիցս ցեղասպանության են ենթարկվել»: Իր ժողովրդի ողբերգությունների սկիզբն Ադրբեջանի նախկին նախագահը համարել է 1813 և 1828թթ. ստորագրված Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը, որոնք, նրա խոսքերի համաձայն, ադրբեջանցի ժողովրդի մասնատման և իրենց հողերն այլոց միջև կիսելու գործընթաց-

ների մեկնարկն են տվել: Մենք հիմա զերծ կմնանք պատմագիտական տեսակետից այս թեզերի ստերը բացահայտելուց, քանզի, կարծում ենք, պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ընթերցող հասկանում է Ալիևի խոսքերի անհեթեթության աստիճանը: Բայց հարցն այդ չէ: Պարզապես ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել Հեյդար Ալիևի հարուստ ֆանտազիայի վրա, որը պնդում էր, թե արդեն այն ժամանակներից հայերը, որոնք փոքրամասնություն էին տարածաշրջանում, «իրենց հովանավորների աջակցությամբ հասել են, այսպես կոչված, Հայկական գավառի կեղծ վարչական միավորի ստեղծմանը», ինչը հնարավորություն է տվել նրանց «իրականացնել ադրբեջանցիներին իրենց հողերից քշելու և ոչնչացնելու քաղաքականություն»[25]:

Ալիևի կողմից այդ հրամանագիրը ստորագրելու հաջորդ օրն ադրբեջանցիներին հասցեագրված իր ուղերձում վերջինս զարգացրել է ադրբեջանցիների պարբերաբար ցեղասպանության ենթարկվելու միտքը և ասել, որ կոտորածներ են տեղի ունեցել նաև 1905-1907թթ. ՀՀ ներկայիս տարածքում, հետո 1918-ին՝ Բաքվում, ապա 1920-ականների սկզբին՝ Զանգեզուրում, հետո՝ 1948-1953թթ. ադրբեջանցիների տեղահանություն ՀԽՍՀ տարածքից, և այսպես շարունակ, մինչև 1992թ. փետրվար, երբ, ըստ Հեյդար Ալիևի, հայերը ոչնչացրել են Խոջալուի բնակչությունը[26]:

[25] Указ Президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев, 26.03.1998г., http://www.azerbaycanli.org/ru/page131.html

[26] Обращение Президента Азербайджанской Республики Гейдара Алиева к азербайджанскому народу в связи с 31 марта — Днём геноцида азербайджанцев, Баку, 27 марта 2003 года, http://library.aliyev-heritage.org/print.php?lang=ru&page=2729622

Խոջալուի այսպես կոչված «ցեղասպանությունը» հայկական հանրությանն արդի ժամանակներում ուղղված թուրք-ադրբեջանական ամենածանր մեղադրանքն է: Հիշեցնենք՝ 1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանական ուժերը և իրավապահ մարմինները ԼՂՀ տարածքում գտնվող Խոջալու ավանում զինված խմբերի չեզոքացմանը և ոչնչացմանն ուղղված փայլուն գործողություն իրականացրին: Դա երիտասարդ պետության կենսունակության, իր քաղաքացիների խաղաղ և անվտանգ կյանքն ապահովելու պատրաստականության առաջին լուրջ հաստատումներից մեկն էր: Ցավոք, բուն գործողություններից հետո այդ ժամանակ ադրբեջանցիներով բնակեցված քաղաքի՝ Աղդամի (այժմ Ակնա) արվարձաններում սպանվեցին մեծ թվով քաղաքացիական անձինք: Նրանք, ում ԼՂՀ Պաշտպանության բանակը հնարավորություն էր տվել լքել մարտական գործողությունների գոտին:

Աղդամի ողբերգությունը ծրագրվել էր ադրբեջանական կողմից, և դրանում կասկած չի կարող լինել: Այդ մասին բազում փաստեր կան, որոնք հրապարակվել են հայ հետազոտողների կողմից թե՛ գրքերի[27], թե՛ փաստավավերագրական ֆիլմերի[28] և թե՛ համացանցային կայքերի[29] տեսքով:

Հակիրճ ներկայացնենք Աղդամի (Ակնա) ողբերգության պատճառները, ինչն ադրբեջանական կողմը փորձում է աշ-

[27] Левон Мелик-Шахназарян, Гайк Демоян, “Ходжалинское дело: Особая папка”, Ереван, 2002.

[28] Между голодом и огнем. Власть ценою жизней, https://youtu.be/kvzfp9nb-VU

[29] http://xocali.net/

խարհին մատուցել իբրև ադրբեջանցիների ցեղասպանություն: Արցախի ինքնիշխան հանրապետության տարածքում բույն էին հյուսել օտար, բացահայտ թշնամի պետության ահաբեկչական խմբավորումներ: Ավազակախմբերն ամեն օր ռմբակոծում էին հանրապետության բնակավայրերը, առևանգում մարդկանց, վնասում ջրագծերը, փակում սննդամթերքի, դեղորայքի համար դեպի քաղաք տանող ճանապարհները, արգելափակման մեջ պահում միակ պետական օդանավակայանը: Ի՞նչ պետք է աներ նման իրավիճակում պետությունը: Ճիշտ է, պետք է ոչնչացներ ավազակներին և ապահովեր բնակչության խաղաղ կյանքը: 1992թ. փետրվարի 25-ին Արցախի Հանրապետությունը նախաձեռնեց իրավիճակին համարժեք քայլեր՝ ահաբեկչական զինված խմբավորումները ոչնչացնելու համար: Գրոշ արժե այն պետությունը, որն ունակ չէ պաշտպանել իր քաղաքացիներին:

Այսօր ադրբեջանական պետության քարոզչության ջանքերով հրոսակներին ոչնչացնելու փայլուն օպերացիան աշխարհին մատուցվում է որպես ավանի խաղաղ բնակիչների ոչնչացման ակտ: Այդ քարոզչությունում շատ են կեղծիքներն ու նենգափոխումները, հորինված դրվագները, կեղծված լուսանկարները: Միաժամանակ, արդար լինենք. որոշակի թվով խաղաղ բնակչության զոհվելու փաստն անհերքելի է: Սակայն Բաքվում նույնիսկ չեն փորձում հետաքննել մարդկանց մահվան պատճառները՝ ապրիորի այդ հանցագործության մեջ մեղադրելով արցախցիներին:

Մինչդեռ, տվյալ հանցագործության օբյեկտիվ հետա-

քննությունն արագ պարզում է ճշմատությունը և անգամ սպառնում պայթեցնել Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը, քանի որ խոջալվեցիներին սպանել են հենց ադրբեջանական խմբավորումները: Իսկ հետո, հայկական կողմին հանցագործությունների մեջ մեղադրելու նպատակով, պղծել սեփական հայրենակիցների դիակները: Ընդ որում, տարածքը, որտեղ հայտնաբերվել էին զոհերը, վերահսկվում էր Ադրբեջանի ռազմական խոշոր միավորների կողմից: Հենց դրանից էլ վախենում են Բաքվում, քանի որ այնտեղ նախապատվությունը տալիս են մերկապարանոց և հիստերիկ ճիչերին, որոնք խլացնում են տրամաբանությունն ու բանականությունը: Դրա համար էլ այնտեղ գրում են «Խոջալուի ցեղասպանության մասին», թեև հիանալի գիտեն, որ խոջալվեցիները զոհվել են Աղդամի մատույցներում:

Այն մասին, թե ինչպես և երբ է քաղաքի բնակչությունը նախազգուշացվել Խոջալուում արմատներ գցած ահաբեկիչների ոչնչացման գործողությունների մասին, շատ է գրվել: Ահա միայն մեկ վկայություն, որը տվել է Խոջալուի բնակչուհին *Helsinki Watch*-ին 1992թ. ապրիլի 28-ին. «Հայերը վերջնագիր առաջ քաշեցին… որ Խոջալուի բնակչության համար ավելի լավ կլինի սպիտակ դրոշով լքեն քաղաքը: Ալիֆ Հաջիևը (Խոջալուում խրամատավորված ավազակախմբերի ղեկավարը՝ Հ.Մ.-Շ) այդ մասին մեզ տեղեկացրեց փետրվարի 15-ին» (այսինքն՝ քաղաքում տեղակայված կրակակետերը ոչնչացնելուց տասն օր առաջ՝ Հ.Մ.-Շ)[30]:

[30] T.Goltz, Azerbaijan: Reguiem for a would-be Republik, ISIS, Istanbul, 1995.

Աղդամի ողբերգության պատմությունն ուսումնասիրողների ուշադրությունը կենտրոնացել էր նաև Աղդամի արվարձանների վրա, որտեղ տեղի էր ունեցել ողբերգությունը: Այդ տարածքները մինչև 1993թ. ամառը վերահսկվում էին ադրբեջանական զինյալների կողմից: Անկասկած է նաև այն փաստը, որ ավանի բնակչությանը մարտական գործողությունների գոտուց դուրս գալու համար տրամադրվել էր մարդասիրական անվտանգ միջանցք: Միով բանիվ, ադրբեջանական կողմը հայերին մեղադրելու որևէ հիմք չունի: Չնայած դրան, սակայն, թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան ջանք ու եռանդ չի խնայում քաղաքական այդ առասպելը տարածելու, աշխարհին ներկայացնելու համար: Նպատակը պարզ է՝ մեկ ցեղասպանությունը հավասարակշռել մեկ այլ ոճրով: Եվ կարևոր չէ, որ համադրելու ոչինչ չկա: Ժամանակակից իրողություններում տեղեկատվական աղմուկը հաճախ է վճռական նշանակություն ունենում: Բացի այդ, մեծ պետությունների շահերը միշտ ավելի հեշտ է պաշտպանել, քան փոքրերինը: Աշխարհի ոչ բոլոր երկրներն են պատրաստ զոհաբերել իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ հանուն պատմական արդարության: Մանավանդ երբ այդ արդարությունը որոշակի պահանջներ է դնում նաև նրանց առջև:

Ինչևէ, վերադառնալով կոտորածներ և ցեղասպանություններ իրականացնելու մեջ հայերին ուղղված մեղադրանքների թուրք-ադրբեջանական քարոզչական թեզի նպատակներին՝ նշենք, որ այդ կերպ պաշտոնական Անկարան և Բաքուն միայն պատմական պատասխանատվությունից խու-

սափելու փորձ չէ, որ անում են։ Կա երկրորդ կարևոր նպատակը ևս՝ ձերբազատվել հայկական հարցի՝ որպես Թուրքիայի վրա քաղաքական ճնշման, նրա ակտիվությունը հարևան տարածաշրջաններում զսպող գործոնի։

Այս երկրորդ խնդիրը լուծելու համար Թուրքիայի իշխանություններն անգամ զոհողությունների են պատրաստ։ Այսպես, 2008թ. պաշտոնական Անկարան համաձայնեց առաջնորդվել հայկական կողմի մշակած օրակարգով և ստորագրել Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու մասին փաստաթղթեր, որոնք առավել հայտնի են որպես Ցյուրիխյան արձանագրություններ։ Դրանով Թուրքիան հույս ուներ ձերբազատվել Հայկական հարցից՝ որպես իր վրա ճնշման գործիքից, բայց երբ հասկացավ, որ ո՛չ Արևմուտքը, ո՛չ Ռուսաստանը և, առավել ևս, ո՛չ էլ Հայաստանն այդ հարցը տարածաշրջանային քաղաքականության օրակարգից հանելու միտք անգամ չունեն, հրաժարվեց իր իսկ ստորագրած արձանագրություններից։

2009թ. հայ-թուրքական արձանագրությունները ստորագրելուց գրեթե անմիջապես հետո Թուրքիայի իշխանություններն սկսեցին հանդես գալ բանակցված և համաձայնեցված փաստաթղթի ոգուն հակասող հայտարարություններով։ Արդեն այն փաստը, որ Ցյուրիխյան արձանագրությունները չուղարկվեցին Թուրքիայի խորհրդարան վավերացվելու, վկայում էր այն մասին, որ պաշտոնական Անկարան փոխել է ձեռք բերված պայմանավորվածությունների մասին իր դիրքորոշումը։

Որպես պատճառ ներկայացվում էր Ադրբեջանի իշխանությունների և թուրքական երկու պետությունների քաղաքացիների դժգոհությունը։ Թուրքիայի իշխանությունները սկսեցին խոսել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և արցախյան հակամարտության կարգավորման երկու գործընթացների փոխկապակցվածության մասին։ Անկարայից հնչող ուղերձը չափազանց պարզ էր՝ Արցախի հարցում Հայաստանը պետք է կատարեր Ադրբեջանի բոլոր պահանջները, որից հետո միայն Թուրքիան կվավերացներ Ցյուրիխյան արձանագրությունները։

Միջազգային վերլուծական կենտրոններն ու փորձագիտական շրջանակները, սակայն, դեռևս 2010թ. էին նկատել, որ արձանագրություններից հրաժարվելու Թուրքիայի ցանկության իրական պատճառն Ադրբեջանն ու ղարաբաղյան հակամարտությունը չէին։ Այս երկու հարցերն ավելի շուտ որպես պատրվակ էին ընկալվում՝ կոծկելու համար իրական այն պատճառը, որը հետ էր պահում Թուրքիային Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու գործընթացից։

Իսկ իրական խնդիրը Հայկական հարցն էր։ Ավելի ճիշտ՝ դրանից ձերբազատվելու պաշտոնական Անկարայի ցանկությունը։ Ինչպես արդեն նշվեց, Թուրքիայում ենթադրում էին, որ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու արդյունքում հնարավոր կլինի մոռացության մատնել Հայոց ցեղասպանության հարցը։ Այս խնդրի նշանակությունը Թուրքիայի համար ավելի էր մեծացել՝ ելնելով երկու հանգամանքից. նախ, որովհետև մոտենում էր Ցեղասպանության

100-րդ տարելիցը, և երկրորդ՝ որովհետև արևմտյան երկրները հետզհետե ավելի հաճախ էին օգտագործում Ցեղասպանության փաստը Թուրքիայի արտաքին ակտիվությունը զսպելու համար։ Այդպես, օրինակ, Թուրքիան զրկվեց Եվրոպական միությանն անդամակցելու հնարավորությունից, քանզի Բրյուսելը որպես այդ գործընթացի ավարտի նախապայման պահանջում էր պաշտոնական Անկարայից ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը։

Թուրքիայի իշխանությունները հրաժարվեցին վավերացնել Ցյուրիխյան արձանագրությունները ճիշտ այն պահին, երբ հասկացան, որ Հայկական հարցը՝ որպես քաղաքական գործոն, շարունակելու է գոյություն ունենալ Թուրքիայի հետ այլ պետությունների հարաբերություններում։ Հաջորդ քայլով պաշտոնական Անկարան կրկին վերադարձավ Հայոց ցեղասպանության ժխտմանն ու նենգափոխմանն ուղղված իր արդեն մշակված և կյանքի կոչվող քաղաքականության ակտիվացմանը՝ նոր թափ հաղորդելով հայ-թուրքական տեղեկատվական և քարոզչական հակամարտությանը։

2.5. Հայերը խոչընդոտում են տարածաշրջանի խաղաղ զարգացմանը

Հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված հաջորդ քարոզչական թեզը պնդում է, որե Հայաստանն ու աշխարհասփյուռ հայ ժողովուրդն ագրեսիվ քաղաքականություն են իրականացնում տարածաշրջանում՝ սպառնալով հարևան երկրներին։ Քարոզչական այս թեզի հիմքում հայու-

թյան դեմ գործող ուժերն առավելապես քաղաքական մոտեցումներ են դնում: Հետապնդվող խնդիրը խիստ բացահայտ է՝ Հայաստանը բացասական լույսի ներքո ներկայացնել միջազգային հանրությանը՝ փորձելով զուգահեռաբար հասնել մեր երկրի մեկուսացմանը տարածաշրջանային քաղաքական, տնտեսական և ինտեգրացիոն բոլոր նախագծերից:

Հայկական պետությունների դեմ ուղղված քարոզչական այս թեզի առաջամարտիկը, անկասկած, Ադրբեջանի կառավարությունն է: Պաշտոնական Բաքվի տեղեկատվական-քարոզչական քաղաքականության այդ ուղղությանն աջակցում են նաև Թուրքիայի իրենց գործընկերները, բայց ոչ միայն նրանք: Թուրք-ադրբեջանական դաշինքի ջանքերով հայկական պետությունների դեմ իրականացվող այդ քարոզչությանը ժամանակ առ ժամանակ միանում են այլ երկրներ ևս՝ Վրաստանը, Պակիստանը, Իսլամական համագործակցության կազմակերպության որոշ անդամներ:

Գլխավոր խնդիրը, որը հետապնդում է ադրբեջանական կողմն այս թեզն առաջ տանելիս, ղարաբաղյան հակամարտությունն է: Ադրբեջանի դիվանագետները, հասարակական ու պետական գործիչներն ամենուրեք պնդում են, որ Հայաստանը գրավել է իրենց երկրի 20%-ը, «հայկական ագրեսիայի» հետևանքով ավելի քան մեկ միլիոն ադրբեջանցիներ զրկվել են իրենց տներից և ունեցվածքից, հակամարտությունը խոչընդոտում է Հարավային Կովկասի բնականոն զարգացմանը, տրանսպորտային ու հաղորդակցման այլ ուղիների գործունեությանն ու տնտեսական ծրագրերի իրականացմանը: Ան-

գիր արված այս տեքստերը հնչում են ամենուր՝ սկսած ադրբեջանցիների մասնակցությամբ հասարակական տարբեր կազմակերպությունների հանդիպումներից, ավարտած ՄԱԿ բարձր ամբիոնով:

Ադրբեջանցիների այս քարոզին միացած վրացական կողմն ուշադրության կենտրոնում առավելապես Վրաստանի և Աբխազիայի տարածքում բնակվող հայությանն է պահում: Պաշտոնական մակարդակով Թբիլիսին երբևէ նման մեղադրանք չի ներկայացրել Հայաստանի Հանրապետությանը: Բայց «հայկական սեպարատիզմի» կամ աբխազահայության «Բաղրամյան» ջոկատի մասին զրույցները մշտապես առկա են Վրաստանի թե՛ պաշտոնական և թե՛ հասարակական-քաղաքական բառապաշարում:

Հայկական այսպես կոչված ագրեսիվ քաղաքականության հետ կապված Վրաստանի հաջորդ բողոքը կապված է Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գործունեության հետ: Երկու ժողովուրդների եկեղեցական հակամարտությունը բազում բախումների պատճառ է դարձել: Վրաց Ուղղափառ եկեղեցու պահանջով պաշտոնական Թբիլիսին հրաժարվում է իր երկրի տարածքում գործող ՀԱԵ Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ տալ: Ի հակակշիռ Վրաստանի տարածքում առկա հայկական եկեղեցիների հանդեպ մեր ունեցած պահանջատիրության, վրացական եկեղեցին վրացական է հայտարարել Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերում գտնվող մի քանի եկեղեցիներ և այդ տարածքում Վրաց եկեղեցու Սինոդը 2006թ. անգամ Տաշիր-Ագարակ ան-

վամբ թեմ է հաստատել: Ընդ որում, դա արվել է առանց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին տեղեկացնելու, ինչն էլ ավելի է խորացրել հոգևոր ասպարեզում հայ-վրացական հարաբերություններում առկա կնճիռը[31]:

Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ առկա հակամարտությունների փաստի հետ կապված՝ Վրաստանի իշխանությունները հաճախ աջակցություն են ցուցաբերում նաև տարբեր միջազգային կառույցներում Ադրբեջանի կողմից ներկայացված հակահայկական բանաձևերին, որոնք վերաբերում են ղարաբաղյան խնդրի կարգավորմանը: Նման հարցերում հայկական կողմը, որպես կանոն, իր քաղաքականության մեջ ավելի ուշադիր է եղել հարևան Վրաստանի շահերի հանդեպ: Այսպես, պաշտոնական Երևանը, չնայած իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնության ձգտումներին ու ցանկություններին, մինչ օրս չի ճանաչել Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը: Մինչդեռ դա կարող էր լավ նախադեպ դառնալ նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման համար:

Հայ-վրացական հարաբերություններում նման խնդիրներ, ցավոք, էլի կան: Բայց մինչ օրս երկու պետությունների ղեկավարներին հաջողվել է վերահսկողության տակ պահել դրանց ընթացքը՝ խուսափելու համար հնարավոր տհաճ զարգացումներից: Ողջ խնդիրն այն է, որ վրաց հանրության

[31] Վրաց Ուղղափառ եկեղեցու սինոդը Տաշիր-Ագարակ անունով նոր թեմ է հռչակել՝ առանց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին տեղեկացնելու, Արմենպրես, 09.03.2006թ., https://armenpress.am/arm/news/424749/vrac-uxxapar-ekexecu-sinody-tashir-agarak-anunov-nor.html

շրջանում հայերի հետ կապված որոշակի վախեր կան, որոնց ուղղությամբ, կարծես կրակի վրա յուղ ավելացնելով, ակտիվ աշխատում է նաև թուրք-ադրբեջանական դաշինքը։

Հայերի ագրեսիվ լինելու մասին քարոզչական թեզն էլ ավելի համոզիչ դարձնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները փորձում են, իբր թե ի հակակշիռ Հայաստանի պետական քաղաքականության, ներկայանալ որպես խաղաղություն փնտրող կողմ։ Այսպես, տարիներ շարունակ Իլհամ Ալիևի վարչակազմը պնդում էր, թե իրենք ամեն պահ կարող են ռազմական ճանապարհով հօգուտ իրենց լուծել խնդիրը, բայց չեն գնում այդ քայլին, քանի որ չեն ցանկանում վնասել բանակցային գործընթացին և հակամարտության կարգավորման խաղաղ հեռանկարներին։ Իսկ որ այդ նույն ընթացքում Ադրբեջանի իշխանությունները կրթում էին հայերի հանդեպ ատելությամբ լցվող հաջորդ սերնդին[32] ու պատրաստվում նոր պատերազմի (2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ հարձակման են անցել ադրբեջանա-արցախյան պետական սահմանի ողջ երկայնքով։ Պատերազմը տևել է չորս օր, ավարտվել ադրբեջանցիների կատարյալ ձախողմամբ), ցավոք, քչերն էին նկատում։

2018թ. գարնանը սոցիալական ցանցերում տարածվեց մի տեսանյութ, որտեղ երևում է, թե ինչպես է Ադրբեջանի դպրոցներից մեկում ուսուցչուհին աշակերտներին պատմում այսպես կոչված Խոջալուի ցեղասպանության մասին։ Նա սո-

[32] А.Адибекян, А.Элибегова, Армянофобия в Азербайджане, Ереван, 2013; AzeriChild.info

վորեցնում է իր աշակերտներին, որոնք, ըստ երևույթին, երկրորդ կամ երրորդ դասարանում են սովորում, որ հայերն ադրբեջանցիների թշնամիներն են, որ մենք գրավել ենք Ադրբեջանի տարածքների 20%-ը, որ գիշերով հարձակվել ենք Խոջալուի վրա և այլն, և այլն: Երեխաների մի մասը զարմացած լսում, իսկ մեկ-երկուսն էլ փորձում են ցույց տալ ուսուցչուհուն, որ արդեն գիտեն, թե ինչ վատն են հայերը, թե ինչպես են նրանք սպանել Ադրբեջանի բոլոր զինվորներին և այլն: Բավական տհաճ տեսարան, որը հուշում է ընդամենը մեկ բան՝ ադրբեջանցիները հայերի հանդեպ թշնամանքը որպես ժառանգություն փոխանցում են իրենց հաջորդ սերնդին: Եվ սա արդեն խնդիր է, որը, ցավոք սրտի, բաժին է հասնելու մեր երեխաներին: Իհարկե, ոչ մեր մեղքով: Բայց հասնելու է նրանց: Եվ նրանք էլ են ստիպված լինելու կանգնել Ադրբեջանի հետ սահմանին ու զենքը ձեռքին պաշտպանել արդեն իրենց երեխաներին:

Այո, Ադրբեջանում այսօր դաստիարակվում է հայատյացների հաջորդ սերունդը: Եվ դա մեկ կամ երկու, ոչ էլ մի քանի տասնյակ ուսուցիչների անձնական նախաձեռնություն չէ: Դա պետական քաղաքականություն է, որը հասել է մանկապարտեզներ, դպրոցներ, համալսարաններ: Այդպիսին են Ադրբեջանի ժամանակակից հեքիաթները, մուլտֆիլմերը, երազանքներն ու ձգտումները: Եվ կարևոր է, որպեսզի մենք դա լավ իմանանք: Իմանանք և ուրիշներին էլ պատմենք:

Հայերի իբր թե ագրեսիվ քաղաքականությանը հակադրվելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները ձեռնա-

մուխ եղան ակնհայտորեն կեղծ խաղաղասիրական ծրագրերի իրականացմանը: Պաշտոնական Բաքվի այդպիսի նախագծերից մեկը տխրահռչակ «Խաղաղության հարթակն» է, որը ստեղծվել է Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից և որին անդամակցել են Հայաստանից Ադրբեջան գնացած ծագումով հայ մի քանի քաղաքացիներ: Երկար ժամանակ այս կառույցի առաջխաղացման արդյունքում ադրբեջանցիները կորցրել են վերահսկողությունը դրա հիմնադիր անդամներից մեկի՝ Հայաստանից Ադրբեջան մեկնած Վահան Մարտիրոսյանի նկատմամբ, որի հետ առաջացած ֆինանսական վեճերի պատճառով վերջինս Ուկրաինայից բացահայտեց «Խաղաղության հարթակի» էությունը: Facebook սոցիալական ցանցի իր էջում Վահան Մարտիրոսյանը պատմել է իր՝ Ադրբեջան տեղափոխվելու պատմությունը, «Խաղաղության հարթակ» ստեղծելու գործընթացը, այնտեղ ներգրավված մարդկանց ով լինելը և այլն: Նրա բացահայտումներից հետո ադրբեջանական կողմը երկար ժամանակ ստիպված էր փաստացի դադարեցնել այդ հարթակի գործունեությունը:

Այսպես կոչված «Խաղաղության հարթակի» խայտառակ տապալումից հետո, թվում էր, ադրբեջանական քարոզչամեքենան պետք է որ ավելի խելացի ծրագրեր մշակեր: Բայց, երևում է, համապատասխան գործով զբաղվող ադրբեջանցի չինովնիկները երևակայության հետ խնդիրներ ունեն: Կամ էլ պարզապես ափսոսել են ֆինանսական այն միջոցները, որոնք ներդրվել են այդ հարթակի հանրայնացման և ճանաչելի դարձնելու գործում: Չգիտես ինչու, Բաքվում որոշել են,

որ արդեն իսկ տապալված պլատֆորմին քաղաքացիական նախաձեռնության տեսք տալու և այնտեղ ներգրավված անձանց զուտ մեխանիկական փոփոխությամբ հնարավոր կլինի երկրորդ շունչ տալ մի կառույցի, որի գոյությունն արդեն անբնական է և հակասող առկա քաղաքական իրողությունների ընթացքին ու տրամաբանությանը:

Բայց ադրբեջանցիներն ադրբեջանցի չէին լինի, եթե երկրորդ փորձը նույնպես չհիմնեին ստի և խաբեության վրա: Այսպես կոչված «Խաղաղության հարթակում» անպայմանորեն հայեր ներգրավելու նպատակով նրանք փորձել են նախ ի սկզբանե չբացահայտել ծրագրի էությունը՝ թաքուն պահելով այդ կառույցի կանոնադրությունում առկա ակնհայտ հակահայկական դրույթները, ապա նաև հարթակ հրավիրել այնպիսի մարդկանց, ովքեր բավականաչափ տեղեկացված չեն Ադրբեջանի քարոզչամեքենայի նյութած դավերի մասին, բայց միևնույն ժամանակ անկեղծորեն ուզում են խաղաղություն տեսնել մեր տարածաշրջանում: Այդպիսի մարդկանցից է, օրինակ, ռուսաստանաբնակ հայտնի հայ գործարար Ռաֆայել Իսախանյանը: Մարդ, ով մշտապես մասնակցել է Արցախի և Հայաստանի զարգացման ծրագրերին, աջակցել Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցներին, իսկ 2004թ. Ռուսաստանի տարածքում փորձել որոշակի կապեր հաստատել հայ և ադրբեջանցի գործարարների միջև: Այդ ծրագիրն այն ժամանակ համաձայնեցվել էր նաև Հայաստանի իշխանությունների հետ: Եվ ահա այդ մարդուն ադրբեջանցիները փորձել են համոզել, թե, իբր, իրենց կողմից մշակված «Խա-

ղաղության հարթակը» իրականում հենց Իսախանյանի ծրագրի վերակենդանացման փորձ է։

2017թ. դեկտեմբերին Պյատիգորսկում ես այցելել եմ Ռաֆայել Իսախանյանին, զրուցել նրա հետ Ադրբեջանի հերթական այդ քարոզչական ծրագրի մասին, որից հետո Իսախանյանը որոշել է հրաժարվել ակնհայտ հակահայկական այդ ծրագրին մասնակցելուց։ Բայց Ռաֆայել Իսախանյանը, իհարկե, միայնակ չէ իր մոլորության մեջ։ Ցավոք, մեր հայրենակիցների մեջ կային և էլի կլինեն մարդիկ, ովքեր կարող է հավատային ադրբեջանցիների համոզումներին ու խնդրանքներին։ Ի վերջո, եկեք ընդունենք՝ դժվար է անտեղյակ մարդկանց համար համաձայնել լինել հիվանդ և աղքատ, երբ դրա փոխարեն իրենց առաջարկում են հարուստ և առողջ լինել։ Իսկ առաջարկը մոտավորապես հենց այդպես էլ հնչում է։ Առողջ բանականություն ունեցող ո՞ր մարդը խաղաղության փոխարեն պատերազմ կցանկանա և համագործակցության փոխարեն՝ թշնամություն։

Մինչդեռ բավական է հպանցիկ հայացք նետել այսպես կոչված խաղաղության պլատֆորմի կանոնադրությանն ու նպատակներին, և միանգամից պարզ կդառնա, թե իրականում ինչ խաղաղություն նկատի ունեն ադրբեջանցիները՝ խոսելով այդ եզրի մասին։ Նման իրավիճակում, հավաստիացնում եմ, պատերազմը հազար խաղաղություն արժե։

Կարծում եմ՝ այսպես կոչված խաղաղության պլատֆորմի հետ ամեն ինչ արդեն պարզ է։ Մեզ համար, թերևս, կարևոր է հասկանալ, թե իրականում ինչ նպատակ է հետապնդում

ադրբեջանական կողմն այսպիսի կեղծիք ստեղծելով և տարածելով: Իսկ նպատակը մեկն է՝ միջազգային հանրության շրջանում Ալիևի վարչախմբի և Ադրբեջանի քաղաքականության դրական մոտեցում ձևավորել: Խաբել բոլորին, թե, իբր, տարածաշրջանում խաղաղություն ապահովելու համար իրենք ամեն ինչ անում են, իսկ ահա վատ հայերը տապալում են բոլոր խաղաղասիրական նախաձեռնությունները:

Խաղաղության պլատֆորմ կլինի, թե ցանկացած այլ ծրագիր, միևնույն է, նման հնարքներով Ադրբեջանը որևէ լուրջ հաջողություն չի կարող ակնկալել: Ալիևի վարչակազմը դա նույնպես հասկանում է: Դժվար է հավատալ, բայց Ադրբեջանի նախագահը հաստատ հասկանում է նաև, որ իր երկրի պոտենցիալը չի բավականացնի ղարաբաղյան հարցը ցանկացած այլ եղանակով հօգուտ իրենց լուծելուն: Դրա համար իրեն լուրջ աջակցություն է պետք: Այնպիսի օգնություն, որը կարող է ցուցաբերել միայն Թուրքիան և ուրիշ ոչ ոք: Բայց այստեղ էլ խնդիրներ կան: Եվ դրանցից հիմնականը կապված է հենց իր՝ Ալիևի հետ: Ավելի ճիշտ՝ վերջինիս ինքնասիրության: Որովհետև Թուրքիայի օգնությունը նշանակելու է նաև թուրքական ազդեցության մեծացում ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Ադրբեջանում: Իսկ Ալիևը երբեք պատրաստ չի եղել իշխանություն կիսել ցանկացած այլ ուժի հետ: Անգամ եթե դա բխում է Ադրբեջանի շահերից: Թերևս, այդ է պատճառը, որ թուրք-ադրբեջանական էլիտաների հարաբերությունները, որքան էլ եղբայրական կոչվեն, այնուամենայնիվ, ավելի շատ մրցակցություն են հիշեցնում: Բայց այստեղ

նույնպես, ինչպես և միջազգային հանրության հետ իր շփումներում, Ալիևն ունի որոշակի սահմանագծեր, որոնց նա փորձել է հնարավորինս մոտենալ, բայց երբեք չանցնել:

Այսպես, պաշտոնական Բաքուն իսկապես շատ է ցանկանում, որպեսզի Թուրքիան ներգրավված լինի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Ամեն ինչ անում է, որպեսզի հաղթահարի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների մենաշնորհն այս հարցում և այնտեղ բերի Թուրքիային: Ադրբեջանի իշխանությունները ցանկանում են նաև էլ ավելի խորացնել Թուրքիայի հետ ռազմական համագործակցությունը: Հատկապես սպառազինություններ ստանալու հարցում: Եվ այդ է պատճառը, որ լրատվական հոսքերում մենք մշտապես տեսնում ենք թուրք-ադրբեջանական համագործակցության մասին լուրեր:

Ինչպես տեսնում ենք, առաջին հայացքից ամեն ինչ լուսավոր է թվում: Բայց այս գետը նույնպես ունի ստորջրյա բազում խութեր, որոնք ժամանակ առ ժամանակ ուժեղ հարվածներ են հասցնում Ալիևի և Էրդողանի հույսերին:

Խնդիրը, նախ և առաջ, այն է, որ Թուրքիան երբեք որպես հավասարազոր գործընկեր չի ընկալել Ադրբեջանին: Ինչպես և Ռուսաստանին ու Իրանին կամ մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահ հետապնդող ցանկացած այլ երկրի, Հարավային Կովկասը Թուրքիային նույնպես հետաքրքիր է իր ամբողջության մեջ: Որևէ պարագայում պաշտոնական Անկարան չի համաձայնի այս տարածաշրջանում իր շահը փոխկապակցել Ադրբեջանի շահերի, առավել

ևս՝ Ալիևի անձնական հավակնությունների հետ: Մեծ հաշվով, Թուրքիայի համար միևնույն է, թե իրավական ինչ կարգավիճակ կունենա Արցախի Հանրապետությունը և թե արդյոք այն անկախ կմնա իր ներկա, թե մեկ այլ սահմաններով: Թուրքական քաղաքականությունը մշտապես ձգտել է դոմինանտ վիճակ ունենալ ամբողջ Հարավային Կովկասում և հենց դրա համար է, որ պաշտոնական Անկարան ամեն ինչ անում է այստեղի քաղաքական գործընթացներին ներգրավվելու համար: Ադրբեջանում հասկանում են, որ աշխարհաքաղաքական այդ գերխնդիրը լուծելու համար Թուրքիայի իշխանությունները կարող են առևտրի առարկա դարձնել նաև իրենց շահերն ու ձգտումները: Ինչպես դա եղավ, օրինակ, 2008թ., երբ Թուրքիան ընդունեց հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու՝ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկը: Այդ նախաձեռնությունն, ինչպես արդեն տեսանք նախորդ ենթագլխում, տապալվեց, բայց պատճառն ամենևին էլ ադրբեջանական կողմից դժգոհությունը չէր, ինչպես դա ներկայացվում է միջազգային հարթակներում:

2.6. Հայաստանը հաղթել է պատերազմում, բայց տանուլ է տալիս հակամարտությունը

Այն, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող բանակցային գործընթացը խոր փակուղու մեջ է, վաղուց արդեն նորություն չէ: Խնդիրը, որպես այդպիսին, ի հայտ է եկել դեռևս 2013թ. վերջին, երբ ուկրաինական ճգնաժամի պատճառով մեր տարածաշրջանում դադարեց գործել հակամարտու-

թյունների զսպման արտաքին մեխանիզմը՝ ռուս-ամերիկյան համագործակցությունը: 2014թ. ամռան ամիսներից անվտանգությունը Հարավային Կովկասում ապահովվում է բացառապես հայկական զինված ուժերի ջանքերի և հակամարտող կողմերի ռազմական հավասարակշռության շնորհիվ: Եվ սա իրականություն է, որի քաղաքական նշանակությունն օրեցօր ավելի մեծ կարևորություն է ստանում:

Համենայնդեպս, ակնհայտ է, որ 2013-ից մինչ օրս՝ չնայած պատերազմի վերսկսման վտանգի մեծացմանը, ԵԱՀԿ համանախագահող երկրները հակամարտող կողմերին խաղաղության բերելուն ուղղված որևէ լուրջ քայլ չեն արել: Անգամ ապրիլյան պատերազմն առիթ չդարձավ, որպեսզի նրանք ագրեսիան զսպելու լուրջ քայլեր ձեռնարկեն: Պաշտոնական Մոսկվան, Վաշինգտոնն ու Փարիզը բավարարվում են խաղաղության կոչերով և խիստ արարողակարգային բնույթի հանդիպումներ կազմակերպելով:

Բնականաբար, այսպիսի իրավիճակում խաղաղության մասին խոսելն ավելորդ է: Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսյանն, օրինակ, վստահ էր, որ հնարավոր չէ մեկ ձեռքով կրակել, մյուսով՝ բանակցել: Այսպիսի մոտեցմանը համամիտ է նաև աշխարհասփյուռ հայությունը: Համենայնդեպս, այդ էին վկայում 2017թ. տեղի ունեցած Հայաստանսփյուռք համաժողովի ընթացքում հնչած հայտարարություններն ու Հայաստանի իշխանություններին ուղղված պահանջկոչերը:

Իրականում, այո, թե՛ Ռուսաստանը և թե՛ Միացյալ Նահանգները հետաքրքրված են Հարավային Կովկասի կայունությամբ: Պաշտոնական Մոսկվային դա պետք է, որովհետև այս տարածաշրջանի ցանկացած կոնֆլիկտ կարող է սպառնալ Ռուսաստանի տարածքային ամբողջականությանը, իսկ Վաշինգտոնին, որովհետև այստեղով են անցնում Արևմուտքի համար շատ կարևոր նավթագազային և ճանապարհային կոմունիկացիաները: Բացի այդ, Հարավային Կովկասում ձևավորված ուժերի հավասարակշռությունը զերծ է պահում միջազգային հանրությանը մի շարք այլ խնդիրներից, որոնց ընթացքը կարող է խիստ անկանխատեսելի հետևանքներ ունենալ ամբողջ աշխարհի համար: Այդ պատճառով, եթե անգամ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը չհամագործակցեն մեր տարածաշրջանում, չեն էլ մրցակցի: Դա նրանց պետք չէ:

Իսկ պատերազմի ռիսկը, ինչպես նաև ինքը՝ պատերազմը, Հարավային Կովկասում կա արդեն 30 տարի: Դրանից առաջ էլ կար: Բայց այն ժամանակ կար նաև այդ ռիսկերը զսպող ուժեղ մեխանիզմ՝ Խորհրդային Միությունը: Ներկայում, ինչպես արդեն նշվեց, այդ դերը ստանձնել է Հայոց բանակը, որի ծառայության քաղաքական գնահատականը և արժեքը, ցավոք, դեռևս մինչև վերջ չի գնահատված անգամ պաշտոնական Երևանի կողմից: Քանզի, լինելով անվտանգություն ստեղծող և արտահանող երկիր՝ Հայաստանը շարունակում է տնական խաղաղություն ստանալու ակնկալիքով խոսել զիջումներից, համագործակցության եզրեր փնտրել հակառակորդի հետ և այլն:

Մինչդեռ Ադրբեջանը, օգտվելով տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական մրցակցության մթնոլորտից, այն փաստից, որ գնալով մեծանում է իր դաշնակից Թուրքիայի ազդեցությունը միջազգային քաղաքական գործընթացների վրա, և այլ հանգամանքներից, շարունակում է իր մերժողական քաղաքականությունը՝ հընթացս ստեղծելով քարոզչական նոր թեզեր, որոնք ուղղված են հայկական պետություններին պարտություն պարտադրելուն։ Այդ գաղափարին է ծառայում, օրինակ, պաշտոնական Բաքվի կողմից շրջանառության մեջ դրված այն թեզը, համաձայն որի՝ 90-ականների սկզբին տեղի ունեցած պատերազմում հայկական կողմի հաղթանակը ոչինչ չարժե, քանի որ այդ պատերազմը հակամարտության փուլերից ընդամենը մեկն էր, մինչդեռ մնացած փուլերում Հայաստանն ու Արցախը պարտվել են։ Հետևաբար, ըստ քաղաքական դաշտ նետված այս թեզի հեղինակների, բանակցությունների սեղանին էլ հաշտության պայմաններ թելադրող կողմը պետք է հենց Ադրբեջանը լինի։

Որպես կանոն, այս թեզն ապացուցելու համար ադրբեջանցիներն ու նրանց աջակցող միջազգային փորձագետները և քաղաքական գործիչները վկայակոչում են Հայաստանի և Ադրբեջանի տնտեսական աճի ցուցանիշները, ժողովրդագրական իրավիճակը, արտաքին քաղաքականության ակտիվությունը, ռազմական պոտենցիալը և այլն։

Այսպես, 2012-2013թթ. ադրբեջանական քարոզչամեքենան սկսեց շեփորել այն լուրը, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն ծավալով գերազանցել է Հայաստանի Հանրապետու-

թյան ողջ բյուջեն: Պաշտոնական Բաքուն այս տեղեկությունը տարածում էր հնարավոր բոլոր միջոցներով և, պետք է ասել, որ այդ փաստով կարողացել է տպավորություն գործել անգամ հայ հանրության վրա:

2013-2014թթ. եղել եմ Բելգիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի մոտ երկու տասնյակ վերլուծական կենտրոններում, հանդիպել մեր տարածաշրջանով զբաղվող մոտ հարյուր փորձագետների հետ, որոնցից շատերն այն ժամանակ համոզված էին, որ Հայաստանը դատապարտված է: «Ադրբեջանն ապշեցնող տեմպերով է առաջ գնում: Նման բան դժվար էր պատկերացնել: Ցավոք, Հայաստանն այլևս չի կարող դիմակայել այդ մրցակցությանը»,- ասում էին ինձ եվրոպացի փորձագետները: Նման պնդում անելու հիմնական փաստարկը հենց վերոնշյալ ադրբեջանական քարոզչության թեզերն էին՝ առավելապես ռազմական բյուջեի մասին հրապարակված փաստը:

Հակափաստարկներն այն մասին, որ ռազմական բյուջեի մեծությունը դեռ հաղթանակ չի երաշխավորում, որովհետև այդ գումարների մի մասը, օրինակ, նախատեսված է Կասպից ծովի ադրբեջանական նավատորմն արդիականացնելուն, մի մասը կոռուպցիոն սխեմաների արանքում է կորչում կամ որ հայկական կողմի պաշտպանության համար նման գումարներ պետք չեն, որովհետև ռազմաճակատն այդքան մեծ չէ և այլն, բախվում էին այդ փորձագետների մտքում արմատացած Ադրբեջանի քարոզչական այդ թեզի այլ բաղկացուցիչներին: Փորձագետները խոսում էին այն մասին, որ

Ադրբեջանն էներգետիկ ռեսուրսներով հարուստ երկիր է, այդտեղով են անցնում կամ սկիզբ առնում Եվրոպայի համար կարևոր նշանակություն ունեցող ենթակառուցվածքները՝ գազամուղ, նավթամուղ և երկաթգիծ։ Մեկ խոսքով, պարզ էր, որ պաշտոնական Բաքուն կարողացել էր համոզել միջազգային փորձագիտական և քաղաքական շրջանակներին, որ ընդհանուր առմամբ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության մեջ իրենք հաղթող կողմ են և, հետևաբար, հայկական պետությունները պետք է ընդունեն իրենց պահանջները և զորքերը դուրս բերեն Արցախի տարածքից։

Ելնելով այս ամենից՝ պաշտոնական Բաքուն բանակցային գործընթացին իր մասնակցությունը ներկայացնում էր իբրև բարի կամքի արտահայտում և աջակցություն ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելուն ուղղված միջնորդների ջանքերին։ Ադրբեջանական քարոզչամեքենան անընդհատ պնդում էր, որ իրենք ամեն պահի ռազմական ճանապարհով կարող են հարցը հօգուտ իրենց լուծել, և փաստը, որ նման քայլի չեն գնում, փորձում էին ներկայացնել որպես ադրբեջանական կողմի զիջում Հայաստանին ու Արցախին։ Չէ՞ որ բանակցությունների հիմքում հենց փոխզիջումների գաղափարն էր դրված։ Այսինքն՝ նման կերպ հակառակորդը փորձում էր խուսափել նաև հայկական կողմին որևէ իրական բան զիջելու հստակ ձևակերպված պահանջից։

Ադրբեջանի քարոզչական այս թեզի դիրքերը զգալիորեն թուլացան 2016թ. Քառօրյա պատերազմից հետո։ Մինչ այդ նրանց կողմից ակտիվ տարածվող այն միտքը, թե ադրբեջա-

նական զինված ուժերը կարող են ամեն պահ ուժի միջոցով խնդիրը լուծել հօգուտ Ադրբեջանի, տապալվեց. եկավ այդ պահը և պարզվեց, որ Հայոց բանակն ամուր է կանգնած իր դիրքերում: Ադրբեջանին չօգնեցին ո՛չ իրենց գովազդված ռազմական բյուջեն և ո՛չ էլ ձեռք բերված ժամանակակից զինտեխնիկայի մեծ քանակը:

Ապրիլյան պատերազմը բավական ուժեղ հարված էր Ադրբեջանի քարոզչամեքենային: Բաքվում դա լավ էին հասկանում: Միջազգային մամուլի և փորձագիտական շրջանակների արձագանքներն էլ էին այդ վկայում: Իրավիճակը փրկելու՝ Ի.Ալիևի վարչակազմի խղճուկ փորձերը, զորօրինակ՝ տարբեր գյուղերի ցուցանակներ պատրաստելու միջոցով խաբել միջազգային հանրությանը, իբր թե պատերազմի ընթացքում գյուղեր են գրավել, դատապարտված էին: Պաշտոնական Երևանն էլ, բնականաբար, փորձեց ամեն ինչ անել՝ պատերազմի արդյունքները քաղաքական մակարդակում կապիտալիզացնելու համար: Քառօրյա պատերազմին հետևած՝ Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հանդիպումները Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում լավ առիթ էին, որպեսզի հայկական կողմն իր պայմանները թելադրի թե՛ Ադրբեջանին և թե՛ միջնորդներին:

Բացի այդ, 2017թ. հայկական կողմը կարողացավ փոխել մոտեցումներն Արցախյան հիմնախնդրի բանակցային գործընթացում: Այս հարցում պաշտոնական Երևանը սկսեց հանդես գալ առավել կարծր բանակցային դիրքորոշմամբ՝ առա-

վել նեղացնելով նախկինում հռչակված զիջումների պատրաստ իր քաղաքականությունը։ Սա առաջին անգամ արտահայտվեց Հայաստան-սփյուռք համաժողովի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի, իսկ ապա նաև ՄԱԿ գլխավոր ասամբլեայում հնչած Սերժ Սարգսյանի ելույթի ժամանակ։ Խոսելով հայկական կողմի հնարավոր զիջումների մասին՝ Հայաստանի նախկին արտգործնախարարն ու նախագահն ասել են, որ այդ զիջումները կարող են լինել միայն այնքանով, որքանով որ սպառնալիք չեն հանդիսանա Արցախի Հանրապետությանը։ Մինչդեռ, նախապատերազմյան փուլում բանակցություններն ընթանում էին Մադրիդյան սկզբունքների շուրջ, որոնք նախատեսում էին Ադրբեջանին Արցախի յոթ շրջանների հանձնում։

Ադրբեջանա-արցախյան հակամարտությունում հայկական կողմի ձախողված լինելու ադրբեջանական (նաև թուրքական) քարոզչական թեզի մեկ այլ բաղկացուցիչ մասն ուղղված է հենց Հայաստանում և Արցախում բնակվող հայ հանրությանը։ Դա առավելապես հոգեբանական ներազդեցության փորձ է, որի նպատակը մեր ժողովրդի շրջանում պատերազմի և բանակի հանդեպ վախ ներշնչելն է։

Սկսած 2014 թվականից՝ Ադրբեջանի իշխանությունները հետևողականորեն սրել են իրավիճակը հայկական երկու պետությունների հետ սահմանին։ Նման գործողության բացահայտ նպատակը մեկն էր՝ հայկական կողմին հնարավորինս շատ մարդկային վնասներ պատճառելու միջոցով խրա-

խուսել բանակից խուսափելու տրամադրությունների տարածմանը ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների շրջանում:

Խնդիրը բարդ էր և վտանգավոր հենց ադրբեջանական կողմի համար, որովհետև ՀՀ և ԼՂՀ Զինված ուժերը՝ ի պատասխան հակառակորդի ամեն սադրանքի, լայնածավալ պատժիչ գործողություններ էին իրականացնում սահմանի բոլոր հատվածներում՝ մարդկային լուրջ կորուստներ պատճառելով հակառակորդին: Այդ պատճառով պաշտոնական Բաքուն անընդհատ փոխում էր Հայոց բանակի դեմ իր գործողությունների մարտավարությունը: 2014թ. սկիզբ առած դիվերսիոն պատերազմին հաջորդեց դիպուկահարների պատերազմը, հետո՝ փոքր հրետանու: Իսկ վերջում այդ ամենը հանգեցրեց 2016թ. Ապրիլյան պատերազմին, որի արդյունքների մասին արդեն խոսեցինք:

Հայկական կողմին մարդկային կորուստներ պատճառելու միջոցով հայ հանրության տրամադրությունների վրա ներազդելու Ադրբեջանի մարտավարությունը, ամեն դեպքում, որոշ առումով հաջողված էր: Գոնե մինչ Քառօրյա պատերազմ: Սակայն Արցախի վրա Ադրբեջանի զինված ուժերի լայնածավալ հարձակումն իրավիճակն արմատապես փոխեց: Հակառակորդի ագրեսիային հակադարձելու հայ ժողովրդի միասնական կամքը բացառիկ էր, և դա ակնհայտ տեսանելի էր անգամ հակառակորդի համար: Այս առումով, կարելի է ասել, որ Ապրիլյան պատերազմը դարձավ այն Ռուբիկոնը, որի անցումը ձախողեց հայկական պետությունների քաղաքացիներին հոգեբանորեն ճնշելու ադրբեջանական

մարտավարությունը՝ ի չիք դարձնելով մինչ այդ արձանագրված որոշ հաջողություններ։

Դրանով հանդերձ, պետք է նաև փաստել, որ հայ հանրության դեմ հանդես եկող ուժերը և հատկապես ադրբեջանա-թուրքական քարոզչամեքենան դեռևս չեն հրաժարվել վերոնկարագրյալ մեթոդներով իրավիճակ փոխելու մարտավարությունից։ Հատկապես հիմա, երբ Հայաստանում քաղաքական իրավիճակ է փոխվել և իշխանության են եկել նոր մարդիկ, հակառակորդը կրկին ակտիվացնում է բոլոր այն ռեսուրսները, որոնք նախկինում թեկուզ փոքր, բայց և այնպես որոշակի արդյունք ապահովել են։ Դա առավել մտահոգիչ է, որովհետև Հայաստանի նոր իշխանությունները, ինչպես նաև հանրային տրամադրությունները, դեռևս կենտրոնացած են այլ հարցերի վրա, ինչը մեծ անցքեր է ստեղծում հայկական պետությունների և աշխարհասփյուռ հայության տեղեկատվական/քարոզչական անվտանգության համակարգում։

2.7. Քարոզչական այլ թեզեր

Հայկական պետությունների և հայ ժողովրդի դեմ ուղղված քարոզչական թեզերը, ինչպես այդ մասին նշվել է հետազոտության առաջին գլխում, բազմաբովանդակ և ծավալուն են։ Դրանց հնարավոր ազդեցությունները բացահայտելու, չեզոքացնելու և հակազդելու գործն արդյունավետ կազմակերպելու համար մշտական աշխատող հետազոտական կենտրոններ, պետական համապատասխան ինստիտուտներ և հարցի էության մեջ մասնագիտացած մարդկանց խմբեր են անհրա-

ժեշտ: Եվ քանի որ մեկ գրքի սահմաններում պարզապես հնարավոր չէ վերհանել հայկական հանրությանը սպառնացող բոլոր քարոզչական թեզերը, հատկապես որ դրանք մշտապես համալրվում են նոր գաղափարներով և մոտեցումներով, այս ենթագլխում կփորձենք հակիրճ ներկայացնել ներկայում ակտիվ գործարկվող ևս մի քանի թեզ, որոնց անդրադառնալը կարևոր ենք համարում:

Ինչպես արդեն դիտարկված քարոզչական թեզերի դեպքում, սրանք նույնպես ուղղված են հայ հանրության ներքին պաշտպանողական համակարգերը թուլացնելուն և մեր պետությունների ու ժողովրդի միջազգային հեղինակությունը վնասելուն:

Օտար քաղաքական, հասարակական, հոգևոր և այլ արժեքների ներմուծում

Հայկական պետականության վերականգնումն ու քաղաքական անկախության ձեռքբերումը հայ ժողովրդին կանգնեցրին այնպիսի խնդիրների առջև, որոնք, որոշ առումներով, միանգամայն նոր բնույթ ունեն մեր ազգի համար: Դրանց շարքում կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքական այնպիսի տեսությունների և հայեցակարգերի մշակումը, որոնց համադրումն ու իրականացումը կարող են ազգային անվտանգության և բարգավաճման երաշխիք հանդիսանալ:

Հայտնի է, որ հասարակության զարգացման բեկումնային փուլերում, երբ հոգևոր արժեքների կայունացած համակարգի վերագնահատման և գաղափարաքաղաքական կողմ-

նորոշման վերանայման անհրաժեշտություն է ծագում, գիտելիքի մեթոդաբանական կողմնորոշիչների և հիմքերի մշակումն առավել հրատապ է դառնում: Այսօր, երբ Հայաստանում մերժված են մարքս-լենինյան գաղափարախոսությունն ու մեթոդաբանությունը, կարծես թե ընտրվել է արժեքային մեկ այլ համակարգ, որի հովանավոր արևմտյան երկրներն այն ներկայացնում են համամարդկային արժեքների որակով: Սակայն մեր երկրի համար նման մոտեցումը չի կարող արդարացված համարվել մի շարք պատճառներով, որոնցից ամենակարևորը, թերևս, այն փաստն է, որ դրանք ստեղծվել են պատմամշակութային, սոցիալ-քաղաքական և իրավական միանգամայն այլ միջավայրում կամ ելնում են ընդհանուր վերացական դիրքորոշումներից:

Նշված համակարգն արտացոլում է հասարակական-քաղաքական զարգացման արևմտյան ուղին, որի մեխանիկական համադրումը ոչ եվրոպական ժողովուրդների քաղաքական մտքի պատմությանը բազում վերապահումներ է պահանջում: Այն կարող է չեզոքացնել տվյալ ժողովրդի ինչպես քաղաքական սկզբունքները, այնպես էլ քաղաքական մտքի առանձնահատկությունները: Ուստի, հայկական պետականության և հասարակության բնականոն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է գիտական հիմքի վրա դնել ազգային շահերն իրենց մեջ կրող և դրանցից բխող քաղաքական, կրոնական, սոցիալական, տնտեսական և այլ տեսությունների ու հայեցակարգերի մշակումը և իրականացումը:

Ներկայում դա առավել դժվար է անել, քանի որ Հայաս-

տանում գործող միջազգային տարբեր հիմնադրամները, դրանց ֆինանսներով գործող հասարակական, քաղաքական շարժումները, քաղաքացիական նախաձեռնություններն այնպիսի օրակարգ են թելադրում, որը հիմնովին փոխում է թե՛ հասարակական կարգի և թե՛ ազգային հոգևոր արժեքների մասին հայ ժողովրդի ավանդական պատկերացումները: Իսկ Հայաստան ներմուծվող տարբեր կրոնական, գաղափարական հոսանքները հայ հանրությանը բացահայտ վնաս պատճառելու նպատակ են հետապնդում:

Այդպիսիք են, օրինակ, **Հայաստանում հետզհետե արմատավորվող տարբեր աղանդավորական կառույցներն ու դրանց գաղափարախոսները:** «Հայաստանը, ինչպես նախկինում, այսօր էլ թատերաբեմ է համարվում բազմաթիվ կրոնական ուղղությունների համար, որոնք իրենց գործունեությամբ «լույս» են տարածում մեզանում. թե՛ արևելքից, թե՛ արևմուտքից, թե՛ հյուսիսից և թե՛ հարավից զանազան կրոնական ալիքներ բախվում են իրար ու ներխուժում Հայաստան: Ոմանք «ճշմարտության լույսն» են բերում մեր «խավարած» սրտերին, ոմանք՝ «ճշմարտություն», ոմանք էլ՝ «տիեզերական եղբայրություն» և այլն»[33]: Մեր երկրում այսօր գործում են Մորմոնների, Եհովայի վկաների, Կյանքի խոսքի, Հոգեգալստականների, Ադվենտիստների և այլ աղանդավորական կազմակերպություններ, որոնք սկսել են ակտիվ ներգործու-

[33] Ղևոնդ քահանա Մայիլյան, Ժամանակակից աղանդները Հայաստանում, Էջմիածին, 1999, էջ 3:

թյուն ունենալ Հայաստանի ոչ միայն կրոնական, այլև սոցիալական և քաղաքական գործընթացների վրա։

Հայաստանում գործող աղանդները բարձիթողի վիճակում են, ինչը հոգևոր անվտանգության լուրջ խնդիր է առաջացնում մեր երկրում։ Ժողովրդավարությունը, խոսքի ու խղճի ազատությունը թեև լավ արժեքներ են, սակայն Հայաստանի դեպքում փաստը ցույց է տալիս, որ նրանց վնասն ավելի շատ է, քան օգուտը, քանի որ խոսքի և խղճի ազատությունն այլևս ենթադրում է բարձիթողի վիճակ և ոչ ոք պատասխանատվություն չի կրում իր այդ ազատության հետևանքների համար։

Սա կարևոր հանգամանք է, քանզի ժողովրդավարության և խոսքի ազատության քողի ներքո Հայաստան այնպիսի գաղափարախոսություններ են ներմուծվում, որոնք սպառնալիք են դառնում թե՛ պետությանը, թե՛ հայ հանրությանը՝ որպես այդպիսին, թե՛ ավանդական հայկական ընտանիքին, թե՛ մեր ժողովրդի դավանած ավանդական արժեքներին և թե՛առանձին վերցրած միջին վիճակագրական հայ մարդու գաղափարական և հոգևոր աշխարհընկալմանը։

Այս փաստը կարևոր անդրադարձ է ունենում հայկական պետությունների և ժողովրդի կենսագործունեության վրա։ Օտար քաղաքական, հասարակական, հոգևոր և այլ արժեքների ներմուծման միջոցով մեր դեմ իրականացվող քարոզարշավին բավական դժվար է դիմադրել, որովհետև, նախ, որպես այդ քարոզչության սուբյեկտներ հանրության առջև հիմնականում հանդես են գալիս հենց այդ հանրության ներկայացուցիչները, որոնցից շատերն անգամ իրենց կողմից

քարոզվող գաղափարների ու ծրագրերի հավատարիմ նվիրյալներ են։ Այսինքն՝ տվյալ դեպքում հանրությունը չի հասկանում, հաճախ նաև չի տեսնում, որ իրեն ինչ-որ բան համոզող իր իսկ հարևանը կամ գործընկերը ֆինանսավորվում է արտաքին ուժերի, նրանց հիմնած տարատեսակ հիմնադրամների կողմից։

Երկրորդ կարևոր պատճառն այն է, որ հայ հանրությանը մատուցվող օտարածին գաղափարն ու գաղափարական ծրագրերը գրավիչ են երիտասարդ սերնդի համար։ Որպես կանոն, դրանք հիմնված են տարատեսակ ազատությունների քարոզի վրա, որոնց համալիր միասնությունը ոչինչ չի թողնում «ազատություն» հասկացության բուն էությունից։ Օրինակ, ինչպե՞ս «ազատություն» կոչել ծնողին չենթարկվելու, ամեն հարցում ըստ սեփական հայեցողության առաջնորդվելու՝ երեխաներին ուղղված քարոզը։ Կամ էլ քարոզչական այն թեզը, թե ցանկացած մարդ ինքը պետք է որոշի ամուսնանալու է նո՞ւյն, թե՞ հակառակ սեռի ներկայացուցչի հետ։

Սրանք խնդիրներ են, որոնք հետզհետե սողոսկում են նաև հայկական պետությունների օրենսդրական դաշտ։ Մինչդեռ հարցի անգամ մակերեսային ուսումնասիրությունը թույլ է տալիս տեսնել, որ, օրինակ, «խոսքի ազատություն» եզրի տակ խոսքի արժեզրկում է քարոզվում, «խղճի ազատության» քողի տակ՝ բարոյական արժեքների անտեսում և այլն։

Հայկական պետությունների արժեզրկում սփյուռքի աչքում

Հայաստան-սփյուռք կապը ռազմավարական նշանակություն

ունի ինչպես հայկական պետությունների, այնպես էլ աշխարհասփյուռ մեր հայրենակիցներ համար։ Դա գործոն է, որը բազմիցս մեծացնում է հայ ժողովրդի, Արցախի և Հայաստանի Հանրապետության թե՛ դիմադրողականությունը և թե՛ կենսունակությունը։ Հայկական հանրույթի այս երկու գործոնները տասնամյակներ շարունակ իրենց ողջ գործունեությունը պայմանավորել են փոխադարձ աջակցության, միմյանց փոխլրացնելու և միասնական ապագա կառուցելու գաղափարով։

2015թ. հունվարի 29-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական Հռչակագրի[34] հրապարակման արարողությունը։ Տարածաշրջանի քաղաքական զարգացումներին հետևող մարդիկ, անկասկած, նկատել են, որ Հռչակագիրը հրապարակվել է ընդգծված հանդիսավորության պայմաններում։ Ծիծեռնակաբերդի համալիրը զարդարված էր հայոց եռագույնով, առկա էր ՀՀ Զինված ուժերի պատվո պահակախումբը, հյուրեր էին եկել աշխարհի բոլոր ծայրերից։ Ինչպես իր ելույթում այդ օրը նշել է Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, փաստաթղթում ամրագրված է հայ ժողովրդի հավաքական կամքը։ «(Հռչակագրում) վերահաստատվում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանու-

[34] Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, http://www.mfa.am/hy/interviews/item/2015/01/29/pan_arm_dec_armgen/

թյան ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար»,- ասել է Սերժ Սարգսյանը[35]:

Հիշատակված հռչակագիրը չափազանց կարևոր է Հայաստան-սփյուռք հարաբերությունների կարևորությունը հասկանալու համար: Այն ուղղված է ապագային և, ըստ էության, այսուհետև հանդիսանալու է պատմական արդարության վերականգնմանն ուղղված հայ ժողովրդի պայքարի հիմնական ուղեցույցը: Հռչակագրի տեքստի հպանցիկ ընթերցումն արդեն իսկ ցույց է տալիս, որ փաստաթուղթն իրավական հիմքի վրա դրված քաղաքական գնահատականների և պահանջների ամբողջություն է: Այն հիմնական չորս մասից բաղկացած փաստաթուղթ է, որի առաջին մասը շեշտում և ամրապնդում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված հայ ժողովրդի պայքարի իրավական բազան: Երկրորդ մասը մեկուկես միլիոն զոհերի հիշատակի ոգեկոչումն է, երախտիքի խոսք այն պետություններին, միջազգային, կրոնական և հասարակական կազմակերպություններին, որոնք «քաղաքական խիզախություն ունեցան ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված սոսկալի ոճրագործություն»: Հրապարակված փաստաթղթի երրորդ մասը քաղաքական իրողությունների ամրագրումն ու հայոց պահանջատիրության հստակ ձևակերպումն է: Այն դատա-

[35] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը «Արարատի ստորոտին» 5-րդ մեդիա համաժողովում, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/03/18/President-Serzh-Sargsyan-speech-Media-forum-speech/

պարտումների, կոչերի և քաղաքական ծրագրերի ամբողջական փաթեթ է, որն այսուհետև լինելու է միջազգային հարթակներում Հայաստանի, Արցախի և սփյուռքի համատեղ գործունեության հիմքը: Եվ վերջապես հռչակագրի չորրորդ՝ եզրափակիչ հատվածը կոչ է հայ ժողովրդի ապագա սերունդներին՝ աննահանջ պայքարով ծառայել հանուն առավել հզոր Հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության, անկախ Արցախի առաջընթացի ու զորացման, աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման, ինչպես նաև համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման համար: Այսպիսով կամուրջ է նետվում անցյալի, ներկայի և ապագայի միջև՝ այսօրվա քաղաքական ծրագրերին հաղորդելով ռազմավարական բնույթ:

Հռչակագրի հիմնական թեզերին այսպիսի մանրամասն անդրադարձն անհրաժեշտ էր՝ հասկանալու, թե կոնկրետ ինչն են թիրախավորում հայկական պետությունների և սփյուռքի դեմ քարոզչություն իրականացնող այն ուժերը, որոնք փորձում են անվստահություն և խժդժություններ մտցնել հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև: Որովհետև ներկայացված փաստաթուղթը, ըստ էության, արդեն վերածվել է հայկական պետությունների անվտանգության համակարգի կարևոր բաղկացուցիչներից մեկի: Այն արդեն իսկ հասցրել է մեծ ազդեցություն ունենալ Հայկական հարցի նկատմամբ տարբեր միջազգային կառույցների դիրքորոշման ձևավորման վրա: Այսպես, 2015թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության Քաղաքական համաժողովը

«Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» խորագրով բանաձև է ընդունել[36]: Մի քանի օր անց նման բանաձև է ընդունել նաև «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովը[37]: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացի համար կարևորագույն նշանակություն ունեցող այս երկու փաստաթղթերն էլ հիմնված են համահայկական հռչակագրի վրա:

Հայության տարբեր հատվածների միջև գժտություններ մտցնելու և հատկապես Հայաստան-սփյուռք տարեցտարի ուժեղացող կապին խոչընդոտելու նպատակով, թուրքական, ադրբեջանական և այլ երկրների տեղեկատվական/քարոզչական համակարգերը բազում, իրենց կարծիքով՝ խնդիրներ առաջացնող նյութեր են հրապարակում: Օրինակ, մշտապես լուրեր են տարածվում այն մասին, թե Հայաստանի և Արցախի պաշտոնյաները յուրացնում են տարբեր ծրագրեր իրականացնելու նպատակով սփյուռքի հավաքած գումարները: Կամ էլ թե՝ հայերի ներգաղթը կանխելու նպատակով անընդհատ խոսվում է Հայաստանի ծանր տնտեսական դրության, սոցիալական իրավիճակի և ռիսկային այլ գործոնների մասին:

Հաշվի առնելով այն փաստը, որ մեր ժողովրդի մեծամասնությունը բնակվում է արտասահմանում և ըստ արժանվույն պաշտպանված չէ հայկական պետությունների կողմից, նման քարոզչություն իրականացնելու մեր հակառակորդնե-

[36] ԵԺԿ-ն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունել, http://news.am/arm/news/255195.html

[37] Եվրանեսթ ԽՎ-ն ընդունել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև, http://www.aravot.am/2015/03/17/552023/

րի գործը բավական հեշտացվում է։ Դրան նպաստում է նաև այն փաստը, որ հայկական սփյուռքն ինքնին բազմաշերտ է։ Այնտեղ բնակվող մեր հայրենակիցների զգալի մասը նոր է լքել երկիրը և մեծապես այդպես վարվելու սեփական քայլն արդարացնելու, բայց նաև օբյեկտիվ այլ պատճառներով հեշտ դառնում է ոչ միայն այդպիսի քարոզչության զոհ, այլև իրականացնող։

Հայերին իրենց բնակության երկրներում վարկաբեկող քարոզչություն

Ինչպես արդեն նշվել է, Ադրբեջանի և Թուրքիայի իշխանություններն իրենց հակառակորդ և թշնամի են համարում ոչ միայն հայկական պետությունները, այլև աշխարհասփյուռ հայությանը։ Ուստի, որպես իրենց քարոզչական գործունեության թիրախ նրանք համապատասխանաբար ընկալում են ողջ հայ ժողովրդի բոլոր ներկայացուցիչներին՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է բնակվում մարդը և որքանով է առնչվում համահայկական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացմանը։ Հայերը հետապնդվում են ամեն տեղ և հնարավոր ամեն մեթոդներով։ Այս առումով, տեղեկատվությունն ու քարոզչությունն այն գործիքներն են, որոնք առավել հաճախ են հանդիպում հայության դեմ իրականացվող գործունեության մեջ։

Փաստ է, որ մեր տարածաշրջանում բնակվող ժողովուրդներն անգամ Խորհրդային Միության տարիներին տարբեր ոլորտներում մրցակցում էին միմյանց հանդեպ՝ փորձե-

լով նսեմացնել միմյանց այդ ժամանակ դոմինանտ դերում հանդես եկող ռուս ժողովրդի աչքին։ Ավագ սերնդի շրջանում մեծ տարածում գտած հումորային այն մանրապատումը, որ ի պատասխան ադրբեջանցիների բողոքի, թե ինչու է Հայաստանում ծովային հարցերով կոմիտե ստեղծվում, չէ՞ որ այստեղ ծով չկա, հայկական կողմը պատասխանում է. «նույն տրամաբանությամբ Ադրբեջանում էլ մշակույթի նախարարությունն է ավելորդ», դրա վառ ապացույցներից մեկն է։ Տարբերությունը խորհրդային տարիների և ներկայիս իրողությունների միջև այն է, որ նախկինում միմյանց դեմ ուղղված նման քարոզչությունը զսպվում էր մի շարք գործոններով և արտահայտվում էր նմանատիպ կամ այսպես կոչված «Հայկական ռադիոյի» հումորներով, իսկ հիմա դա մշակված թշնամական քաղաքականություն է, որն իրականացվում է պետությունների աջակցությամբ։

Արցախյան շարժման սկզբնավորման հենց սկզբից Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի և այլ բնակավայրերի փողոցները «զարդարվեցին» ռուս մեծ բանաստեղծ Ա.Ս. Պուշկինի հանրահայտ «Տազիտ» պոեմից վերցված հռչակավոր *«Ты трус, ты раб, ты армянин»* («Դու վախկոտ ես, դու ճորտ ես, հայ ես դու») տողով։ Այդպես ադրբեջանցիները փորձում էին հայերի բացասական կերպար ստեղծել՝ առանց ուշադրություն դարձնելու այն փաստին, որ նման կերպ նրանք բացահայտում էին իրենց անգրագիտությունը, ոչ ավելին։ Որովհետև «Տազիտ» պոեմի բովանդակությանը ծանոթ ցանկացած ոք գիտի, որ հիշատակված արտահայտությունն ասում է ոչ

թե Պուշկինը, այլ պոեմի հերոս, ազգությամբ չեչեն Գասուբը, որը բարկանում է իր տղայի՝ Տազիտի վրա, քանի որ վերջինս հնարավորություն է ունեցել, բայց չի սպանել անպաշտպան վիրավոր թշնամուն: Այս մարդկային արարքը հայրը դիտարկում է իբրև վախկոտություն, երկչոտություն, հային (այսինքն՝ անհավատին), այլ ոչ թե չեչենին վայել արարք:

Չնայած դրան, փաստն այն է, որ ադրբեջանական քարոզչամեքենան արդեն քանի տասնամյակ շարունակում է տարածել այդ արտահայտությունը՝ դարձնելով այն մատի փաթաթան ոչ միայն իր երիտասարդ սերնդի, այլև ռուսալեզու հանրույթի շրջանում: Նույն կերպ, թուրք-ադրբեջանական, հաճախ նաև վրացական և կովկասյան այլ ժողովուրդների քարոզչությունը փորձում է հայերին նաև այլ էպիտետներ ամրագրել: Օրինակ՝ *торгаши* կամ, շահարկելով հայկական ազգանունների հանրահայտ «յան» վերջավորությունը, *обезЯН*.

Բայց սա դեռ ամենը չէ: Հայերին իրենց բնակության վայրերում վարկաբեկելու համար մեր ժողովրդի դեմ աշխատող ուժերը քարոզչական մի շարք թեզեր են մշակել, որոնք տարիներ շարունակ տարածվում են առավել մեծ հայկական սփյուռք ունեցող երկրներում: Դրանցից առավել մեծ ծավալներ ու տարածում ունեցողը հայկական ահաբեկչության մասին թեզն է, որի զարգացման համար թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան վկայակոչում է «Նեմեսիս» գործողությունը, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) գործողությունները, Հայ Հեղափոխական Դաշնակցության տարատեսակ միջոցառումները, 1999թ. Հոկտեմբերի

27-ի ողբերգական իրադարձությունները և նմանատիպ տասնյակ այլ եղելություններ ու փաստեր: Այդ բոլոր դեպքերը հակահայկական քարոզչություն իրականացնող ուժերի կողմից ներկայացվում են խեղաթյուրված, համատեքստից դուրս և կամայական մեկնաբանություններով:

Ընդ որում, հայկական ահաբեկչության գոյության այսպես կոչված ապացուցողական բազան հարստացնելու փորձերը մեր ժողովրդի հակառակորդներին ստիպել են ծայրահեղությունների գիրկն ընկնել: Այսպես, որոշ ադրբեջանցի քարոզիչներ կարողացել են «հայկական հետք» տեսնել Բեսլանի, Նյու Յորքի 2010թ. սեպտեմբերի 11-ի և այլ հանրահայտ ահաբեկչական գործողությունների հիմքում:

Հայերին իրենց բնակության երկրներում վարկաբեկելու համար մեկ այլ մեթոդ է ազգությամբ հայ գործիչներին այնպիսի բաներ մեղսագրելը, որոնք վատ կընկալվեն այդ երկրներում: Այսպես, վերջին տարիներին հակահայկական քարոզչությունը կենտրոնացած է Գարեգին Նժդեհից ֆաշիստ «ստեղծելու» գործի վրա: Այն փաստը, որ մեծանուն հայ զորավարը, ելնելով Հայաստանը վերահաս վտանգից զերծ պահելու մտավախություններից, որոշակի համագործակցություն է ունեցել կոլաբորացիոնիստական շարժման հետ, պնդվում է, թե նա, իբր, կանգնած է եղել ֆաշիստական գաղափարախոսության ակունքներում:

Հակահայկական նպանատիպ քարոզչական թեզերի տարածումն արտասահմանյան երկրներում վստահապես հաշվարկված է նաև այն հանգամանքի վրա, որ այդ երկրների

բնակիչները, որպես կանոն, քիչ են տեղեկացված ոչ միայն հայազգի գործիչների, այլև ընդհանրապես հայերի մասին։ Նման պարագայում, անկասկած, հեշտ է ընկալումների ցանկալի ֆոն ապահովելը։ Բայց, որպես կանոն, այդպիսի քարոզչությունը կարճատև արդյունքներից զատ որևէ այլ բան չի կարող տալ։ Հիմնականում նաև այն պատճառով, որ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, եվրոպական և այլ երկրներում բնակվող հայերն իրենց աշխատասիրությամբ, գրագիտությամբ և այդ պետությունների օրինակելի քաղաքացի լինելու հանգամանքով կարողացել են նվաճել օտարների հարգանքն ու սերը։

Մեկ երկրում (օրինակ՝ ԱՄՆ-ում) հայերին մեղադրում են հակասեմիտիզմի մեջ, մյուսում (օրինակ՝ Լեհաստանում) հայերին ներկայացնում են որպես Ռուսաստանի հլու կամակատար, երրորդում (օրինակ՝ Իսպանիայում)՝ հանցագործներ և այլն։ Այս բոլորի նպատակը մեկն է՝ թուլացնել տեղի հայությանը, նվազեցնել նրա ազդեցությունն այս կամ այն երկրի քաղաքական որոշումների վրա։ Եվ սա աշխատանք է, որը մեր ժողովրդի հակառակորդներն ու թշնամիները հետևողականորեն են իրականացնում։ Դա հաճախ լուրջ դժվարություններ է առաջացնում մեր հայրենակիցների համար։ Բայց այդպիսին են իրողությունները, որոնք տեսանելի ապագայում վստահորեն չեն փոխվելու։ Հետևաբար, հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչությունը նույնքան հետևողականորեն պետք է հակադարձվի։ Սա աշխատանք է, որից հնարավոր չի լինի խուսափել։ Անգամ եթե փորձենք այդպես վարվել։

2.8. Ամփոփում

Հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչական թեզերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարիների ընթացքում ձևավորված, հղկված և մշակված հակահայկական քարոզչությունը վաղուց արդեն կուռ համակարգի է վերածվել և, հիմա արդեն որպես այդպիսին, շարունակում է զարգանալ ու հարստանալ նոր կեղծ և իրական փաստարկներով: Փաստ է նաև, որ հակահայկական քարոզչությունը հաճախ լուծում է իր առջև դրված խնդիրները՝ դառնալով թե՛ ներհայկական որոշ խնդիրների առաջացման և թե՛ միջազգային հանրության աչքին հայերին վարկաբեկելու պատճառ: Սա կարևոր է տեսնել և ընդունել: Ցավոք, հայ հասարակագիտական միտքը հաճախ չափազանց անլուրջ է համարում մեր դեմ ուղղված քարոզչական թեզերը և հարկ չի համարում հերքել ակնհայտ սուտն ու ապատեղեկատվությունը: Մինչդեռ իրականությունն այն է, որ մի քանի անգամ կրկնվող և անպատասխան թողնված սուտը սկսում է որպես ճշմարտություն ընկալվել, և հայ ժողովուրդն արդեն մի շարք հարցերում դարձել է դրա զոհը:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որին անպայման պետք է ուշադրություն դարձնել, հակահայկական քարոզչություն իրականացնող ուժերի հետևողականությունն է: Սուտն ու կեղծիքը չափազանց շատ են և, անգամ հերքվելու պարագայում, շարունակում են տարածվել կամ այլ մեթոդներով, կամ պարզապես հերքվելուց որոշակի ժամանակ անց: Արձանագրված բազում դեպքեր կան, երբ հայ քաղաքական գոր-

ծիչները, փորձագետներն ու գիտնականները, երկու-երեք անգամ հերքելով քարոզչական միևնույն թեզը, դադարում են այդպես վարվել, մինչդեռ քարոզիչների կողմից այն շարունակում է կրկնվել ևս մի քանի տասնյակ անգամ: Այդպես լուծվում է մեկ այլ խնդիր ևս՝ մեծացվում է տարածվող հակահայկական քարոզչության ծավալը: Եվ սա նույնպես հետևողական և համակարգված ձևով է արվում:

Հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված քարոզչությունն արդի իրականության մեջ քաղաքական գործոն է դարձել: Այն մեծապես ազդում է մեր երկրի և ժողովրդի բնականոն գործունեության և հետագա զարգացման վրա: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հակահայկական քարոզչությունը, որպես կանոն, մեր ժողովրդի դեմ ուղղված թշնամական քաղաքականության և տարատեսակ ծրագրերի բաղկացուցիչ մաս է կազմում: Այսինքն՝ դա ինքնանպատակ իրականացվող գործունեություն չէ, չնայած հաճախ կարող է հենց այդպես էլ թվալ: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ հայկական պետությունները գտնվում են փաստացի պատերազմական իրավիճակում Ադրբեջանի և, մեծ հաշվով, նրան աջակցող Թուրքիայի հետ, ապա պատկերն էլ ավելի ամբողջական կդառնա: Մեր դեմ ուղղված քարոզչական թեզերը սպառնալիք են ազգի քաղաքական, տնտեսական, ֆիզիկական և հոգևոր անվտանգության համար: Եվ այդ փաստը ստիպում է ուշադիր լինել դրանց հանդեպ, մշակել հակազդման մեխանիզմներ և հետևողականորեն պայքարել արտաքին ազդեցության դեմ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

3.1. Կազմակերպչական խնդիրներ

Հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ իրականացվող քարոզչական աշխատանքը հակազդման հստակ մեխանիզմներ մշակելու և գործարկելու անհրաժեշտություն է առաջացրել: Անցած տարիների ընթացքում Հայաստանում և սփյուռքում ձևավորվել ու գործել են մի շարք կառույցներ, գիտական և հետազոտական կենտրոններ, որոնք մասնագիտացել են այդ խնդրում և չափազանց արժեքավոր ներդրում ունեցել հակահայկական քարոզչության չեզոքացման գործում: Բայց այդպիսի աշխատանքի ծավալները, ցավոք, երբեք չեն համապատասխանել նվազագույն այն անհրաժեշտ քանակներին, որոնք մեզ պարտադրում է հակառակ կողմը: Օրինակ, ադրբեջանցիների կողմից տարածվող այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանության» վերաբերյալ հրապարակված հոդվածների ու գրքերի, ինչպես նաև նկարահանված ֆիլմերի քանակն անհամեմատ ավելի մեծ է, քան հակառակ այդ քարոզչության՝ հայկական կողմից ճշմարտությունը բացահայտող համապատասխան նյութն է: Քանակական տարբերությունը բազմապատիկ է, իսկ տպագրությունների ծավալը՝ անհամեմատելի:

Ռուսաստանում, եվրոպական երկրներում և Միացյալ Նահանգներում բնակվող իմ գործընկերները հաճախ են պատմում, որ գրեթե ամեն ամիս նոր հրատարակություններ են նվեր ստանում Ադրբեջանի դեսպանատներից, հրավիրվում տարբեր միջոցառումների և այլն: Շատերին դա անգամ հոգնեցնում է, բայց փաստն այն է, որ քանակ-որակ հարաբերակցության մեջ, որպես կանոն, հաղթող է դուրս գալիս հենց քանակը: Այդ իսկ պատճառով թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան ջանում է ամեն ինչ անել, որպեսզի տեղեկատվական և վերլուծական դաշտը հեղեղվի իրենց դիրքորոշումը ներկայացնող գրքերով ու տեսանյութերով: Ընդ որում, տպագրական որակի համար միջոցներ երբեք չեն խնայվում: Հրապարակվող գրքերը տպագրվում են բարձրորակ թղթի վրա, գունավոր, հաստ կազմով և այլն: Այսինքն՝ ապահովվում է մատուցվող նյութի ներկայացուցչական լինելը:

Պաշտոնական Բաքուն և Անկարան այս ամենը կազմակերպչական ամուր հիմքերի վրա են դրել: Ինչպես տեսանք հետազոտության նախորդ գլուխներում, այնտեղ հստակ մշակվել են քարոզչական այն թեզերը, որոնք անհրաժեշտ են իրենց քաղաքականությանը, ստեղծվել են հնարավորություններ դրանք առավել արդյունավետ տարածելու համար: Հակառակորդի գործիքակազմը, ըստ էության, պարզ է՝ զանգվածային լրատվության միջոցներ, հիմնադրամներ, հրատարակչություններ, միջազգային համագործակցություն, վերլուծական կենտրոններ, փորձագիտական խմբեր և այլն: Նորությունը, թերևս, միայն սփյուռքյան կառույցներ ստեղծե-

լու քաղաքականությունն է: Եթե հայ ժողովրդի պարագայում այդ գործընթացն անցել է բնականոն զարգացման բոլոր փուլերով, ապա Թուրքիան և Ադրբեջանը դա անում են վարչական ռեսուրսների ակտիվ ներգրավմամբ: Այս առումով Հայաստան-սփյուռք համագործակցության բնույթը խիստ տարբերվում է Ադրբեջանի և Թուրքիայի համապատասխան գործունեությունից: Ի տարբերություն մեզ՝ թյուրքական պետությունները իրենց սփյուռքը ձևավորում են բացառապես որպես ազդեցության լծակ այլ երկրների վրա և ռեսուրս սեփական երկրներն ուժեղացնելու համար: Այդ հարաբերություններում գոյություն չունի փոխադարձ շահի և աջակցության այն գաղափարը, որը կա հայերի դեպքում:

Հայկական և թուրք-ադրբեջանական սփյուռքի ձևավորման պատմությունն ու ընթացքն էլ են տարբեր եղել: Եվ դա նույնպես կարևոր ազդեցություն է թողել այն մոտեցումների, առաջնահերթությունների և սկզբունքների վրա, որոնք առկա են արտասահմանում բնակվող հայերի, թուրքերի և ադրբեջանցիների շրջանում: Եթե մեր հայրենակիցները ստիպված են եղել գաղթի ճամփան բռնել՝ խուսափելու համար նույն թուրքերի կողմից իրականացվող ջարդերից ու եղերական քաղաքականությունից, ապա թուրքերի միգրացիոն հոսքերը հաճախ էքսպանսիոնիստական նպատակներ են հետապնդել: Այո, թե՛ մեր և թե՛ նրանց պարագայում գոյություն է ունեցել նաև տնտեսական և սոցիալական բարեկեցության գործոնը, բայց դա համեմատաբար նոր երևույթ է և սփյուռքի կառույցների գործունեության վրա որոշիչ ազդեցություն դեռևս չունի:

Հատկանշական է, որ Ադրբեջանի և Թուրքիայի պետական մարմինները երբեք չեն թաքցրել թյուրքական սփյուռք ձևավորելու իրենց նպատակները և այդ սփյուռքի առջև դրված քաղաքական խնդիրները: Ընդ որում, այդ խնդիրները հաճախ անցնում են այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու բոլոր սահմանները: 2017թ. այդ հանգամանքը լուրջ խնդիր է առաջացրել, օրինակ, Գերմանիայի հետ Թուրքիայի հարաբերություններում: Պաշտոնական Անկարայի կողմից Գերմանիայի թուրքական համայնքն ուղղորդելու, այդ երկրի տարածքում բնակվող թուրք քաղաքացիների շրջանում Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրությունների քարոզարշավ անցկանցելու Ռ.Էրդողանի ցանկության պատճառով Գերմանիայի Դաշնային Հանրապետության իշխանություններն արգելել էին թուրքական հանրահավաքները Գերմանիայում: Այս միջադեպը մեծ աղմուկ էր բարձրացրել համաշխարհային մամուլում: Էրդողանը սկզբում մեղադրեց Գերմանիայի իշխանություններին «ֆաշիստական մեթոդներ» կիրառելու մեջ[38], հետո նաև կոչ արեց այդ երկրում բնակվող իր հայրենակիցներին չքվեարկել կանցլեր Անգելա Մերկելի կուսակցության օգտին[39]:

Ադրբեջանական քաղաքականությունը նման խնդիրներ իր սփյուռքի առջև դեռևս չի դնում: Այս ոլորտում պաշտոնական Բաքվի առաջնահերթություններն առավելապես սահ-

[38] Эрдоган обругал Германию за запрет турецких митингов, 05.03.2017, https://www.bbc.com/russian/news-39175232

[39] Эрдоган нанес удар по Берлину, 21.08.2017, https://www.novayagazeta.ru/articles/2017/08/21/73547

մանափակվում են քարոզչական թեզերի առաջխաղացմամբ՝ հիմնականում ի հակակշիռ հայկական պետությունների և հայերի գործունեության: Բայց Ադրբեջանի պարագայում չափազանց մեծ ուշադրություն է դարձվում կազմակերպչական աշխատանքներին, որոնք համակարգվում են Սփյուռքի հետ աշխատանքների Ադրբեջանի պետական կոմիտեի[40] և Հեյդար Ալիևի անվան հիմնադրամի[41] կողմից: Պետական կառավարում և չափազանց մեծ ֆինանսական ներդրումներ՝ ահա այն երկու կարևոր գործոնները, որոնք նպաստում են ադրբեջանական սփյուռքյան կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Սրա հետ միասին պետք է նշել, որ ադրբեջանական սփյուռքի միջոցառումներն ավելի շատ լուսաբանվում և արձագանք են գտնում ոչ թե այն երկրներում, որտեղ դրանք իրականացվում են, այլ հենց Ադրբեջանում: Դա մեծապես պայմանավորված է երկու հանգամանքով: Նախ, որովհետև ադրբեջանական սփյուռքի կողմից առաջ քաշվող քաղաքական օրակարգն ու հետապնդվող նպատակները հետաքրքիր չեն իրենց բնակության երկրների քաղաքացիներին, և երկրորդ, որովհետև Ադրբեջանի պետական ինստիտուտներն իրենց գործունեության արդյունավետությունը նախ և առաջ փորձում են սեփական քաղաքացիներին ցույց տալ, հետո նոր մեզ՝ հայերիս: Այդ պատճառով քիչ չեն լինում դեպքեր, երբ եվրոպական այս կամ այն քաղաքում իրականացված

[40] http://diaspor.gov.az/
[41] https://heydar-aliyev-foundation.org/

ցույցերը, որոնց մասնակցել է ադրբեջանական համայնքի, օրինակ, 4-5 ներկայացուցիչ, լուսաբանվել են տասնյակ լրատվամիջոցների կողմից: Մինչդեռ այդ ցույցերի իրական հասցեատերերը, ըստ տրամաբանության, պետք է լինեին այնտեղ բնակվող օտարազգիները: Նման ակցիայի օրինակ է 2018թ. փետրվարին Կիևի «Բորիսպոլ» օդանավակայանում տեղի ունեցած միջոցառումը, որի ընթացքում երկու ադրբեջանցի Ակնայի դեպքերի մասին, որոնք իրենք «Խոջալուի ցեղասպանություն» են կոչում, մի քանի բուկլետ են բաժանել ուղևորներին: Ադրբեջանական մամուլը դա ներկայացրել էր որպես աննախադեպ միջոցառում, որը «ցնցել է հայերին»[42]: Իրականում այն մասին, որ իրենք «ցնցվել» են, հայերը հետո իմացան ադրբեջանական լրատվամիջոցներից:

Հայկական սփյուռքի հետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում առավելապես համակարգում է սփյուռքի նախարարությունը: Այս հարցում մեծ է նաև ՀՀ վարչապետի և նախագահի աշխատակազմերի, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության դերակատարումը: Արցախի պարագայում սփյուռքի հետ նման աշխատանքներ են տանում երկրի ղեկավարի աշխատակազմն ու արտաքին գործերի նախարարությունը: Բայց, կախված համատեղ իրականացվող ծրագրերի բնույթից, այդ գործին կարող են ներգրավվել նաև պետական այլ գերատեսչություններ, համահայկական ընկերակցություններ, հիմնադրամներ և այլն:

[42] В киевском аэропорту буклеты о Ходжалы шокировали армян (видео), 26.02.2018, http://baku.ws/94965-v-kievskom-aeroportu-buklety-o-hodzhaly-shokirovali-armyan-video.html

ՀՀ կառավարության 2018թ. գերակա խնդիրները, որոնց կատարման պատասխանատուն ՀՀ սփյուռքի նախարարությունն է, չորսն էին.

1. Հայրենադարձության գործընթացի խթանում
2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության փոխանցմանը և ամրապնդմանն աջակցություն
3. Հայաստան-սփյուռք գործակցության մեջ երիտասարդական կազմակերպությունների դերի ակտիվացում
4. Սփյուռքում հայապահպանության հիմնախնդրի լուծման գործում մշակութային գործոնի ավելացում[43]:

Սրան զուգահեռ իրականացվում են նաև բազում կրթական, հետազոտական և այլ ծրագրեր, որոնք նպաստում են հայրենիք-սփյուռք փոխգործակցության բոլոր հնարավորությունների լիարժեք բացահայտմանն ու իրացմանը:

Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման գործում չափազանց մեծ է Հայ Առաքելական սուրբ եկեղեցու դերը, որը, ըստ էության, սփյուռքի բազում համայնքներում եղել և շարունակում է մնալ որպես հայապահպանության հիմնական օջախ և համայնքի միասնության հիմնական երաշխավոր: Հայության տարբեր հատվածների համատեղ քաղաքական օրակարգ ձևավորելու գործում մեծ է նաև ավանդական

[43] http://www.mindiaspora.am/am/Program_2018

այն կուսակցությունների նշանակությունը, որոնք համահայկական բնույթ ունեն (Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցություն և այլն)։

Իրականում, սակայն, հայրենիք-սփյուռք գործակցության դաշտն այնքան մեծ և բովանդակալից է, որ այն գոնե մեծ մասամբ ներառելու և հնարավորինս արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են կազմակերպչական շատ ավելի մեծ ռեսուրսներ, քան այսօր կան։ Եվ դա այն աշխատանքն է, որը ճիշտ իրականացնելու արդյունքում կարելի է երաշխավորված արդյունքներ ակնկալել։ Ցավոք, լինելով հայկական սփյուռքի տարբեր համայնքներում՝ հեշտ եմ նկատում, թե որքան չիրացված հնարավորություններ կան։ Եվ միշտ չէ, որ դրա պատճառներն օբյեկտիվ բնույթի են։ Այսինքն՝ կա չարված աշխատանք, և այդ հանգամանքը վնասում է թե՛ սփյուռքին, թե՛ հայկական պետություններին։ Դեպքերի նման ընթացքը պետք է շտկվի։ Դա է պահանջում համազգային շահը։

3.2. Հակահայկական քարոզչության գործիքները

Ինչպես արդեն նշվեց, հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ իրականացվող քարոզչության գործիքներն, ըստ էության, այն են, որոնք ընդունված է կիրառել արդի ժամանակներում։ Առաջին հերթին դրանք զանգվածային լրատվության միջոցներն են։ Հակահայկական քարոզչություն իրականացնող ուժերն օգտվում են ինչպես սեփական լրատվամիջոցներ ունենալու հանգամանքից, այնպես էլ միջազգային գործընկերների ծառայությունից։

Զանգվածային լրատվամիջոցներն, ակասկած, կարելի է համարել հայկական պետությունների և սփյուռքի դեմ իրականացվող քարոզչության հիմնական գործիք։ Մամուլում տպագրվող նյութերը հասցեագրված են նման տեղեկությունների բոլոր հնարավոր սպառողներին՝ միջազգային հանրությանը, մասնագիտացված հանրույթներին, հայ ժողովրդին և այլն։ Ընդ որում, հակահայկական քարոզչություն իրականացնելու համար ստեղծվում են նաև հայալեզու լրատվամիջոցներ, որոնք երկակի կարևորություն են ստանում հայկական գործոնի դեմ հանդես եկող ուժերի համար։ Նախ, որովհետև դրանց բովանդակությունը լիովին հասկանալի է իրենց թիրախի՝ հայերի համար, և ապա, որովհետև հակահայկական ուղղվածություն ունեցող այդ լրատվամիջոցներն, օրինակ, Ադրբեջանի քարոզչամեքենան կարողանում է աշխարհին մատուցել որպես արցախաբնակ հայերի հետ լիարժեք հարաբերություններ ունենալու իրենց ցանկություն։ Իբր թե իրենք հոգ են տանում հայերի ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին։

Կարևոր է նաև փաստել, որ ադրբեջանական հայալեզու կայքերը հաճախ ակտիվ գովազդվել են հայկական դաշտում գործող, բայց արտասահմանյան ծագում ունեցող լրատվամիջոցների կողմից։ Օրինակ, 2010թ. մարտի 2-ին «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրությունը մեր քաղաքացիներին տեղեկացրեց, որ Ադրբեջանում գործարկվել է հայալեզու Armenia.az կայքը։ «Արդեն երկրորդ օրն է՝ ադրբեջանցի լրագրող Էլնուր Բահիմովի նախաձեռնությամբ գործ-

ում է Armenia.az ինտերնետային կայքը, որը գրական ու ժամանակակից հայերենով նորություններ է փոխանցում Ադրբեջանի, Ղարաբաղյան հակամարտության ու տարածաշրջանային զարգացումների մասին»,- գրել էր «Ազատությունը» և մանրամասն ներկայացրել այդ կայքի հեղինակի մտորումները քարոզչական այդ ծրագրի վերաբերյալ[44]:

Նույն կերպ Ադրբեջանից եթեր են հեռարձակվում նաև հայալեզու հեռուստա- և ռադիոալիքներ: Դրանց միջոցով հասարակությանը մատուցվող նյութն առավելապես Հայաստանի քաղաքականությունը բացասական լույսի ներքո ներկայացնող քարոզչություն ու պարզ ապատեղեկատվություն է: Բայց մեր տարածաշրջանի մի շարք բնակավայրերում, օրինակ՝ Վրաստանի Քվեմո Քարթլի մարզի հայաբնակ գյուղերում կամ Արցախի մի շարք շրջաններում, այդ հեռուստաալիքը շատ է դիտվում: Նաև այն պատճառով, որ հայկական ալիքներն առանց արբանյակային կապի այդ տեղերում հասանելի չեն:

Միջազգային ասպարեզում զանգվածային լրատվամիջոցները, որպես հակահայկական քարոզչություն իրականացնելու գործիք, կրկին շատ են օգտագործվում: Բայց դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար հայկական պետությունների և սփյուռքի դեմ հանդես եկող ուժերը դիմում են նաև տեղեկատվական երկրորդ կարևոր գործիքի օգնությանը՝ օտար երկրների փորձագետներին, քաղաքական և հասարակական

[44] Ադրբեջանական կայք հայերեն լեզվով, 02.03.2010, https://www.azatutyun.am/a/1972036.html

գործիչներին։ Այս հարցում թուրք-ադրբեջանական դաշինքը բավական առաջադիմել և շոշափելի արդյունքներ է գրանցել։

Հակահայկական քարոզչություն իրականացնող օտար գործիչները տարբեր եղանակներով են ընկնում Թուրքիայի և Ադրբեջանի ազդեցության տակ։ Բայց, որպես կանոն, դրա հիմքում սովորական կաշառքն է։ Հիմք ունենալով այն փաստը, որ թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից կաշառված գործիչները՝ ի թիվս այլ նվերների, նաև հաճախ սև խավիար են ստանում, հայկական կողմը հակառակորդի նմանատիպ գործունեությանը «խավիարային դիվանագիտություն» անունն է տվել։ Բացի այդ, մեզ հաջողվել է բացահայտել «խավիարային դիվանագիտության» մի շարք գործակալների ու Ադրբեջանի կողմից նրանց կաշառելու փաստեր, ինչը բուռն արձագանք գտավ միջազգային քաղաքական հարթակներում։

Հաջորդ գործիքը, որն ակտիվ կիրառվում է հակահայկական քարոզչության մեջ, հրատարակչական, տպագրական գործն է։ Արդեն խոսվեց այն մասին, որ Թուրքիայի և Ադրբեջանի համապատասխան կառույցները յուրաքանչյուր տարի բազում գրքեր, բրոշյուրներ և բուկլետներ են տպագրում և այդ նյութը բաժանում աշխարհի երկրների դիվանագիտական հաստատություններում, ուղեղային կենտրոններում։ Գրքերից բացի՝ լսարանի ուշադրությանն են ներկայացվում նաև զանազան ֆիլմեր և հոլովակներ, որոնք ակտիվորեն տարածվում են նաև համացանցում։

Մեծ ուշադրություն է դարձվում նաև ուղեղային կենտրոններին և այնտեղ իրականացվող ադրբեջանական ու թուր-

քական հետազոտություններին: Ինչպես նշեցի, Ռուսաստանի և Եվրոպայի առաջատար վերլուծական կենտրոններում լինելու և այնտեղ մեր տարածաշրջանի քաղաքական իրողությունների մասին բազում փորձագետների հետ զրուցելու հնարավորություն եմ ունեցել: Ի շարս այլ հարցերի, անձնական փորձառությունս նույնպես համոզեց, որ գրեթե բոլոր այն կենտրոններում, որտեղ կար թուրքական կամ ադրբեջանական ծրագիր, այդ երկրների քաղաքական շահը հատուկ ուշադրությամբ էր հետազոտվում և արժևորվում տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Ընդ որում, դա տեղեկատվական/քարոզչական գործունեության այն բաղկացուցիչն է, որտեղ հայկական կողմը բավական հետ է մնացել մրցակիցներից: Հիմնական պատճառները երկուսն են.

ա) Թուրքիան և Ադրբեջանը տարբեր դրամաշնորհների միջոցով ֆինանսավորում են արտասահմանյան ուղեղային կենտրոններում գործող ադրբեջանական և թուրքական հետազոտությունների ծրագրերը;

բ) Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական զարգացումների առումով Հայաստանը միջազգային փորձագիտական հանրության համար այնքան հետաքրքիր չէ, որքան Թուրքիան ու Ադրբեջանը:

Հայկական պետությունների և հայության դեմ իրականացվող քարոզչական քաղաքականության ևս մեկ կարևոր գործիք է ակտիվությունը տարբեր երկրների հասարակական և երիտասարդական դաշտում: Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունները քիչ ջանքեր չեն ներդնում նման միջավայրե-

րում իրենց երկիրը հանրահռչակելու, իսկ Հայաստանը վարկաբեկելու համար: Դա առավել ևս արդյունավետ է, որովհետև, նախ՝ երիտասարդների հետ աշխատանքն ապագայի ներդրում է, և երկրորդ՝ այն թույլ է տալիս հասարակական ավելի լայն շերտեր ընդգրկել որպես քարոզչության թիրախ:

Հակահայկական քարոզչության բոլոր այս գործիքների համադրումը, դրանց արդիականացումն ու մշտական կիրառումը թույլ են տալիս մեր հակառակորդներին առավել արդյունավետ կազմակերպել իրենց գործունեությունը: Այդ փաստն, ինքնին, հայ հանրության համար դառնում է լուրջ խնդիրների պառճառ: Տարիներ շարունակ հայկական պետություններն ու սփյուռքը կարողացել են դիմակայել այս բոլոր գործոններին, բայց այդ աշխատանքը մշտական կատարելագործում և զարգացում է պահանջում: Հաջորդ ենթագլխում մենք կդիտարկենք այն բոլոր հնարավորությունները, որոնք թույլ են տալիս հայ ժողովրդին առավել կազմակերպված և արդյունավետ լինել տեղեկատվական/քարոզչական դաշտում:

3.3. Հակազդման միջոցներ

Ցանկացած քարոզչության, մանիպուլյացիաների, տեղեկատվական հոսքերի և նմանատիպ այլ բաների ազդեցության տակ չընկնելու ամենավստահելի միջոցը գրագիտությունն է: Որևէ ժողովուրդ, հասարակություն կամ անհատ չի կարող խուսափել քարոզչության անցանկալի հետևանքներից, եթե չունի համապատասխան պատրաստվածություն և գիտելիք իր պատմության, անցյալի, շրջապատի, համընդհանուր իղձերի,

ցանկությունների ու քաղաքական նպատակների մասին։ Սրանք գիտելիքների այն նվազագույնն են, որն անհրաժեշտ է ապահովել տեղեկատվական ժամանակակից սպառնալիքներին դիմադրել կարողացող հասարակության համար։

Շատերը կարծում են, թե պետությանն ու ժողովրդին ուղղված քարոզչական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար բավական է քաղաքացիներին մեդիա-գրագիտության որոշ դասընթացներ ու հակառակորդի մասին հիմնական գիտելիքներ տալ։ Իրականությունը, սակայն, այն է, որ առանց հիմնավոր գիտելիքների, առանց համակարգված կրթական պրոցեսի՝ հասարակությունը չի կարող գրագիտության այն աստիճանին հասնել, որը բավարար է տեղեկատվական/քարոզչական հոսքերին դիմագրավելու համար։

Մյուս կողմից՝ հասկանալի է, որ ամբողջ հասարակությունը չի կարող տեղեկատվական դաշտի մարտիկների վերածվել։ Այդ գործառույթը պետք է իրականացնեն առանձին անհատներ, որոնք մասնագիտացված կլինեն առաջադրված խնդիրների լուծման հարցում։ Եվ երբ խոսում ենք մեդիա-գրագիտության դասերի կամ թշնամու լեզուն սովորելու անհրաժեշտության մասին, ապա այդ բոլորը պետք է վերաբերվեն հենց այդ մարդկանց։ Այս տարանջատումը կարևոր է և անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի ստեղծել մասնագիտացված համայնք։ Վերջինս պետք է հենվի կրթված հասարակության վրա։ Բայց նրա առաքելությունն այդ նույն հասարակության համար արտաքին ազդեցություններից պաշտպանող պատնեշի վերածվելն է, հաղթել տեղեկատվական

պատերազմներում այլ կերպ հնարավոր չէ: Հասարակությունը, որը քարոզչության հիմնական թիրախն է, պետք է պաշտպանված լինի արտաքին ազդեցություններից:

Հայաստանում նման պատնեշներ ունենալու անհրաժեշտությունը վաղուց են հասկացել: Բայց, հանուն արդարության, պետք է ասել, որ այն ձևավորելու աշխատանքները բավական ուշ են սկսվել: Տեղեկատվական անվտանգության մասնագետներ մեր իրականության մեջ սկսեցին հայտնվել միայն այն ժամանակ, երբ համացանցը հասանելի դարձավ հասարակության լայն խավերին: 2000-ականների սկզբներին համացանցից օգտվող Հայաստանի քաղաքացիների մեծամասնությունը դեռևս տեղեկատվություն էր ստանում ադրբեջանական Day.az կայքից: Եվ չնայած ներկայում հայկական էլեկտրոնային լրատվական դաշտը նկատելի զարգացում է ապրել և մեր հանրությունը առավելապես հայկական արտադրության լուրեր և հոդվածներ է կարդում, այնուամենայնիվ, ադրբեջանական ազդեցությունն այդ դաշտում դեռևս չեզոքացված չէ:

Պատճառները մի քանիսն են: Նախ՝ հասանելիությունը: Ադրբեջանական էլեկտրոնային մամուլը հարուստ է ռուսալեզու տեղեկատվական հոսքերով, ինչը հասկանալի է դարձնում այն հայ լսարանին: Բացի այդ, ինչպես տեսանք, ադրբեջանցիները թողարկում են նաև հայալեզու կայքեր, ինչը նաև մոլորեցնում է հայ ընթերցողին: Երկրորդ պատճառը պարզ հետաքրքրասիրությունն է: Տեսնել, թե ինչ է կատարվում քո հանդեպ թշնամաբար տրամադրված երկրում: Հասկանալ, թե

ինչպես են նրանք ընկալում քո ձեռքբերումներն ու կորուստները, ինչ դիրքորոշում ունեն այս կամ այն հարցում և այլն: Եվ երրորդ հիմնական պատճառը հասարակությունների բաց և փակ լինելու հանգամանքն է: Այսպես, հայ հանրությունը բավական բաց է, և դա իր ազդեցությունն է թողնում մեր լրատվամիջոցների ստեղծած տեղեկատվական հոսքերի վրա: Դրանք հիմնականում միտված են ներքաղաքական զարգացումները լուսաբանելուն: Մինչդեռ փակ հասարակություններում, որպիսիք են Ադրբեջանը և Թուրքիան, տեղեկատվական պոտենցիալի զգալի մասը միտված է արտաքին զարգացումներին: Չկարողանալով քննադատել սեփական իշխանություններին՝ նրանք կենտրոնանում են հակառակորդի վրա և ամբողջ օրը գրում նրա մասին: Բնական է, որ այդ պարագայում էլ հակառակորդը սկսում է կարդալ իրեն հասցեագրված քննադատությունները, արձագանքել դրանց, իսկ հաճախ էլ՝ հավատալ: Ահա այդպես են ադրբեջանական կայքերը մշտական լսարան ունենում հայ հանրության մեջ:

Հայաստանում գործող հարյուրավոր լրատվական կայքերից այսօր ընդամենը մի քանիսն են կենտրոնացած հակառակորդի քարոզչությանը դիմագրավելու գործի վրա: Բառացիորեն 4-5 կայք, որոնց հնարավորություններն ու ռեսուրսները խիստ սահմանափակ են: Այս ոլորտում երկրորդ կարևոր խնդիրը, որ շտապ պետք է լուծվի, սփյուռքի և հայրենիքի լրատվամիջոցների միջև համագործակցության կամուրջների ստեղծումն է: Ճիշտ է, ՀՀ սփյուռքի նախարարությունը նման համաժողովներ կազմակերպում է, բայց դա ակնհայ-

տորեն բավարար չէ: Համացանցում տեղեկատվություն ստացող հայ միջին վիճակագրական ընթերցողն այսօր քանի՞ սփյուռքյան լրատվամիջոցի ծառայություններից է օգտվում: Հասկանալի է, որ այս կամ այն երկրում բնակվող մեր հայրենակիցների ներհամայնքային խնդիրները կարող են անհետաքրքիր լինել Հայաստանի և Արցախի բնակիչների համար: Բայց համահայկական նշանակություն ունեցող հարցերը չեն կարող այդքան անտեսված մնալ:

Հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված տեղեկատվական հոսքերի և քարոզչության հակազդման համար հաջորդ անհրաժեշտ խնդիրը հայրենիքի և սփյուռքի գիտական պոտենցիալի մեկտեղումն է: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամն այս հարցի առնչությամբ բազում հետազոտություններ է արել, որոնց մի մասն իրականացվել է ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով: Այսինքն՝ խնդիրը մատնանշված է, դրա հաղթահարման հնարավոր ուղիները՝ նշմարված: Բայց դրան հաջորդող հետագա զարգացումները դեռևս սպասել են տալիս:

Կարևոր է նաև միջազգային ուղեղային կենտրոններում հայկական ներկայության ապահովումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհի տարբեր գիտական ինստիտուտներում, հետազոտական կենտրոններում, առաջատար լրատվամիջոցների խմբագրություններում բազում հայեր են աշխատում: Բայց միշտ չէ, որ նրանք հանդիսանում են հայկական ռեսուրսի ներկայացուցիչ այդ կենտրոններում: Որպես կանոն, նրանք հաջողությունների հասած առանձին

անհատներ են, որոնք ընդհանրապես չեն միջամտում համահայկական նշանակություն ունեցող թեմաների զարգացմանը:

Գրքի երկրորդ գլխում մենք խոսել ենք նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին նախորդած Համահայկական հռչակագրի մասին, որի հիմնական դրույթներն ուղենշում են քաղաքական, հոգևոր և ազգային այն ծրագրերը, որոնք ընդհանրական են աշխարհի տարբեր հատվածներում ապրող մեր հայրենակիցների համար: Սա չափազանց կարևոր իրողություն է, որը լավ հնարավորություններ է ստեղծում համատեղ օրակարգ մշակելու և այն իրագործելու համար: Միասնական այդպիսի տեսլականի ի հայտ գալը կարող է նպաստել բոլոր տեսակի ջանքերի էլ ավելի կենտրոնացմանն ու իրական արդյունքներ ունենալուն: Սա հնարավորություն է, որը նոր է ստեղծվել մեր ժողովրդի համար և, որպես այդպիսին, դեռևս չի բացահայտել իր կարողությունների ամբողջ հեռանկարը:

Միասնական նպատակներ, ծրագրեր և ռազմավարություն ունենալու գաղափարն ինքնին արդեն համախմբում է ցանկացած հանրություն՝ նրա համար պարզ դարձնելով իր առաջնահերթությունները, ռիսկերն ու հնարավորությունները: Դրա համար այդ գործն անհրաժեշտ է կատարել: Այն փաստը, որ հայերի բացարձակ մեծամասնությունը միակամ է հզոր և անկախ հայրենիք տեսնելու ցանկության մեջ, չպետք է մեզ հանգստացնի: Որովհետև այդ ամենը դեռևս ցանկությունների մակարդակում է: Մինչդեռ մեզ անհրաժեշտ են մշակված և համակարգված ծրագրեր:

3.4. Ամփոփում

Վերոգրյալից հետևում է, որ հայկական երկու պետություններն ու աշխարհասփյուռ հայությունն իր դեմ ուղղված քարոզչական թեզերի հակազդման մեծ ռեսուրս և հնարավորություններ ունի: Խնդիրն առաջնահերթությունների ամրագրումն ու աշխատանքի ճիշտ կազմակերպումն է: Հասկանալի է, որ իր մեծության և առավելապես աշխարհագրական մեծ սփռվածություն ունենալու պատճառով համահայկական օրակարգի և հատկապես միասնական աշխատանքի կազմակերպումը չափազանց բարդ գործ է: Դրան խոչընդոտում է նաև ներհայկական տարաձայնությունների հանգամանքը, որը լուրջ խնդիր է մեր իրողության մեջ: Ընդ որում, հակասություններ կան թե՛ հոգևոր, թե՛ մշակութային և թե՛ հատկապես քաղաքական ոլորտներում: Իբրև ուժեղ առաջնորդի տեսակ, առանձին վերցված հայը հաճախ չի ուզում ճանաչել իր իսկ հանրույթի այլ ներկայացուցչի առաջնորդական ձիրքը: Դրա համար շատ երկրներում մենք ունենք պառակտված համայնքներ, վեճեր, հին և նոր սփյուռքահայերի անհարթ հարաբերություններ և այլն:

Բայց այս ամենով հանդերձ, մեր ժողովուրդը նաև տաղանդավոր է, ինչի շնորհիվ կարողացել է զգալի հաջողությունների հասնել իրեն հյուրընկալած երկրներում՝ դրանով իսկ ազդեցության մեծ լծակներ ձեռք բերել նույնիսկ համաշխարհային քաղաքականության մասշտաբով: Եվ դա այն հարստությունն է, որից պետք է անպայման օգտվել՝ մեր առջև դրված բոլոր, այդ թվում նաև տեղեկատվական և քարոզչական խնդիրները լուծելու համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Լրագրողները հաճախ են հարցնում, թե ինչու է Ի.Ալիևի վարչակազմը հետևողականորեն իրավիճակ սրում հայ-ադրբեջանական սահմանին: Ամեն անգամ, երբ ադրբեջանական կողմն ակտիվացնում է գործողություններն առաջնագծում, հայկական մամուլը սկսում է դրա պատճառների փնտրտուքը՝ զուգահեռաբար փորձելով հասկանալ, թե էլ ինչ կարելի է սպասել Ադրբեջանի իշխանություններից: Հայկական երկու պետությունների անվտանգության համար կարևոր նշանակություն ունեցող այսպիսի հարցերը չպետք է օդից կախված մնան: Դրանց պետք է տալ ուղիղ պատասխան՝ չթաքցնելով մարդկանցից այն իրողությունը, որ պատերազմը դեռ չի ավարտվել և ամեն ինչ պայմանավորված է հայ-ադրբեջանական, իսկ ավելի ճիշտ՝ հայ-թուրքական մինչ օրս շարունակվող թշնամությամբ: Դա է Ի.Ալիևի, Ռ.Էրդողանի, նրանց նախորդների, իսկ ապագայում՝ նաև հաջորդների հակահայկական բոլոր որոշումների հիմնական պատճառը: Այս հարցը պիտի հստակ լինի յուրաքանչյուրիս համար, որպեսզի այսուհետ չշփոթենք նրանց գործողությունների հիմնական պատճառն այն առիթների հետ, որոնք պարբերաբար ստիպում են ադրբեջանական կողմին իրավիճակ սրել սահմանին:

Եթե պատճառը մեկն է՝ թշնամությունը, ապա առիթները շատ են։ Որպես նման առիթ վերջին տարիներին հանդես են եկել մե՛րթ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հանդիպումները, մե՛րթ տարածաշրջան խոշոր երկրների ղեկավարների այցերը, մե՛րթ կարևոր նշանակություն ունեցող միջոցառումները և այլն։ Ի.Ալիևի վարչակազմն այս բոլոր առիթներն օգտագործել է սահմանին իրավիճակ սրելու, բանակցություններից խուսափելու և այդ կերպ քաղաքական իրավիճակ փոխելու համար։ Դատելով անցած երկու տարիների զարգացումներից՝ Ադրբեջանի նախագահը վաղուց է անցել ղարաբաղյան հակամարտության կարգավորման երկարաժամկետ մարտավարության։

Նույնը, ի դեպ, արել էր նաև Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի վարչակազմը։ Պատճառը պարզ է. պաշտոնական Բաքուն հասկացել է, որ ո՛չ բանակցությունների, ո՛չ էլ որևէ այլ ճանապարհով չի կարող հասնել այնպիսի արդյունքների, որոնք կբավարարեն Ադրբեջանի հասարակության՝ իր իսկ ձևավորած սպասումները։ Նույն կերպ և Երևանը, տեսնելով հակամարտության իրական լուծման անհնարությունը, ձեռնամուխ էր եղել այնպիսի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, որոնք հնարավորություն կտային պատմական երկարաժամկետ հեռանկարում չեզոքացնել Ադրբեջանից բխող հնարավոր ռիսկերը։ Այդպիսի ծրագրերից է, օրինակ, Հայաստանում չորս միլիոն բնակչություն ունենալու գաղափարը կամ Ազգ-բանակ հայեցակարգը։

Երկարաժամկետ հակամարտության մարտավարությանն անցնելու գաղափարը որոշակի խնդիրներ է առաջացրել Ադրբեջանի իշխանությունների համար, քանի որ Ի.Ալիևի մինչ այդ տված խոստումներն ու զրկանքները, որոնց ենթարկվել է Ադրբեջանի բնակչությունը «ղարաբաղյան հակամարտության պատճառով», հարցի շուտափույթ լուծման սպասելիքներ են առաջացրել այդ երկրում: Ուստի, Ադրբեջանի իշխանությունները որոշել են իրական ձեռքբերումների փոխարեն տեղեկատվական/քարոզչական հաղթանակներ մատուցելով՝ ինչ-որ կերպ, այնուամենայնիվ, բավարարել հասարակության այդ սպասումները: Արդյունքում՝ պաշտոնական Բաքուն նոր տեմպ է հաղորդել նախկինում առանց այն էլ ինտենսիվ իրականացվող հակահայկական քարոզչությանը:

Նույնը վերաբերում է նաև Թուրքիային, որի տարածաշրջանային հավակնությունները շատ ավելի մեծ են, քան պարզապես Արցախն Ադրբեջանի կազմում տեսնելու ցանկությունը: Վերջին տասնամյակի տնտեսական և քաղաքական զարգացումները Թուրքիայի աշխարհաքաղաքական նկրտումների համար պարարտ հող են ստեղծել: Այդ պետությունը զգալիորեն արդիականացվել է և մեծացրել հարևան տարածաշրջաններում ավելի ակտիվ դերակատարում ունենալու իր կարողությունները: Աշխարհագրական այդ ծրագրերի իրականացման հաջորդ փուլին անցնելու համար պաշտոնական Անկարան ներկայում փորձում է ձերբազատվել պատմական բեռից, այդ թվում նաև Հայկական հարցից, որը

լուրջ արգելքներ է առաջացնում Թուրքիայի արտաքին քաղաքականության համար։

Ելնելով այս իրողությունից և այն հանգամանքից, որ այս պահին Թուրքիան ներգրավված է մեկ այլ տարածաշրջանի՝ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական մրցակցության մեջ, պաշտոնական Անկարան որոշել է հայկական պետություններին և սփյուռքին վերաբերող բոլոր հարցերը մեկ ընդհանրական փաթեթով դիտարկել և հայկական գործոնի դեմ իրականացվող քարոզչական աշխատանքի զգալի ծավալը «գործուղել» Ադրբեջան։ Որպես «ավագ եղբայր» Թուրքիան իրեն է վերապահել Ադրբեջանի քաղաքականության ուղղորդման և վերահսկման գործառույթը՝ ընթացքում, իհարկե, հնարավոր բոլոր միջոցներով աջակցելով «փոքր եղբորը»։

Թուրք-ադրբեջանական այս դաշինքն այսօր հանդիսանում է հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ իրականացվող քարոզչության հիմնական նախաձեռնողն ու կազմակերպիչը։ Նպատակը հայ ժողովրդի պաշտպանական մեխանիզմների թուլացումն ու աշխարհում նրա վարկաբեկումն է։ Ընդ որում, թյուրքական երկու պետությունների ղեկավարները չեն էլ թաքցնում այն փաստը, որ իրենց թշնամի են համարում ողջ հայ ժողովրդին։

Խնդիրն էլ ավելի բազմաբովանդակ է դառնում, եթե հաշվի առնենք, որ Հայաստանն ու հայ ժողովուրդն իրենց թիրախում ունեն ոչ միայն Թուրքիան և Ադրբեջանը, այլև մեր տարածաշրջանում քաղաքական ու տնտեսական շահ հետապնդող բազում այլ երկրներ, միջազգային կազմակերպու-

թյուններ, կրոնական ուղղվածության կառույցներ և այլն։ Եվ ամենևին էլ պարտադիր չէ, որպեսզի այդ բոլոր կողմերն ընդգծված հակահայկական քաղաքականություն ունենան։ Հաճախ նրանց այդպիսի վարքագիծը թելադրված է ընդամենը մեկ կամ երկու հարցերում Հայաստանի հետ տարաձայնություններ ունենալու փաստով։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացված այս աշխատասիրության մեջ մենք փորձել ենք բացահայտել հայկական երկու պետությունների և սփյուռքի դեմ ուղղված հիմնական քարոզչական թեզերի ծագումը, զարգացումը, տարածման մեթոդներն ու աշխարհագրությունը, հասկանալ դրան հակազդելու հնարավորությունները։ Խնդրի ուսումնասիրումը թույլ է տալիս պնդել, որ Հայաստանի Հանրապետությունը, Արցախն ու աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իրենց դեմ ուղղված այդ քարոզչության դեմ պայքարելու բավական մեծ ռեսուրս ունեն։ Մի դեպքում դա պատմական ճշմարտությունն է, որը փորձում են խեղել մեր հակառակորդները, երկրորդում՝ մեզ մատուցվող գաղափարների ու արժեհամակարգերի անհամատեղելիությունը մեր դավանած ավանդական արժեքներին, երրորդում՝ հակահայկական քարոզչությանը հակազդելու տարիների ընթացքում մշակված մեխանիզմները և այլն։

Դրանով հանդերձ, գոյություն ունեն մի շարք բացթողումներ ու թերացումներ, որոնք արտաքին քարոզչության համար խոցելի են դարձնում հայկական պետություններն ու սփյուռքը։ Դրանք հիմնականում վերաբերում են այդպիսի

քարոզչությանը հակազդելու և մեր հանրության տեղեկատվական անվտանգությունն ապահովելու գործի կազմակերպչական կողմին: Այստեղ անելիքներն իսկապես շատ են:

Խնդիրը հայկական հանրույթի տեղեկատվական համակարգի տարբեր օղակների թույլ համագործակցության կամ նման համագործակցության ընդհանրապես բացակայության մեջ է: Օրինակ, նման կարևոր խնդիր է այն իրողությունը, որ հայկական ակադեմիական գիտելիքը հաճախ մնում է Գիտությունների Ազգային ակադեմիայի պատերի ներսում և գրեթե չի օգտագործվում պետական մարմինների կողմից հակահայկական քարոզչությանը հակազդելու ընթացքում: Կամ մեկ այլ խնդիր, որը վերաբերում է հայրենիքի և սփյուռքի տարբեր կազմակերպություններին և հատկապես լրատվամիջոցներին: Փորձը ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն չեն համագործակցում միմյանց հետ, այլև հաճախ նույնիսկ չեն ճանաչում միմյանց: Հայաստանի լրագրողների շրջանում իմ կողմից արված փոքրիկ հարցումը ցույց է տվել, որ մեր լրատվամիջոցների թղթակիցներն ավելի շատ ադրբեջանական լրատվամիջոցների անուններ են կարողանում թվարկել, քան սփյուռքում ստեղծված հայկականների:

Բայց այս ամենը տեխնիկական խնդիրներ են, որոնց հաղթահարումը, կարծում ենք, հնարավոր է և շատ ռեսուրսներ չի պահանջում: Կարևորը նպատակաուղղված աշխատանքն է, որի կարիքը կա, իսկ դաշտը չափազանց մեծ է:

РЕЗЮМЕ

Журналисты часто задаются вопросом, почему администрация И.Алиева последовательно обостряет ситуацию на армяно-азербайджанской границе? Каждый раз, когда азербайджанская сторона активизирует действия на передовой, армянская пресса начинает искать причины этого, параллельно пытаясь понять, что еще можно ожидать от властей Азербайджана. Столь значимые для безопасности двух армянских государств вопросы не должны висеть в воздухе. Они требуют прямого ответа, не скрывающего от людей того факта, что война еще не окончена и все обусловлено продолжающейся до сих пор армяно-азербайджанской, а вернее – армяно-турецкой враждой. В этом и состоит основная причина всех антиармянских решений И.Алиева, Р.Эрдогана, их предшественников, а в будущем – и преемников. Это должно быть ясно каждому из нас, чтобы в дальнейшем мы не путали основную причину их действий с теми поводами, которые периодически вынуждают азербайджанскую сторону обострять ситуацию на границе.

Но если причина только во вражде, то поводов много. В качестве таковых в последние годы служили то встречи глав Армении и Азербайджана, то визиты руководителей крупных стран региона, то важные мероприятия и пр. Администрация И.Алиева использовала все эти поводы для обострения ситуа-

ции на границе, избегания переговоров и обусловленного ими изменения политической ситуации. Судя по событиям прошедших двух лет, президент Азербайджана давно перешел к тактике долгосрочного урегулирования Карабахского конфликта.

То же самое, кстати, делала и администрация третьего президента Армении Сержа Саргсяна. Причина проста: официальный Баку понял, что ни переговоры, ни какой-либо другой путь не приведут его к таким результатам, которые удовлетворят сформированные им же ожидания азербайджанского общества. Точно так же и Ереван, осознавая невозможность реального разрешения конфликта, попытался разработать и реализовать проекты, которые давали бы возможность в долгосрочной исторической перспективе нейтрализовать возможные риски, исходящие от Азербайджана. Подобным проектом является, например, идея о доведении населения РА до четырехмиллионного уровня или концепция «народ-армия».

Идея о переходе к тактике долгосрочного конфликта вызвала определенные проблемы для азербайджанских властей, так как данные ранее обещания И.Алиева и все те лишения, которые терпело население Азербайджана «из-за Карабахского конфликта», сформировали в стране ожидание скорейшего разрешения вопроса. Поэтому власти Азербайджана решили демонстрировать информационные/пропагандистские победы вместо реальных достижений и тем самым хоть как-то удовлетворять ожидания общества. В результате официальный Баку увеличил напор и без того интенсивной антиармянской пропаганды.

То же самое касается и Турции, региональные претензии которой гораздо больше одного лишь желания видеть Арцах в составе Азербайджана. Экономические и политические процессы последнего десятилетия создали благоприятную почву для геополитических амбиций Турции. Это государство в значительной степени модернизировалось и улучшило свои способности играть более активную роль в соседних регионах. Для перехода на следующий уровень реализации этих географических проектов официальная Анкара в настоящее время пытается сбросить со своих плеч историческую ношу, в том числе и Армянский вопрос, который создает серьезные препятствия для внешней политики Турции.

Исходя из этого факта и того обстоятельства, что на данный момент Турция вовлечена в геополитическое соперничество в другом регионе, а именно – на Ближнем Востоке, официальная Анкара решила рассматривать все вопросы, касающиеся армянских государств и диаспоры, в едином пакете и «делегировать» Азербайджану значительную часть пропагандисткой деятельности против армянского фактора. Как «старший брат», Турция взяла на себя функцию направления и контролирования политики Азербайджана, при этом, разумеется, поддерживая своего «младшего брата» всеми возможными способами.

Этот турецко-азербайджанский тандем на сегодняшний день является основным инициатором и организатором пропаганды против двух армянских государств и армянской диаспо-

ры. Его цель состоит в ослаблении защитных механизмов армянского народа и уменьшении его авторитета в мире. При этом главы двух тюркских государств даже не скрывают того факта, что считают своим врагом весь армянский народ.

Проблема становится еще более многоплановой, если учесть, что Армения и армянский народ под прицелом не только Турции и Азербайджана, но и многих других стран, международных организаций, религиозных институтов и других объединений, имеющих политические и экономические интересы в нашем регионе. И совершенно необязательно, чтобы у всех этих сторон была подчеркнутая антиармянская политика. Обычно их подобное поведение продиктовано разногласиями с Арменией всего лишь в одном или двух вопросах.

В представленной вниманию читателя работе мы попытались выяснить происхождение, развитие, методы распространения и географию основных пропагандистских тезисов, направленных против двух армянских государств и армянской диаспоры, понять возможности противостояния им. Исследование задачи позволяет утверждать, что Республика Армения, Арцах и армянский народ во всем мире имеют достаточно ресурсов для борьбы с этой пропагандой. В одном случае это историческая истина, которую пытаются исковеркать наши противники, в другом – несовместимость преподносимых нам идей и систем ценностей с исповедуемыми нами традиционными ценностями и идеями, в третьем – механизмы, разработанные за годы противодействия антиармянской пропаганде, и так далее.

Вместе с тем, имеет место также ряд промахов и упущений, из-за которых армянские государства и диаспора становятся уязвимыми для внешней пропаганды. Они в основном касаются организационной стороны противодействия подобной пропаганде и обеспечения информационной безопасности нашего общества. Здесь действительно предстоит еще много работы.

Проблема состоит в слабом сотрудничестве разных звеньев информационной системы армянского общества или в полном отсутствии подобного сотрудничества. Например, одной из таких важных проблем является факт, что армянская академическая наука зачастую замыкается в стенах Национальной Академии наук и почти не используется государственными органами в процессе противодействия антиармянской пропаганде. Есть еще одна проблема, касающаяся различных организаций на родине и в диаспоре, в особенности СМИ: опыт показывает, что они не только не сотрудничают, но и очень часто даже не знают друг о друге. Небольшой опрос, проведенный мной среди журналистов РА, показал, что корреспонденты наших СМИ могут перечислить больше азербайджанских, чем армянских СМИ диаспоры.

Но все это лишь технические проблемы, урегулирование которых, на наш взгляд, не требует особых ресурсов. Важнее всего необходимая в этой сфере целенаправленная работа, при этом сама сфера чрезвычайно обширна.

SUMMARY

Reporters often ask why the administration of I. Aliyev consistently escalates the situation at the Armenian-Azerbaijani border. Every time Azerbaijan intensifies hostile activities at the frontline, the Armenian mass media starts searching the reason, in parallel trying to understand what can be expected from the Azerbaijani government. Such questions have a high importance for the security of the two Armenian states and should not remain unanswered. They must be answered directly, without concealing from people the reality that the war is not over and everything boils down to the animosity between Armenia and Azerbaijan, or actually, between Armenia and Turkey that continues to date. This is the main reason behind the anti-Armenian decisions made by I. Aliyev, R. Erdogan, their predecessors, and in future also their successors. This issue needs to be clear for every one of us, so that we do not confuse the underlying rationale for their actions with the pretexts periodically used by Azerbaijan to escalate the situation at the border.

While there is only one rationale, the animosity, the pretexts are numerous. Such pretexts included the meetings between the leaders of Armenia and Azerbaijan, visits of superpower leaders to the region, important events in either of the countries, etc.

All these pretexts were used by Aliyev's administration to intensify the conflict, avoid negotiations and change the political situation in these manners. Judging by the developments in the recent two years, the president of Azerbaijan had launched the tactics of long-term confrontation already some time ago.

Parenthetically, the same could be said about the administration of the third president of Armenia S. Sargsyan. The reason is clear: official Baku has understood that through negotiations or otherwise there is no way to achieve the results that would meet the expectations in the Azerbaijani society that incidentally, were shaped by the government itself. Similarly, seeing no realistic way to a settlement of the conflict, Yerevan has launched programs and projects that may allow neutralizing the potential threats posed by Azerbaijan in the long term. These projects include, for example, the idea to increase the population of Armenia to 4 million or the Nation-Army concept.

The idea to transition to a long-term conflict tactics has created problems for the Azerbaijani leadership; because the earlier promises made by I. Aliyev and the sufferings that Azerbaijani population had to go through "because of the Karabakh conflict" had generated expectations in the country. Thus the Azerbaijani government decided to present information/propaganda victories instead of real achievements, in order to meet the society's expectations. Consequently, the official Baku has thrusted a new momentum to the already intense anti-Armenian propaganda.

The same goes for Turkey, whose regional ambitions are much larger than just the desire to see Artsakh as a part of Azerbaijan. The economic and political developments of the past decade have prepared fertile grounds for the geopolitical ambitions of Turkey. This country has modernized quite significantly and increased its capacities to play a more active role in the neighboring regions. To start the next phase of these geopolitical programs, the official Ankara currently attempts to get rid of the historical burden, including the Armenian Question, which creates serious impediments for the foreign policy of Turkey.

With this reality in mind and due to the fact that Turkey is involved in a fierce competition in another region, the Middle East, the official Ankara has decided to consider all the issues related to the two Armenian states and their Diaspora in a single package and "delegate" the propaganda work against the Armenian factor to Azerbaijan. As an "elder brother", Turkey retains the function of Azerbaijani policies direction and control, of course in the meanwhile supporting the "younger brother" by all possible means.

The Turkish-Azerbaijani alliance is currently the chief initiator and organizer of the propaganda against the two Armenian states and the Diaspora. They pursue an objective to weaken the protective mechanisms of the Armenian nation and discredit it in the world. The leaders of the two Turkic nations do not even care to conceal that they deem all Armenian people around the world as their enemies.

The problem turns out even more comprehensive when considering that Armenia and Armenian people are targeted not only by Turkey and Azerbaijan, but also other countries that pursue political and economic goals in the region, international organizations, various religious structures, and so on. They do not necessarily have any pronounced anti-Armenian policies. Quite often their behavior stems from simply having opposing views with Armenia on one or another issue.

Presenting this book to the readers' attention, we attempt to uncover the origins, development, propagation methods and geography of the main propaganda theses used against the two Armenian states and Diaspora, as well as understand the potential to counter them. Having studied the problem allows us to contend that the Republic of Armenia, Artsakh and Armenian Diaspora have significant resources to struggle against this propaganda. First, it is the historical truth that our adversaries try to distort; second, it is the incompatibility of the ideas and value systems introduced to us with the traditional values we believe in; and third, the mechanisms developed over the years to counter the anti-Armenian propaganda.

Nonetheless, there a number of shortcomings and flaws which make the Armenian states and diaspora vulnerable to the external propaganda. These are mainly related to the organizational matters of the information security of our societies. Indeed, there is much room for improvement in this area.

One of the problems is the insufficient or complete lack of co-operation between various elements of the Armenian community's information system. For example, the Armenian academic knowledge often remains within the walls of the National Academy of Sciences and is almost never used by the government bodies to refute anti-Armenian propaganda. Another problem is related to the various organizations, and especially, mass media of both homeland and diaspora. Quite often they not only have no cooperation, but even do not know each other. A small survey conducted among the Armenian media reporters demonstrated that they can list more names of Azerbaijani media outlets than Armenian Diaspora ones.

However, these are technical problems that probably could be solved using little resources. The much needed targeted work is more important and has a wide arena to expand.

Հրանտ Մելիք-Շահնազարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Գիտական խմբագիր՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ պայմ. 9 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 250: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում: